





ԶՄԻԱԾԻՆ





Ի Ը
ՏԱՐԻ





ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

ԱԵՅԿԻԿԵԻՐ

1971



ԼՈՒՅՍ ՏԵՄԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆԻՑ

1. «Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի իններորդ ուղևորությունը», 19 մամուլ, պատկերազարդ, 55 ներդիր նկարներ, 4000 տպաքանակ, գեղարվեստական գեղեցիկ ձևավորում և ընտիր տպագրություն:


2. «Էջմիածին» ալբոմ՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, 84 նկար, կալվնապատ, ընտիր թուղթ, 15000 տպաքանակ, տպագրական 7 մամուլ, գեղարվեստական գեղեցիկ ձևավորում և ընտիր տպագրություն:

3. Օրացույց, Մայր Աթոռի, 1972 թվականի, 14 մամուլ, 225 էջ, 20000 տպաքանակ:

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ԳՈՒՇԱԿՅԱՆ

Տ Ո Ն Ք Խ Ա Չ Ի

Այս գլուխին ներքև կամփոփվին **Խաչի** և **Եկեղեցվո** տոները, որոնք իրավամբ տեւորունական կնկատվին. վասնզի, **Խաչը** լինելով **գործիք**, իսկ **Եկեղեցին** լինելով **արդյունք** փրկագործության, երկուքն ալ հավատացելոց հոգվույն մեջ կնորոգեն տեւորունական սուրբ հիշատակներ: Քրիստոնեական հավատքը պատված է զանոնք միշտ իբրև ոչ միայն նվիրական իրեր ալ գորություններ, առաջինին վրա տեսնելով իր վրա թափված արյունով սրբացած խորհուրդ մը, և երկրորդին մեջ՝ փրկության գործին պըտղաբերությամբ սրբագործված կյանքը:

Խաչի տոների մեջ գլխավորն է **Խաչի վերացման տոնը**, զոր մյուս եկեղեցիները կտոնեն սեպտ. 14-ին, իսկ մենք՝ անոր մերձավոր կիրակիին, այսինքն սեպտ. 11-են 17: Խաչի վերացման տոնը պատմական խորքի մը վրա բանված գաղափարի մը պանծացումն է ինքնին: Եկեղեցական տարեգրությանց մեջ պատմականացած ավանդության մը համեմատ, խաչը երեք առիթներու մեջ հանդիսավորապես բարձրացուցված է ի տես հավատացելոց՝ փառավորվելով անոնցմե: Նախ, Երուսաղեմի առաջին եպիսկոպոս Հակոբոս Տյառնեղբայր առաքյալին միջոցալ, որ Քրիստոսի խաչին նմանությունը

ծողովրդին ցուցադրած աստե՛ն երգած ըլլալ կալանդվի առաջին անգամ «Խաչի քո Քրիստոս, երկիրպագանեմք...» սրտատուչ տաղը: Կըսենք նմանությունը, վասնզի այդ միջոցին, երբ հրեից կողմէ քրիստոնեից դեմ մղված բռուն հալածանքներուն պատճառաւ խաչյալին անունն իսկ զգուշությամբ և երկյուղով կարտասանեին իրենցները, հնար չէր բուն խաչափայտը հանել Գողգոթայի աղբյուսներէն, ուր առաջին օրէն թողվեցալ ան, և հրապարակալին պատիվներու առարկա դարձնել: Այս ավանդությունը առ առավելն կցուցնէ թէ խաչին գաղափարը և խորհուրդը առաջին իսկ օրէն որքան մեծարելի էր դարձած քրիստոնեական զգացման: Խաչին հանդիսավոր բարձրացման և հրապարակալին փառավորության պատեհությունը ընծայեց անոր գլուխը Կոստանդիանոս կայսեր մոր Հեղինէի ձեռամբ 327 թվին: Այս վերջինին կողմէ եղած ստիպումներուն վրա՝ Հուդա անուն Երուսաղեմացի իրազեկ հրեա մը ցույց տվալ անոր թաքուցված տեղը, ուր գտնվեցան երեք խաչեր, որոնցմէ մին փրկչականը պիտի ըլլար, իսկ մյուս երկուքը՝ երկու ավագակներունը: Ստուգելու համար ատիկա, մեռած կատաւիի մը դին մոտեցուցին երեք խաչերուն ևս

ու հասկացվեցավ թե երրորդը, որուն հալո-
մովը հարություն առած էր մեռյալը, իսկա-
կան տերունի խաչափայտն էր: Այն ատեն,
կյուրեղ եպիսկոպոս, որ Երուսաղեմի հայ-
րապետն էր, բարձրացուց զայն ի տես հա-
վատացելոց, որոնք երկյուղածությամբ եր-
կերպագեցին անոր: Այս եղելության պատ-
մական հիշատակն է որ կկատարվի հոկ-
տեմբեր 26-ի մերձավոր կիրակիին, **Գլուխ**
խաչ անվան ներքև, իսկ բարձրացուման և
փառավորման իմաստը խառնված է բուն
Խաչվերացի տոնին հետ: Վերջապես, խա-
չին փառավորյալ բարձրացուման երրորդ
և մեծագույն առիթն է եղած անոր **գերե-
ղարձը**: Խոսքով պարսից թագավորը՝ հու-
նաց դեմ իր պատերազմին մեջ, 610-ին,
հաղթելով Հերակլի, Երուսաղեմն ալ գրա-
վելով գերի տարավ խաչափայտը: Հերակլ
գորածողով ջրավ և մեծ բանակով քաղեց
պարսից վրա. հայկական գունդին զորավար
էր Մծեծ Գնունի, որուն միացան պարսից
հպատակ հայերն ևս: Խոսքով չարաչար
հաղթվեցավ, և սպանվեցավ իր Կավատ
Ծիրո որդիեն, որ նույնպես հաջորդ տարին
մեռնելով, իրեն հաջորդեց իր փեսան Խոռ-
յամ՝ Հերակլի օգնությամբ, որ պաշտան դրած
էր խաչափայտին ազատումը: Այդ պաշտա-
նը ընդունված լինելով, 628-ին խաչը վերա-
դարձվեցավ քրիստոնեից. Պարսկաստանեն
Կարին, Կարինեն Կ. Պոլիս և հետո մինչև
Երուսաղեմ անցկարագրելի ոգևորության
պատճառ եղավ անոր հանդիսական անցքը.
ամեն տեղ բարձրացվեցավ անհկա հավա-
տացյալներու ի մխիթարություն, առարկա
դառնալով ամենուն երկտյուած պաշտելու-
թյան: Կարելի է թերևս ըսել թե վերացումի
այս պարագան էր նույնիսկ որ պատճառ
տվավ Խաչվերացի տոնին, զոր այդ դեպքեն
վերջն է որ հույներն սկսան կատարել սեպ-
տեմբեր 14-ին:—Խաչվերացի տոնը ամենա-
մեծ հանդիսավորությամբ կկատարվի մեր
եկեղեցվո կողմն. մասնավորապես ուշա-
գրավ է կիրակի երեկոյի Խաչվերացի **թա-
փոր-անդաստանը**, որ տեղի կունենա մեծ
շուքով: Հավանական է որ այս հանդիսավո-
րությունը չափով մը գեթ արդյունքը լինի
այն տարվորության՝ զոր խաչափայտին
գերեղարձը գործեց հայության սրտին վրա՝
Հայաստանեն անցըված միջոցին: Կարևո
դաշտին հարավ-արևելյան կողմը բարձրա-
ցող լեռներուն մեծ գագաթը **Խաչափայտ**
կկոչվեր մինչև վերջերը: Այդ լեռան սարա-
հարթին վրա, որ 9000 ոտք բարձրություն
ունի, կրիսի սառնորակ ջուր մը, որ նույն ա-
տեն ուխտավայր է:

Տեղական ավանդություն մը կպատմեր թե
պարսիկները խաչը հանձնելե վերջ, զոջա-

յով, նորեն հարձակիլ փորձած են ևս առնե-
լու համար զայն. հայերը, խաչափայտը այն-
տեղ թողյով, իրենց ամբողջ ուժով վանած
են հարձակումը, ու վերադարձին տեսած են
որ խաչին հանգչեցված տեղեն բխած է այդ
վճիտ ջուրը: Նույն լեռներու ստորոտը կար
Խաչկա վանք մը, որ Խաչվերացի ատեն
մեծ ուխտավորություն կկատարվեր:

Խաչվերացի տոնը մեր հինգ տաղավար-
ներեն մին լինելով, ամենց նման ունի մախ-
ընթաց պահքը, որ է յոթնյակ մը ամբողջ,
ինչպես Վերափոխման և Վարդավառի տո-
ներունը: Ունի նաև իր **նավակատիքը**, **մե-
ռելոցի օրը** և **յոթնօրեքը**, որուն Գ., Դ., և
Ե. օրերը, ինչպես և նավակատիքի շաբաթ
օրը եկեղեցվո տոն կկատարվին. զի խաչի
և եկեղեցվո խորհուրդները էապես մեծ
տարբերություն մը չունին իրարմե, քանի
որ երկուքն ալ կվերաբերին փրկագործու-
թյան գաղափարին:

Խաչի երկրորդ գլխավոր տոնն է **Խաչ-
գլուխը**, զոր արդեն հիշատակած եղանք
վերև, Խաչվերացի մանրամասնությանց առ-
թիվ:

Երրորդն է **Խաչի երեման տոնը**, զոր
հույնք կկատարեն մայիս 7-ին, իսկ մենք
Հինանց Ե կիրակիին: Այդ տոնակատարու-
թյունը հիշատակությունն է պարզապես խա-
չի նշանին երկնից վրա հրաշալի երևումին,
որ 351-ին տեղի ունեցավ Երուսաղեմի վրա
Գողգոթայեն մինչև Ջիթենյաց լեռ տարած-
ված խաչանշան պաշտության մը, որ ա-
վելի փայլուն էր քան արևուն լույսը: Զայն
տեսան ամենքը, ժողովուրդ և կղեր, որոնք
եկեղեցի փութալով գոհությամբ մատուցին
Աստուծո, իրենց պարգևված այս հրաշալի
մխիթարության համար: Ժամանակին Երու-
սաղեմի պատրիարքը, Կյուրեղ, այս առթիվ
հատուկ թուղթ մը գրեց Կոստանդնուպոլս
Կոստանդ կայսեր, որ դատապարտված
արիտականությունը վերականգնելով եկե-
ղեցվո ներքին խաղաղության դեմ մեծ
վտանգ մը կպատրաստեր, և ողորական
քաղցր ոճով քայց խատաղատ նկատողու-
թյամբ մատնանիշ կըներ անոր՝ իր հոր
Մեծն Կոստանդիանոսի պաշտպանած դա-
վանության ողորափառ ճշմարտությունը,
մինևույն ատեն այս երևումն ալ ապացույց
մը համել փորձելով այդ մասին: Այդ թուղ-
թեն թարգմանությունը կկարդացվի մեր ե-
կեղեցվո մեջ, տոնին օրը, անդաստանի ա-
վետարանեն առաջ:

Խաչի տոներուն վերջինն է Վարագա
խաչի տոնը: Նախորդ մյուս տոները հա-
սարակաց էին բոլոր եկեղեցիներուն, այս
վերջինը միայն մենք կտոնենք. մեզի հա-
տուկ է ան. մե՛ր խաչի տոնը, ավելի միշտ՝


մեր խաչին տոնն է ան, վասնզի բոլորովին ազգային հիշատակի մը պանծացումն է:— Է դարո՞ւ ճիշտ կիսուն, **Վարազա** լերան կողերուն վրա ճգնող մենակաց մը, Թոդիկ, գիշեր մը տեսավ տեսիլքի մեջ որ Վարազա ժայռոտ գագաթին վրա կազմված է տասներկու սյուներով տանար մը, մեջտեղը լուսասփյուռ խաչով. քիչ ետքը այդ լուսավոր ձևը ինքնին փոխադրվելով դեպի վար, եկավ ամփոփվեցավ Վարազա վանքի սեղանին վրա: Թոդիկ և իր աշակերտը Հովել փութացին եկեղեցի և երկրպագեցին լուսափայլ մասունքին որ խաչափայտեն մասնիկ մըն էր այն անշուշտ, ինչպես առաջին վայրկյանեն խորհեցան իրենք, գոր **ս. Հոփսիսիմե** կույս և ընկերուհիները իրենց հետ ունեին այդ բարձունքին վրա ճգնած ատեննին, և գոր հոն ճգնող քահանաներու խնամքին հանձնած էին՝ հալածանքի հետեւանքով այդ վայրերեն հեռացած ատեննին: Իսկ քահանաներուն վախճանումեն վերջ մասունքը անծանոթ մնացած էր իր թողված տեղը, և շատեր՝ անոր սիրով՝ հոն անցուցեր էին, ինչպես Թոդիկ և Հովել, իրենց ճգնողական կյանքը, անոր հայտնությունը խընդրելով միշտ Աստուծուն: Թոդիկի եղած այս աստվածային հայտնության լուրը մեծ խանդավառություն հառաջ բերավ Վասպուրականի մեջ: Ժամանակին կաթողիկոսը, Ներսես **Գ. Շինող** մականվանյալ, փութաց Վարազ, Թեոդորոսի որդի Վարդ Ռշտունի կամ Վարդ Պատրիկ սպարապետին հետ, և հաստատելով մասունքին ստուգությունը և պատմական մանրամասնությունները, տնօրինեց որ ամեն տարի, սեպտեմբեր 28-ի մերձավոր կիրակիին, կամ Խաչվերացի տոնեն երկու շաբաթ վերջ, կատարվի Վարազա խաչի տոնախմբությունը: Թերևս այդ առթիվ ինքն իսկ հորինեց նաև «Նշանաւ ամենալալթ խաչիդ» հոգեգմայլ շարականը, որ մեր ամենեն արտառուչ եկեղեցական երգերեն մին է և ամենեն ավելի ժողովրդականացածներեն: Ի դեպ է թերևս ավելցնել

հոս թե այս տոնին կազմությունն ու հաստատմը ավելի ճիշտ պիտի լինէր բացատրել ժամանակին պատմական հանգամանքներով, որոնց մեջ հայ ժողովուրդը իր ազգային և կրոնական կյանքին համար նոր և ահեղագույն վտանգ մը կզգար: Այդ վտանգին դեմ հոգևորապես սպարազինվելու իր ճիգին հանդեսն է այս տոնը:

Վարազա ս. Նշանի մասունքին մասին իբրև պատմական լրացուցիչ տեղեկություն ավելորդ չըլլա հոս հիշել թե Թոդիկի հայտնվածը մնաց նախ Վարազա վանքի եկեղեցիին մեջ. ապա փոխադրվեցավ ներքին Վարագի կամ ս. Նշան վանուց եկեղեցին, ուր մնաց մինչև 1021: Այդ թվականին, երբ Վասպուրականի Արծրունի թագավորն Սենեքերիմ գաղթեց Սեբաստիա, իրեն հետ տարավ խաչի մասունքը, և դրավ հոն կառուցած **ս. Նշան** վանուց եկեղեցիին մեջ: Բայց, իր կտակին համաձայն, իր մահեն ետքը, 1026-ին, իր մարմինն հետ ս. Նշանն ալ փոխադրվեցավ Վարագ, ուր և մնաց մինչև 1651: Այդ տարին, Խոջաբ գավառին տիրող Սյուլեյման և Չոմար փաշա անուն բռնավորներ Վարազա վանքը կողոպտելով ավազ ս. Նշանն ալ տարին իբր կողոպուտ. բայց երկուքն ալ չարաչար վախճան ունեցան. իրենց հաջորդը Իպրահիմ պեյ, տեսնելով որ այդ նվիրագործ ավարը դժբախտությանց միայն պատճառ է եղած, ուզեց զայն հանձնել Հոգվոց վանքի վանահայր Պետրոս եպիսկոպոսի, որ պնդեց թե պետք է հանձնվի հոն ուսկից առնված է: Իպրահիմի հրամանին վրա, վանեցիք եկան այն ատեն և առնելով սրբությունը, փոխանակ վանքի եկեղեցիին՝ ավելի ապահով նկատեցին քաղաքի ս. Տիրամայր եկեղեցին. հոն զետեղեցին զայն. այս պատճառով նույն եկեղեցին հետ այնու սկսավ կոչվիլ ս. Նշան, մինչև վերջերը հոն կպահվեր նվիրական մասունքը:

(«Սուրբ և սոք», Երուսաղեմ, 1939, էջ 313—323):





ԽԱՉԻ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Սուրբ խաչն օգնական հաւատացելոց
Կանգնեցաւ ի յերկրի յաղթող թշնամուն.
Եկայք ժողովուրդք երկրպագեցուք:

Արարիչն Աստուած բարձրացաւ ի խաչին
Եւ զմեռեալս մեղօք փայտին ճաշակմամբն.
Ի սմա նորոգեալ կենդանացոյց:

Հրաշակերտ և զօրեղ փայտ խաչի քո Քրիստոս.
Գաւազան զօրութեան ի յերկրի երևեալ.
Եկայք ժողովուրդք երկրպագեցուք:

Զոր հրէիցն ծածկեալ զանթաբչելի զգանձն.
Փափագմամբ թագունոյն փայտ կենաց յայտնեցաւ.
Եկայք ժողովուրդք երկրպագեցուք:

Սա է զէն յաղթութեան հաւատացելոց.
Այտլեան և կնիք յաղթող ընդդէմ թշնամուն.
Եկայք ժողովուրդք երկրպագեցուք:

*
* *

Փայտ կենաց որ փոխանակ մահացու պտղոյն.
ԶՔրիստոս պտղաբերեցեր.
Պարսպեալ պահեստ զոխտս հաւատացելոց:

Քն քացաւ մեզ ճանապարհն ծառոյն կենաց.

Ի սրովքէափակ պահպանութենէն.
Պարսպեալ պահեա զովսոս հաւատացելոց:

Քն ազատեցաւ նախահայրն ի ճաշակմանէ պտղոյն.
Եւ քեզ երկրպագեն ամենայն հաւատացեալք.
Պարսպեալ պահեա զովսոս հաւատացելոց:

*
* *

Խաչի քո Քրիստոս երկիրպագանեմք.
Եւ զթաղումն քո մեծացուցանեմք.
Եւ սուրբ զյարութիւնդ քո փառաւորեմք.
Եկալք հաւատացեալք երկրպագեցուք
Քրիստոսի Աստուծոյ մերոյ.
Վասն զի եկն ի ձեռն խաչին իւրոյ
Ծնորհեաց պարգևս աշխարհի:

Փառք սուրբ խաչին ալէլուիա
Սուրբ սիովնին ալէլուիա.
Սուրբ Յարութեանն ալէլուիա:

*
* *

Զօրութիւն սուրբ խաչի քո Քրիստոս.
Որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի.
Սա պահեցէ զմեզ յամենայն փորձութենէ:

Քանզի ի սմա բարձրացար Աստուած.
Եւ ի սմա հեղեր զպատուական սուրբ զարինդ.
Սա պահեցէ զմեզ յամենայն փորձութենէ:

Եւ զքո միսանգամ զգալուստդ
Նշանաւ խաչի քո ցուցեր աշխարհի.
Սա պահեցէ զմեզ յամենայն փորձութենէ:

*
* *

Գաւազան զօրութեան զքաչ քո ետուր մեզ Քրիստոս.
Եւ սովաւ յաղթեցուք անօրէն թշնամոյն:

Սա է զէն յաղթութեան սրեալ արեամբ որդոյն Աստուծոյ.
Եւ սովաւ յաղթեցուք անօրէն թշնամոյն:

Սա է աթոռ տէրունեան և ի սմա է բազմեալ Քրիստոս որդին
Աստուծոյ.

Եւ սովաւ յաղթեցոյք անօրէն թշնամոյն:

Սա է կարապետ յաւոր գալստեան Փրկչին. և պսակ պարծանաց
Աստուծոյ.

Եւ սովաւ յաղթեցոյք անօրէն թշնամոյն:

Սա է կարապետ յաւոր գալստեան Փրկչին. և պսակ պարծանաց
հաւատացելոց.

Եւ սովաւ յաղթեցոյք անօրէն թշնամոյն:

*
* *

Որախ լեր սուրբ եկեղեցի.
Քանգի Քրիստոս արքայն երկնից
Այսօր պսակեաց զքեզ խաչին իրով.
Եւ զարդարեաց զամուրս քո
Սքանչելի փառօքն իրովք:

Խնդա լոյժ դուստր սիովնի.
Քանգի երկիրս երկինք եղեն
Այսօր վերստին քո նորոգմամբ.
Եւ թագաւորն երկնաւոր
Հաճեցաւ բնակիլ ի քեզ:

Ընդ դասս երկնաւոր զօրացն
Վերստեալ տօնեմք քեզ այսօր
Զանդադար փառատրութիւնս.
Որախ լեր հարսն անարատ
Անքննին քո խորհրդով:

*
* *

Խաչի քո Քրիստոս երկրպագեն արարածք ամենայն.
Որ ի փրկութիւն մեզ կանգնեցաւ սա եղիցի քեզ պահապան
յաղթող.

Ապրեցուցանել զմեզ ի պատրանաց բանասրկոյին:

Ի սմա բարձրացար բարձօղդ անիծից,
Որ փառաւորեալդ ես ընդ Հօր. ժողովել զհեռացեալսն կենսաբեր
փայտին.

Ապրեցուցանել զմեզ ի պատրանաց բանասրկոյին:

Սովաւ լուսաւորեցան արարածք ամենայն.
Սմա սպասէին արգելեալքն ի մեղսաւեր բանտին.
Որ ազատեաց զմեզ ի պատրանաց բանասրկոյին:

*
* *
*

Ապառինեցաք ի խաչ քո արարիչ յափտեցից.
Որ ետոր մեզ պահապան յաղթող ընդդէմ թշնամուն.
Աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինս մեր:


Բարձրեալ թագաւոր որ վասն մեր ելեր ի խաչ.
Եւ բարձեր սովաւ զլանցանս նախաստեղծին Ադամայ.
Աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինս մեր:

Գլուխ սուրբ հաւատոյ և փալտ կենաց մարդկան յայտնեալ.
Ձոր տեսեալ ալսոյն պղծոյ կործանեցաւ անկանգնելի.
Աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինս մեր:

Դողացաւ թշնամին ընդ յայտնիլ սրբոյ խաչին.
Եւ ի յահէ փառաց նորա կործանեցաւ յանդունդս երկրի.
Աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինս մեր:

Երկինք ցնծալին և երկիրս ուրախանայր.
Քանզի փրկիչ ցուցաւ սուրբ խաչն և լուսատու տիեզերաց.
Աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինս մեր:





ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆԻ 1971—1972 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերը տվորաբար Մայր Աթոռի հոգևոր ճեմարանի վերաբացման ամիսն է։ Սեպտեմբերի 6-ին, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է Վեհարանում ընդունել ճեմարանի 1971—1972 ուսումնական տարվա դասախոսական կազմին՝ գլխավորությամբ տեսուչ տ. Հովհաննես քին։ Մարտի 2-ին, Վեհափառ Հայրապետը ուրախությամբ ողջունում է նոր ուսումնական տարվա բացումը և հաջողություն մտադրում դասախոսական կազմին, նույն նվիրումով առաջ տանելու ուսումնադաստիարակչական աշխատանքները հոգեվոր ճեմարանի հարկի տակ։

Վերջում դասախոսները հյուրասիրվում են Մայր Աթոռի մրգերով։

Նույն օրը, առավոտյան ժամը 11-ին, հոգեվոր ճեմարանում տեսչի գլխավորությամբ գումարվում է այս ուսումնական տարվա առաջին մանկավարժական ժողովը, որի ընթացքում դասախոսները ծանոթանում են այս տարվա ուսումնական ծրագրերին, իրենց առարկաների, ուսումնական ծրագրի և դասաժամերի հետ։

Սույն ուսումնական տարում Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ և թեադրաբանքով փոփոխություն է տեղի ունենում ճեմարանի դասախոսական կազմում. անգլերեն լեզվի նոր դասախոս է հրավիրվում

Սարգիս Ինեջյանը, ուսաց լեզվի դասախոս՝ Խաչատուր Ներսիսյանը, իսկ հայոց եկեղեցական երաժշտության և խազագրության դասերը հանձնվում են Արարատ սրկ. Գալստյանին։

Փոփոխություն է տեղի ունենում նաև ճեմարանի դաստիարակների կազմում։ Նոր դաստիարակներ են նշանակվում այս տարվա շրջանավարտ սարկավագներ Կորին Ներսիսյանը, Ժիրայր Սիմոնյանը և Տրդատ Ծամյանը, որոնք նախկին ավագ դաստիարակ Բարսեղ Թաշչյանի հետ կկատարեն հոգևոր ճեմարանից ներս դաստիարակի պատասխանատու պաշտոնը։

Բարեշնորհ Կորին և Ժիրայր սարկավագ դաստիարակները առաջին և երկրորդ դասարաններում կդասավանդեն Հին և Նոր Ուխտի պատմությունը։

Վեհափառ Հայրապետի հրամանով հոգեվոր ճեմարանի տեսուչ է նշանակվում արժանապատիվ տ. Հովհաննես քին։ Մարտի 2-ին, որը երկար տարիների աշխատանքային-դաստիարակչական փորձ ունի հոգևոր ճեմարանի կրթական հարկի ներքո, և նրա նվիրյալ աշխատանքը միշտ էլ զնահատվել է ազգիս Հայրապետի կողմից։

Ճեմարանի դասախոսական կազմը բաղկանում է հոգևորական և աշխարհական 22 անձերից։

Դասախոսական կազմին գլխավորում է Վեհափառ Հայրապետը, որը դասախոսելու է տրամաբանության առարկան:

Կրոնական և եկեղեցական առարկաների դասավանդությունը ստանձնել են տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Երուսաղեմի միաբան տ. Ադան արքեպ. Բալիոզյանը, տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը և տեսուչը:

Սեպտեմբերի 10-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, հոգևոր ճեմարանի դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, կատարվում է ճեմարանի 1971—1972 ուսումնական տարվա վերաբացման հանդիսությունը:

Որոշյալ ժամին Վեհափառ Հայրապետը, շրջապատված տ. Հայկազուն և տ. Հուսիկ սրբազաններով, ծափերի ներքո մուտք է գործում դահլիճ: Ողջ ներկաները հոտնկալա ունկնդրում են Հայաստանի պետական հիմնը, որից հետո ճեմարանի երգչախումբը կատարում է «Աշակերտք Քրիստոսի» շարականը:

Հոգևոր ճեմարանի դասախոս տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը ընթերցում է Մատթեոսի ավետարանից սերմնացանի առակը:

Այնուհետև ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարությանը ողջ դասախոսական կազմի անունից վստահեցնում է Վեհափառ Հայրապետին, որ այս ուսումնական տարում ևս նրանք իրենց մտավոր և հոգևոր կարողությունները ի սպաս կդնեն՝ ուսանողությանը խոր գիտելիքներ և հոգեվոր-բարոյական և հայրենասիրական դաս-

տիարակություն ջամբելու համար: Իր խոսքի վերջում տեսուչը խնդրում է Վեհափառ Հայրապետին, որ Նա այս սուրբ գործի նախօրեին տա Իր օրհնությունը ուսանողությանը և դասախոսներին:

Ապա խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և մի շարք օգտակար խորհուրդներ ու խրատներ տալիս ուսանողությանը, ներանց պատվիրում է լինել աշխատասեր, կարգապահ, մեծ սեր ունենալ դեպի մեր դարավոր ազգային մշակույթը և յուրացնել այն, ամբողջ հոգով նվիրվել համազգային այս մեծ հաստատությանը:

Ապա Վեհափառ Հայրապետը օրհնում է դասախոսական կազմին և ուսանողությանը, մաղթում նրանց նորանոր հաջողություններ:

Այնուհետև դասախոսական կազմը և ողջ ուսանողությունը մոտենում են Վեհափառ Հայրապետին և համբուրում Նրա ս. Աջը:

Հանդիսությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

Այս տարի հոգևոր ճեմարանն ունի 36 ուսանողներ՝ բաժանված հետևյալ դասարանների և լսարանների վրա.

Ա. դասարան՝ 10


Բ. դասարան՝ 6

Գ. դասարան՝ 7

Ա. լսարան՝ 8

Բ. լսարան՝ 5:

Սեպտեմբերի 11-ին, ուրբաթ օրը, ճեմարանի հարկի տակ հնչում է նոր ուսումնական տարվա առաջին զանգը:





ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՏՊԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՏԱՄՆԱՄՅԱԿԸ

Սեպտեմբերի 2-ին լրացավ Մայր Աթոռի տպարանի վերաբացման տասնամյակը:

Վեհափառ Հայրապետի գահակալության տարիներին կատարված հոգևոր-մշակութային փառավոր նվաճումներից մեկն էր հանդիսանում Մայր Աթոռի երբեմնի տպարանի վերաբացումը՝ որպես մշակութային մեծ իրադարձություն:

Մայր Աթոռի տպարանը, որը վերաբացվում էր նվիրատվությամբ ամերիկահայ մեր հավատավոր ու հայրենասեր ժողովրդի, արտագին արտահայտությունն էր նրանց որդիական սիրտ և հավատարմության դեպի Մայր Աթոռ ու Էջմիածինը, դեպի նրա արժանընտիր գահակալը, դեպի հայրենի մշակույթն ու գիտությունը:

Հայոց Հայրապետը Մայր Աթոռի տպարանի հանդիսավոր բացման առիթով 1961 թվականի հոկտեմբերի 16-ին գրած Իր սրբատառ կոնդակում խանդավառորեն և լավատեսությամբ ավետում էր, որ Մայր Աթոռի նորաշեն տպարանը «կոչված է լույսի նոր վառարան մը դառնալ մեր եկեղեցիին և համայն հայ ժողովուրդի կյանքին մեջ:

Հայրենի հողին վրա, սուրբ Էջմիածնի այս սրբազան հողի տակ, լույսի աղբյուր մը ևս սկիզբ կառնե, ոռոգելու համար հոգևոր անդաստանը մեր ժողովուրդին և բաշխելու անոր հոգևոր սնունդ, գիտություն և մշակութային արժեքներ»:

Տառը տարիներ են անցել պատմական այդ թվականից, և Մայր Աթոռի տպարանն

իր հրատարակչական գործունեությամբ արդարացրել է Հայոց Հայրապետի հույսերն ու ակնկալությունները՝ լույս ընծայելով մեր հոգևոր մշակույթի, հայ դպրության, արվեստի, գիտության հին և նոր գանձերը:

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը և Մայր Աթոռի տպարանի տեսչությունը հանդիսավորապես նշում են տպարանի վերաբացման տասնամյակը:

Սեպտեմբերի 14-ին, երեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը, տ. Հայկազուն, տ. Հուսիկ սրբազանների, Մայր Աթոռի միաբան վարդապետների և բաժնի վարիչների ընկերակցությամբ, ժամանում է տպարան, որի գլխավոր մուտքի առջև տեսչությունն ու տպարանի աշխատավորությունը սրտագին ծափերով դիմավորում են Հայոց Հայրապետին և առաջնորդում տպարանի հանդիսության սրահը:

Հանդիսությունը ներածական խոսքով բացում է տպարանի առաջավոր գրաշար Ռոզա Հակոբյանը:

Մայր Աթոռի տպարանի տեսուչ Մ. Մինասյանը հետևյալ ճառով ողջունում է Հայոց Հայրապետին.

«Վեհափառ Տեր.

Այս տարի, սեպտեմբերի 2-ին, լրացավ Մայր Աթոռ ու Էջմիածնի նոր տպարանի վերաբացման տասնամյակը:

Մայր Աթոռի նոր տպարանի վերաբացումը, որը սրտագին նվերն էր ամերիկահայու-

թյան, Ձեր հայրապետության օրով հանդիսացավ մշակութային մեծ ձեռնարկություն: Մայր Աթոռի կյանքում և Ձեր հայրապետական գահակալության բարեբաստիկ տարիներին:

Հայ տպարանի բացումն ու գործունեությունը Մայր Աթոռի հովանու տակ և Ձեր օրհնության ներքո շարունակությունն է հանդիսանում Սահակ-Մեսրոպյան մշակութային, հայրենասիրական մեծ առաքելության հայ ժողովրդի կյանքում:

Անցնող տասը տարիների ընթացքում Մայր Աթոռի տպարանի տեսչությունն ու ողջ աշխատավորությունը մեծ սիրով են կատարել միշտ Ձեր Վեհափառության գլխավորած հրատարակչական գործը Մայր Աթոռի մեջ:

Ձեր գիտությանը և համաձայնությանը Մայր Աթոռի տպարանում տպագրվել են հայ մշակույթի, հայ արվեստի և հայ դպրության վերաբերյալ բազում արժեքավոր աշխատություններ՝ մանավանդ Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատվերով:

Անցնող տասը տարիների ընթացքին Մայր Աթոռի տպարանից լույս են տեսել բազում հրատարակություններ՝ թերթեր, ամսագրեր՝ մեծ տպաքանակով:

Վեհափառ Տեր, Դուք միշտ հայրական հոգատարությամբ եք շրջապատել տպարանի ողջ աշխատավորությանը, գնահատել և քաջալերել եք միշտ պարգևներով և դրամական օժանդակությամբ: Այդ բոլորի համար և մանավանդ տասնամյակի առթիվ Ձեր ցույց տված հայրապետական ուշադրության և նվերների համար հայտնում ենք խորին շնորհակալություն՝ տպարանի տեսչության և ողջ աշխատավորության անունից:

Բարի եկաք, Վեհափառ Տեր, Ձեր տունը, մշակութային այս հաստատությունը:

Այժմ խնդրում ենք Ձեր օրհնության խոսքը:

Մայր Աթոռի տպարանի վերաբացման տասնամյակին նվիրված հանդիսության ժամանակ խոսք է առնում Վեհափառ Հայրապետը, Իր ուրախությունն ու գոհունակությունը հայտնում այս առթիվ, շնորհավորում տեսչությանն ու աշխատավորությանը, շեշտում, որ Մայր Աթոռի տպարանի հաստատումով և գործունեությամբ մի անգամ ևս փառավորվում է ս. Էջմիածինը և լցվում կենդանության ճյուղով՝ շարունակելու համար իր հոգևոր, մշակութային ու հայրենասիրական առաքելությունը մահ մեր օրերին՝ ի փառս հայ մշակույթի և ի բարօրություն հայրենյաց ու ժողովրդի:

Իր խոսքի մեջ Վեհափառ Հայրապետը Իր

օրհնությանն ու գնահատությանն է արժանացնում մահ ԱՄՆ-ի հայոց մեր երկու թեմերի ազգային-եկեղեցական իշխանություններին և հավատավոր ժողովրդին, որոնց ջանքերով և նվիրատվությամբ վերաբացվեց Մայր Աթոռի տպարանը: Վեհափառ Հայրապետը առանձին կարևորությամբ նշում է ԱՄՆ-ում տասը տարիներ առաջ Մայր Աթոռի տպարանի հանգանակիչ հանձնաժողովի և նրա եռանդուն, անձնվեր նախագահ, Մայր Աթոռի հարազատ զավակ Երվանդ Ադաջանյանի կատարած արտագին ջանքերն ու աշխատանքները՝ տպարանի վերաբացման շնորհակալ գործում:

Հանդիսության ավարտին Վեհափառ Հայրապետը տպարանի տեսչության կողմից հյուրասիրվում է հայրենիքի բարիքներով՝ խաղողով, տանձով ու դեղձով:

Մայր Աթոռի տպարանի վերաբացման տասնամյակի ուրախ առթիվ Վեհափառ Հայրապետը բարեհաճում է հետևյալ հեռագրերը հղել ԱՄՆ: Առաջին հեռագիրը ուղարկում է ԱՄՆ-ի հայոց թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանին.

«Մայր Աթոռի տպարանի հիմնադրման տասներորդ տարեդարձի առթիվ այսօր՝ 14 սեպտեմբերին տպարանի, հարկի տակ հավաքված բոլորս երախտագետ սրբուով հիշեցինք ամերիկահայ մեր հավատացյալ ժողովուրդը, թեմական խորհուրդը և հանգանակիչ մարմինը՝ ի գլուխ տիար Երվանդ Ադաջանյանի, որոնք սքանչելի նվիրումով և առատաձեռն նվերներով հիմնեցին մեր մոր տպարանը: Սուրբ Էջմիածնի մեջ միշտ պայծառ կպահպի այս հիշատակը:

Աստված անսասան պահե մեր սուրբ Էջմիածինը և յուսավորչահիմն հայրապետական Մայր Աթոռը:

Աստված շեն ու բարգավաճ պահե ամերիկահայ մեր հարազատ ժողովուրդը:

Վեհափառ Հայրապետը երկրորդ հեռագիրն ուղարկում է պրն. Երվանդ Ադաջանյանին.

«Սուրբ Էջմիածնի տպարանի բացման տասներորդ տարեդարձի առթիվ սիրով կրհեցե՞ք ձեզի Մեր օրհնությունը: Մայր Աթոռի մեջ երբեք չենք մոռնար ձեր անձնվեր, անհուն աշխատանքը մեր տպարանի ստեղծման համար: Այսօր տպարանի մեջ համառված սեղո՞ւ շոջանակով բոլորս հիշեցինք ձեզ երախտաբար սրտով: Կնուսանք օր մեր մեջ ունենալ ձեզ և ձեր շատ ազնիվ տիկինը: Աստված ձեր երկուքին երկար կյանք ապրուհե երջանիկ օրերով:

14-ր սեպտեմբերի 1971 թ.,

Ս. Էջմիածին»



ՍՓՅՈՒՌԱՀԱՅ ՈՒՅՏԱՎՈՐՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՄ

Գեղեցիկ ու հմայիչ է աշունը Հայաստանում: Ծոգ ամռանը հաջորդում են աշնան գովաշունչ օրերը, օդը դառնում է ավելի մեղմ:

Հանգստավայրերից վերադառնում են հովեկները, դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների կամարների տակ նորից դողանջում է նոր ուսումնական տարվա առաջին զանգը, աշխուժանում է կյանքը և մտնում իր սովորական հունի մեջ:

Այգիներում ծառերը տնքում են իրենց հանելի և արևահամ բեռների տակ, մառաններում եփվում է հայոց ոսկեգույն գինին:

Իսկ Մայր Աթոռ ս. Էջմիածնում այս ամիսներին տեղի են ունենում հայ եկեղեցական-ազգային մի շարք տոնակատարություններ: Եվ բոլորովին էլ պատահական չէ, երբ ախյուրքի տարբեր գաղթօջախներից մայր հայրենիք ուխտի են գալիս բազմաթիվ հայորդիներ հենց այս ժամանակ և երևի նրա համար, որպեսզի ավելի լավ զգան Մայր Հայաստանի սրտի հեքը, աշխատանքային եռուզեռը՝ չեղմացներու համար իրենց հայրենաբաղձ հոգիները և վերանորոգելու իրենց ուխտը: Իսկ վերադառնալիս նրանք իրենց հոգում անթեղած կրակ են տանում Հայաստանից՝ հայ ապրելու անխախտ վրճառականությամբ:

Մայր Աթոռ ս. Էջմիածինը հայ հոգու ծննդավայրն է, համազգային մի սրբություն, որը միշտ իրեն է ձգում աշխարհասփյուռ եղած հայի զավակներին:

Սեպտեմբերի 12-ին, կիրակի, տոնը Խաչավերացի:

Օրը սովորականից պայծառ է և արևոտ: Հավատացյալների հոծ բազմությունը դեռ վաղ առավոտվանից լցվում է մայրավանքի շրջափակը: Եկեղեցու զանգերը դողանջում են աշխույժ ու հավատացյալ ժողովրդին կարծես հաղորդում օրվա ոչ սովորական լինելը:

Բազմաթիվ ուխտավորներ էին եկել ոչ միայն Հայաստանի շրջաններից և Միության տարբեր վայրերից, այլև Ֆրանսիայից, ԱՄՆ-ից, Լիբանանից, Սիրիայից, Հարավային Ամերիկայից և ախյուրքի այլ գաղթօջախներից:

Պատարագից առաջ Վեհափառ Հայրապետը Վեհաքանոնում բարեհաճում է ընդունել Փարիզի Հ. Բ. Ը. Միության երիտասարդաց ակումբի անդամ-անդամուհիների այցելությունը: Նա հետաքրքրվում է Իր հոգևոր զավակների կյանքով: Նրանցից տեղեկություններ է առնում Ֆրանսահայ գաղութի ազգային-եկեղեցական կյանքի վերաբերյալ: Նրանց պատվիրում է անխախտ զգացումներով սիրել մեր Վերածնված հայրենիքը, Մայր Աթոռ ս. Էջմիածինը և մշակույթի դարավոր կոթողները:

Հանուն ուխտավորների խոսք է առնում Արիս Ադամյանը և ասում.

«Վեհափառ Տեք,

Բառեր չեմ կրնար գտներ արտահայտելու համար այն խոր հուզումը զոր կզգամ այս պահուս, ս. Էջմիածնի կամարներուն տակ:

Ա. Էջմիածինը ի ափսոսաբան աշխարհի ցրված հայության հավատքի միակ կենտրոնն է, որ իր մեջ կյտրհորդանշե հայուն անսահման սերն ու հավատարմությունը կաթողիկոս Ս. Տ. Վազգեն Ա Վեհափառին:

Սակայն պետք է խոստովանենք որ հայրենի հողին վրա, ա. Էջմիածնի տաճարին մեջ Ձերդ Վեհափառության ներկայության գրությունը անհունորեն ավելի մեծ նշանակություն ունի կզգենու մեզի համար: Մենք այս պահուս ողջ հայ ժողովուրդի պատմությունն է որ կվերապրինք մեր սրտերում մեջ, պատմություն, զոր մեզմե ոմանք սորվելու բախտավորությունն ունեցած են:

Երբ կբալենք Հայաստանի սրբազան հողին վրա, ուր անցյալ, ներկա ու ապագա անբակտելի կապերով մեկս մեկու զուգորդված ենք, կարծես հրաշք մըն է որ կկատարվի մեր հոգիներեն ներս:

Բոլոր այս հնադարյան եկեղեցիները ուրոնք արար աշխարհի հիացմունքի առարկան են, մեր ժողովուրդի ստեղծագործ հանձարին լավագույն ապացույցն են անտարակույս, սակայն ամեն բանն առաջ անունք կվկայեն մեր ժողովուրդին, դարերու ընթացքին ունեցած խոր հավատքը: Հավատք որ ներկայիս սփյուռքահայերու սրտերում մեջ կկտրհորդանշվի ա. Էջմիածնի հանդեպ անունն ունեցած հավատարմության ու սիրտ զգացումներով:

Հայ ժողովուրդը տառապանքի օրեր շատ տեսած է: Ծառ զավթիչներ ու բռնակալներ ասպատակած են մեր երկիրը, սակայն շնորհիվ հայ եկեղեցիին ներշնչած կորովին ու ամեն դժվարությանց տոկալու կամքին, անկրցած է միշտ ոտքի մնալ ու պահել իր տոհմիկ դիմագիծը: Ասոր համար է որ հայ ժողովուրդը հավատարմորեն կապված կմնա իր եկեղեցիին ու մեր ներկայությունը այստեղ անոր մեկ ապացույցն է:

Վեհափառ Տեր, Ձեր հայրական օրհնության արժանի ըրեք մեզ բոլոր ու ընդունեցեք մեր արևշատության մաղթանքները, թող Աստված երկար կյանք, ուժ և կորով շնորհեն Ձերդ Վեհափառության, որպեսզի Ձեր իմաստուն իշխանությամբ առավել ևս զորանա ու բարգավաճի Հայաստանյայց եկեղեցին:

Սպա խոսք է առնում Հ. Բ. Ը. Միության Փարիզի գրասենյակի քարտուղարուհի Հասմիկ Բյուրեղյանը:

«Վեհափառ Տեր,

Հեռավոր Ֆրանսիայեն խոնարհ զավակներդ այսօր եկած են ա. Էջմիածնա լուսն խորանին առջև հայ հավատացյալի մեր ուխտը նորոգելու ու Ձերդ Վեհափառության ա. Աջը համբուրելու:

Սփյուռքի մեջ հայուն աչքը ամենն առաջ դեպի ա. Էջմիածին ուղղված է, որովհետև հոնկե է որ ան պիտի ստանա իր հոգևոր սնունդը, Լուսավորչի կանթեղին լույսով է որ ան պիտի կարողանա գտնել իր նստիսն ու Հայաստանյայց եկեղեցիի ա. հավատքին շերտությամբ է որ ան պիտի կրնա դեմ դնել աշխատելու և ձուլման վտանգին»:

Ապա Հասմիկ Բյուրեղյանը պատմում է իրենց կազմակերպության կատարած աշխատանքների մասին, որ բարի սամարացու մնան հոգ են տանում հայ մանուկների դաստիարակությանը, կազմակերպում դասախոսություններ հայ մշակույթի վերաբերյալ, և թերևս այս է պատճառը, շեշտում է նա, որ մեր գաղութում և հատկապես այս կազմակերպության մեջ մեծ սեր և հետաքրքրություն առաջ եկավ տեսնել մեր նախնիների սուրբ երկիրը:

Իր խոսքի վերջում նա Վեհափառ Հայրապետին ցանկանում է քաջատոջություն, արևշատություն և երկար օրերի զահակություն Լուսավորչի գահի վրա: Ապա, հանուն խմբի, խորին շնորհակալություն է հայտնում Վեհափառ Հայրապետին այս սիրալիր ընդունելության համար և խնդրում 'որան օրհնել իրենց խմբի անդամ-անդամուհիներին:

Վեհափառ Հայրապետը շերտորեն ողջունում է Ֆրանսահայ ուխտավորների այս խմբին և օրհնելով տալիս է Իր հայրապետական հայրենաշունչ պատգամը:

Ընդունելության վերջում բոլոր ուխտավորները հերթով մոտենում և աջահամբույրով ստանում են իրենց հոգևոր Հոր օրհնությունը:

*
* *

Այնուհետև Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել սփյուռքահայ այնթապցիների ուխտավորական մեծ խմբի այցելությունը, որոնք եկել էին Ֆրանսիայից, Լիբանանից, Սիրիայից, ԱՄՆ-ից՝ գլխավորությամբ պրն. Գևորգ Պաքըճյանի:

*
* *

Սեպտեմբերի 12-ին զուգահեյվ էր հայրենիքում, Մասիսի շրջանում, 'որ Այնթապի անվանակոչության առաջին տարեդարձի հանդիսությունը:

Անցյալ տարի Վեհափառ Հայրապետը բարեհաճել էր օրհնել և քաջալերել այնթապցիների հայրենասիրական այս ձեռնարկը: 1971 թվականի ապրիլի 24-ին Վեհափառ Հայրապետը ստորագրել էր համայն այնթապցիներին ուղղված Իր սրբատառ կոնդակը, ուր, ոգեկոչելով Այնթապի

հերոսամարտի հիսունամյակի հիշատակը, իր օրհնությունն էր բերում «հերոսական Այնթապին, անոր նահատակ զավակներուն, հարգանք և օրհնություն Նոր Այնթապին և մեր օրերու այնթապցիների հայրենաշեն ոգիին»:

Այլեի բան երեք հարյուր սիյուռաֆայ և հայրենաքնակ այնթապցիներ սեպտեմբերի 12-ին եկել էին Վեհաբան ստանալու համար Հայոց Հայրապետի օրհնությունը և լսելու Նրա հայրենաշունչ պատգամը:

Հանուն բոլոր այնթապցիների խոսք է առնում հայրենաքնակ այնթապցիների հանձնաժողովի ատենապետ Ա. Հատիտյանը, որը սրտագին շնորհակալություն և երախտագիտություն է հայտնում Վեհափառ Հայրապետին, որ միշտ հայրական հոգատարությամբ և ջերմությամբ է վերաբերվել այնթապցիների հայրենասիրական յուրաքանչյուր ձեռնարկին:

Ա. Հատիտյանը խնդրում է Հայոց Հայրապետի օրհնությունը Նոր Այնթապի անվանակոչության առաջին տարեդարձի ուրախ առիթով:

Նորին Սրբությունը, խորապես հուզված հայրապետական իր բարձր գնահատության և օրհնությանն է արժանացնում Այնթապի կենտրոնական վարչության և սիյուռքի բոլոր կենտրոններում Այնթապի հայրենակցական միությունների աշխատանքը սրտաբուխ մաղթանքով, որ հաջողությամբ պսակվեն համայն այնթապցիների հայրենամկեր ձեռնարկությունները, որպեսզի մոտ ապագայում իրականանա նրանց երազանքը:

Հայոց Հայրապետը թելադրում է, որ այնթապցիությունը ևս իր սրտագին մասնակցությունը բերի մայր հայրենիքի շինության

սրբազան աշխատանքներին, որպես հարազատ զավակները Մայր Աթոռ ա. Էջմիածնի:

Վերջում Վեհափառ Հայրապետը սրտագին բարեմաղթում է, որ վերածնված Մայր Հայաստանի կենսատու արևի ներքո աճի և ծաղկի Նոր Այնթապը:

Բոլոր ներկաները երկյուղած բարեպաշտությամբ մոտենում և աջահամբույրով ստանում են Հայոց Հայրապետի օրհնությունը:

Մի փոքր անց Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը ամերիկահայ ուխտավորական մի մեծ խմբի, որը եկել էր համբուրելու հայրենի սրբազան հողը և աղոթելու ա. Էջմիածնի խորանների առաջ: Ազգիս Հայրապետը հայրական գորովագույթ սիրով գրույց է ունենում նրանց հետ, հետաքրքրվում է նրանց կյանքով և պատասխանում բազմաթիվ հարցերի:

Վերջում Հայոց Հայրապետը օրհնում է բոլոր ուխտավորներին և ցանկանում նրանց նորանոր հաջողություններ:

Ժամը 11-ին սկսվում է ա. պատարագը: Եկեղեցու զանգերի զվարթ դողաճի ներքո, շրջապատված Մայր Աթոռի միաբաններով և իր պանդուխտ զավակներով, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Մայր տաճար:

Օրվա պատարագիչն է տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը, Խաչվերացի տոնի խորհրդի և նրա հոգևոր մեծ նշանակության մասին:

Հավարտ ա. պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, տեղի է ունենում հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Այնթապի հերոսամարտի նահատակների և «համօրէն ննջեցելոց ազգիս հայոց»:





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Սեպտեմբերի 5-ին, կիրակի.—Դ կիրակի զկնիս և Աստուածածնի.

Մայր տաճարում և պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գըտնըվող, Կահիրեի Գալստյան վարժարանի տնօրեն տ. Ներսէս վրդ. Փապունջյանը և քարոզում «Եւ արար Աստուած զմարդն ըստ պատկերի իրում» բնաբանով:

Ա. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Սեպտեմբերի 12-ին, կիրակի.—Խաչվե-րաց.

Մայր տաճարում և պատարագ է մատուցում տ. Հուսիկ եպս. Սանթրուքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Վեհափառ Հայրապետը Խաչվեւրացի խորհրդի հոգևոր նըշանակության մասին:

Երեկոյան, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է Թափոյր Խաչվեւրաց-ի՝ Մայր տաճարի շուրջ երիցս պտտմամբ:

*
* *

Սեպտեմբերի 18-ին, երկուշաբթի.—Յիշա-տակ մեռելոց.

Մայր տաճարում և պատարագ է մատուցում տ. Նշան քնն. Բեյլերյանը:

Հավարտ և պատարագի կատարվում է «հոգեհանգիստ, վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Սեպտեմբերի 14-ին, երեքշաբթի.—Այսօր Կանադայից Մայր Աթոռ է ժամանում Տորոնտո քաղաքի հայոց և Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ տ. Ժիրայր վրդ. Թաշճյանը:

Իջման և սեղանի առաջ իր աղոթքն ու ուխտը կատարելուց հետո, տ. Ժիրայր վրդ. Թաշճյանը Վեհափառում աջահամբույրով ստանում է Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

*
* *

Սեպտեմբերի 16-ին, հինգշաբթի.—Այսօր Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, տ. Ներսէս վրդ. Փապունջյանը մեկնում է Կահիրե՝ իր պաշտոնատեղին:

*
* *

Սեպտեմբերի 19-ին, կիրակի.—Մայր տա-ճարում և պատարագ է մատուցում տ. Աղան արեղա Բալիոզյանը:

Ա. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Սեպտեմբերի 22-ին, չորեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Բուխարեստից Մայր Աթոռ է ժամանում ծանոթ մտավորական Հակոբ Սիրունին՝ որպես Վեհափառ Հայրապետի հյուրը:

Սեպտեմբերի 17-ին, ուրբաթ.—Այսօր, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը Վեհաքանոնում ընդունում է այցելությունը ԱՄՆ-ի եկեղեցական երիցական միացյալ եկեղեցու Էկումենիկ առաքելության և հարաբերությունների հանձնաժողովի անդամ և Էկումենիկ կապերի խորհրդական Նորման Ա. Հորների:

Հարգելի հյուրն այնուհետև լինում է Մայր տաճարում, այցելում հոգևոր գեմարան, «Էջմիածին» ամսագրի խմբագրություն և Մայր Աթոռի տպարան:

Սեպտեմբերի 25-ին, շաբաթ.—Այսօր Ամերիկայի Միացյալ Նահանգներից ուխտա-

վորաբար Մայր Աթոռ է ժամանում տ. Տիրան արքեպ. Ներսիսյանը:

Մայր տաճարում իր աղոթքն ու ուխտը կատարելուց հետո Վեհաքանոն Հայոց Հայրապետին է ներկայանում տ. Տիրան արքեպիսկոպոսը:


Նույն օրը, ժամը 12-ին, Մայր Աթոռ է այցելում մարշալ Համազասպ Բաթաջանյանը: Վեհափառ Հայրապետի և բարձրաստիճան գինվորականի միջև տեղի է ունենում ջերմ գրույց՝ սրտագին մթնոլորտում:

Սեպտեմբերի 26-ին, կիրակի.—Տօն է Վարագայ սրբոյ Խաչի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Ժիրայր վրդ. Թաշճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Այլ ինձ քաւ լիցի պարծիլ, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:





ԱՆՏԻՊ ԷԶԵՐ Տ. ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՆԱՄԱԿԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ

Երջանկահիշատակ Տ. Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանը (1867—1952) հայ մշակույթի մեծագույն երախտավորներից մեկն է, որը թողել է գիտական-հայագիտական արժեքավոր ժառանգություն:

Գարեգին Կարապետի Հովսեփյանը ծնվել է 1867 թ. դեկտեմբերին Զիվանջիի գավառի Մաղավուզ (Չարդախլու) գյուղում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, և ապա Ծուշիի թեմական դպրոցում, այնուհետև սովորել է ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և դարձել է Էջմիածնի միաբան: Բարձրագույն մասնագիտական կրթությունը ավարտել է Գերմանիայում, սովորելով մի շարք անվանի գիտնականների մոտ, ուսումնասիրելով աստվածաբանություն և փիլիսոփայության պատմություն: 1897 թ. ավարտել է Լայպցիգի համալսարանը ստանալով փիլիսոփայության դոկտորի աստիճան:

Գարեգին սարկավագ Հովսեփյանը Խրիմյան Հայրիկի օրոք ձեռնադրվել է արքեպիսկոպոս և նշանակվել դասախոս Գևորգյան ճեմարանում, ավանդելով մի շարք առարկաների թվում նաև հայոց մատենագրություն: Այդ թվերին մի խումբ ուսանողների հետ շրջագայել է հայրենի երկիրը և ուսումնասիրել հնությունները, վանքերը, հավաքել ժողովրդական բանահյուսական նյութեր, որոնք և դառնում են ապագայում իր ուսումնասիրության հիմնական առարկաները:

Գարեգին վարդապետ Հովսեփյանը հետագայում վարել է մի շարք հոգևոր և վար-

չական պատասխանատու պաշտոններ: Եղել է Թիֆլիսի հայոց թեմի առաջնորդական տեղապահը, սերտ կապերի մեջ է եղել Թիֆլիսի հայ գրողների՝ Հ. Թումանյանի, Մուրացանի, Ղ. Աղայանի և այլոց հետ: 1901—1904 թթ. վարել է Երևանի թեմական դպրոցի տեսչությունը, 1905 թ. Գևորգյան ճեմարանի վերատեսչի պաշտոնը, իսկ 1906—1907 թթ. եղել է «Արարատ» ամսագրի խմբագրապետը: Որոշ շրջանում մասնակցել է պրոֆ. Մատի կողմից կատարված Գառնիի Տրդատի տաճարի պեղումներին, արել է մի շարք հայտնություններ, եղել Մառի լավագույն աշակիցներից մեկը ու նրա միջնորդությամբ և առաջարկությամբ ընդունվել Կայսերական հնագիտական ընկերության իսկական անդամ:

Գարեգին վրդ. Հովսեփյանը հետագայում Երուսաղեմ, Գերմանիա և Պոլիս գնալով, այնտեղի մատենադարանների ձեռագրերից ընդօրինակել է բազմաթիվ մանրանկարներ, հրատարակել է մի շարք ուսումնասիրություններ թե՛ մամուլում և թե՛ առանձին գրքերով, որոնց թիվը հասնում է շուրջ 30-ի:

1920 թ. Հայաստանի համալսարանի բացման ժամանակ նշանակվում է ուսուցչապետ հայ արվեստի և հնագիտության ամբիոնում:

Օրջել է արտասահմանի բազմաթիվ հայ գաղութներում, ամեն տեղ աջակցություն ցույց տվել հայ ժողովրդի մշակութային կազմակերպություններին և մամուլին:

1936 թ. ընտրվում է ամերիկահայոց առաջնորդ, այնտեղ հոգևոր, մշակութա-

ին և հայրենասիրական մեծ գործունեություն է ծավալում:

Հայրենական Մեծ պատերազմի օրերին հանգանակություն է կատարել «Սասունցի Դավիթ» հրաապելի գործայան օգտին. միաժամանակ բազմաթիվ դասախոսություններ կարդացել հայ մշակույթի և կյանքի շուրջը:

Գարեգին արք. Հովսեփյանը թողել է գիտական-հնագիտական մեծարժեք և մնալուն ժառանգություն՝ ժողովրդական բանահյուսություն, եկեղեցական-կրոնական, պատմական - բանասիրական - մատենագրական բովանդակությամբ հայ արվեստի ու մշակույթի տարբեր հարցերի շուրջը:

1943 թ. ընտրվել է Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս: Վախճանվել է 1952 թվին:

Տ. Գարեգին Հովսեփյան կաթողիկոսի հիմնական արխիվի մի կարևոր մասը պահպանվում է ս. Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում, մի մասը՝ Անթիլիասի կաթողիկոսարանի դիվանատանը, իսկ մի փոքրիկ հատված՝ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, իր անվան ֆոնդում:

Թանգարանում է գտնվում նաև իր գրած նամակների մի մասը, որը հասցեագրել է հայ անվանի մտավորականների, հայագետների, այդ թվում Կարապետ Կոստանյանին, Գյուտ քահանա Աղանյանին, Գրիգոր Խալաթյանին, Արշակ Չոպանյանին և այլոց:

Այդ նամակները շոշափում են կարևոր խնդիրներ՝ կապված հոգևոր, հայագիտական, ազգային և մշակութային հարցերի և մեծավաստակ գիտնական եկեղեցականի բեղուն գործունեության հետ:

Ստորև ընթերցողի ուշադրությանն ենք հանձնում անվանի գրականագետ-քննադատ, ազգային հասարակական գործիչ Արշակ Չոպանյանին հղած նամակների մի կաթիլը ու գերակշռող մասը:

ԳՈՀԱՐ ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ

1923, նոյեմբերի 16, <Էջմիածին>

Սիրելի բարեկամ

ԱՐՇԱԿ ՉՈՒՄԱՆՅԱՆ

Դեպքից օգտվելով գրում եմ մի կարևոր խնդրի համար. Ձեզ հայտնի է, որ իմ աշխատությունները թե մանրակարծության, թե հայ հնագրության և թե իշխանական տոհմերի պատմության շարքը մնացել են առանց տպագրության. հույս չկա, թե մե-

զանում հնարավորություն և միջոց կլինի այդպիսի հաստատվոր ու մեծածախս գործեր տպագրելու: Իսկ ես ծերանում եմ և կազմությամբ էլ քնքույշ և թույլ. պետք է նախօրոք մտածել այդ մասին, որպեսզի երկարամյա աշխատանքներս մեռնելուցս հետո չոչնչանան: Միակ միջոցն այն է, որ Եվրոպա գալ կարողանամ, խոստացված գումարները ձեռք բերելու կամ նոր մեկենասներ գտնելու. հավատում եմ, թե կհաջողվի ինձ, եթե Եվրոպայում հաջողվի ինձ դասախոսություններով ցուցադրել այդ աշխատանքները հայ գաղութների և եվրոպացիների առաջ: Խոսեցեք Գաբրիել էֆ. Նորատունկյանի հետ ևս, արդյոք հնարավոր չէ՞ ինձ համար առաջնորդի պաշտոն ստանալ և Լոնդոնի համալսարանի հովիվ լինել, որպեսզի Եվրոպական կենտրոնում կարող լինեմ թե գիտական աշխատություններս լրացնել և թե պատրաստները տպագրության հանձնել: Հավատում եմ, թե գաղութներին էլ օգտակար կլինեմ իմ գործունեությամբ և քարոզներով, ճանապարհ եմ ընկնում Պետրոգրադ և վերջին րոպեին է ավելի մանրամասնորեն գրել չեմ կարող: Մեր կառավարությունն էլ համակրանքով է վերաբերվում դեպի իմ աշխատանքները, բայց գիտեք, որ այժմ աղքատ և նյութապես վերածնության կարող Հայաստանը միջոց չունի այդպիսի մեծածախս գործեր հրատարակելու:

Սիրո ողջունով

Ձեր ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Գրեցեք Էջմիածին

1924, դեկտ. 10, ս. Էջմիածին

Մեծարգո պարոն

Ա. ՉՈՒՄԱՆՅԱՆՅԻՆ

Ա. Էջմիածնի Գերագույն խորհուրդը շնորհավորում է և օրհնում Ձեր գրական հասարակական բեղմնավոր և օգտաշատ գործունեության երեսուն և հնգամյակը: Տասնյակ տարիներից ի վեր Ձեր միտքն ու գրիչը, խոսքն ու գործը նվիրել եք մեր ժողովրդի վերածնության գաղափարին: Ձեր բանաստեղծական երկերով, ուսումնասիրություններով, հրատարակություններով և թարգմանություններով կատարել եք մի բացառիկ և գնահատելի գործ, որ պատվի պսակ կարող է կազմել Ձեր նակատին: Դուք Ձեր հմտակից հրատարակություններով և ուսումնասիրություններով ոչ միայն մեր նոր գրականության և բանաստեղծության հմուտ լուսարանողն եք հանդիսացել,

այլ և այն սակավներից մեկը, որ խավարից և փոշիների տակից լույս աշխարհ է բերել և մատչելի դարձրել միջնադարյան մեր ստեղծագործության թանկագին գոհարները: Աղքատ և խղճուկ համարված մեր միջնադարը Ձեր աշխատություններով դարձավ մեր գրականության ամենից գնահատելի էջերից մեկը և պարծանքը նաև օտար, քաղաքակիրթ ազգերի առաջ: Ձեր անդուլ աշխատանքով և թարգմանություններով ծանոթացրիք և գնահատել տվիք եվրոպական աշխարհին մեր ժողովրդական և գրական ստեղծագործության արդյունքները:

Թող օրհնվի Ձեր սիրտն ու հոգին, Ձեր միտքն ու զգացմունքը, որ տասնյակ տարիների ընթացքում նվիրված է եղել մեր ժողովրդի վերածնության և գեղեցկի ու նշմարտի սպասավորության գործին:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Մեսրոպ արքեպիսկոպոս
Խորեն արքեպիսկոպոս
Բագրատ արքեպիսկոպոս
Գարեգին եպս. Հովսեփյան
Զավեն եպիսկոպոս
Գյուտ եպիսկոպոս

1980, ապրիլի 15, Ն. Նախիջևան

Հարգելի՛ բարեկամ

Ա. ՉՈՒՍՆՅԱՆ,

Փետր. կեսերից բացակա էի թեմական գործերով Մոսկվա, Լենինգրադ գնալու պատճառով, ուստի և չկարողացա Հավուց թաղը վերջացնել. վերադարձից հետո էլ մասամբ հոգնած հույզերից, մասամբ գործերով ծանրաբեռնված, անկարող եմ գիտական աշխատանք կատարել, գրեթե մինչև ամսույս վերջը: Հուսամ այդ պարտքս կատարած կլինեմ մինչև մայիսի կեսերը և ուղարկված:

Սույն նամակի հետ ուղարկում եմ Բարեգործական Միության մի դիմում, նպատակն ունենալով գործերիս լրացման համար և մի նամակ Նորատունկյան էֆ. անունով, կարող եք երկուսն էլ կարդալ, իրազեկ լինել և ըստ կարելիության շուտ փոստով կամ անձամբ հասցնել ըստ պատկանելյաց, որովհետև հասցեները չգիտեմ:

Ձեմ երկրորդում Ձեզ այն հանգամանքները, որ գրված են այնտեղ. եթե հաջողվի այդ նպատակը, արտաստությունների դժվարություններն էլ ինքըստինքյան կհարթվին: Ձեզ շատ եմ խնդրում, որ Դուք էլ ըստ հնարավորության աշխատեք խնդրին դրական լուծումն տալ, որից շատ բան է կախված. եթե հաջողվի ինձ մասնակցել Լենինգրադի ցուցահանդեսին, մեկ երկու գործիս

տպագրությունը ակադեմիայի հաշվին ապահովված է, խոստում եղած է շատ ազդեցիկ անձանց կողմից:

Հավուց թաղի Ամենափրկչի մասին էր Ակադեմիայում արած զեկուցմանն նույթը, որին ներկա էին ակադավոր ակադեմիկներ:

Եթե երեք տարվա ընթացքում կարողանա ինձ Բարեգործականը նպատակ հասցնել, ոչ միայն կվերջացնեմ գլխավոր գործերս, այլև կուլտուրական ահագին արժեք գումարած՝ լուսանկարներով, մանրանկարների գունազարդ պատճեններով և այլն. այնուհետև գործն ինքը յուր ճանապարհը կբանա: Ես չեմ կարող հանդարտել, գործը հրատարակության տալ, երբ գիտեմ, թե այս կամ այն ինչ խնդիր կա չլուսաբանված, որ կարող է օգնել ամբողջության լրության. միջազեռական և սասանյան հոսանքների մասին մեզանում օրինակ, բավական նյութ ունիմ, բայց չեմ կարող գիտական խիղճս հանգըստացնել, երբ գիտեմ, որ Սյունյաց երկրում Ծիծեռնավանքը կա, որ ամենամեծ և հնագույն բազիլիկան պիտի լինի Հայաստանում, պատկերաքանդակներով և զարդաքանդակներով, և ես հաստատ տեղեկություն և պայծառ գաղափար չունիմ այդ մասին:

Արտասահման գալս հաջողվեք էր, կկարողանայի համակրություն զարթեցնել դասախոսություններով և ցուցահանդեսներով, բայց այդ դուռը փակված եմ համարում. մանրանկարչական գործը պիտի աշխատեմ Լենինգրադում կարգավորել և այնտեղից տպագրության ուղարկել: Այնտեղ կարող կլինեմ նաև վերջին ժամանակի գիտական գրականությունից օգտվել, որին այժմ շատ քիչ եմ հաղորդակից, անկարող լինելով նույնիսկ անհրաժեշտ գրքերը Եվրոպայից բերել տալ:

Ընորհակալությամբ կարդացի Ձեր գրախոսականը: «Մի էջ»-ը իրոք պատկերների կողմից շատ վատ է տպագրված: Խնդրում եմ շուտ պատասխան:

Սիրո ողջունիմ

Ձեր ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Եթե դրական որոշում կլինի, հեռագրով, մի բառով հաղորդեցեք ինձ, որպեսզի պատրաստվիմ Լենինգրադի համար:

1980, հունիսի 30, ա. Էջմիածին

Սիրելի՛ բարեկամ

Ա. ՉՈՒՍՆՅԱՆ,

Ստացել եմ Ձեր նամակը, կապված բարեգործականին եղած դիմումի հետ. ստացել եմ և Մայեզյանի սիրալիր պաշտոնագիրը:

այստեղ եւ առանձին հույս չունիմ, եթե նախապես իմացած լինեի, կիւնդրեի չգրել: Ծատ ափսո՛ս, որ հնարավորություն չեմ ունենալ ժամանակս ալնայեւ արդյունավորել, ինչպես կարող էի նյութական դյուրություն ունեցած դեպքում: Հայտնեցեք շնորհակալություն և մեծարգո Գ. Է. Բ. Նորատունկյանին յուր հոգացողության համար:

Կաթողիկոսի մահվամբ Էջմիածին կանչվեցաւ ուրեմն և Լենինգրադի ցուցահանդեսին մասնակցել հնարավոր չէր, եթե նյութական դյուրություն էլ ունենայի. բայց առանձին ցուցահանդես ևս կազմել կարելի կլիներ. Էրմիտաժի արևելյան բաժնի վարիչ պրոֆ. Օրբելին ինձ վստահեցրել է այդ մասին, հենց յուր բաժնում դյուրացնել այդ գործը: Բերլինից պետք է արդեն մանրանկարներս ուղարկված լինին ակադեմիկ Մատին, թեև նորանից տեղեկություն չունիմ ստացման մասին: Վրաց լուսավորության կոմիսարիատը Գերմանիայում ցուցահանդեսներ է կազմակերպում վիրական արվեստի մասին. ես անհատաբար կարող էի Լենինգրադում առանձին ցուցահանդես կազմակերպել գիտական զեկուցումներով, եթե նյութական ամենաթեթև դյուրություն ունենայի: Որոշ դժվարությունների վերա չեմ ուզում ծանրանալ:

Ձեզ ուղարկելիք աշխատանքը լիովին պատրաստ է, բայց պակասում են երեք կարելի լուսանկար, որ մարտին պրոֆ. Օրբելին վերցրեց յուր համար նեգատիվներ պատրաստելու, և մինչև այժմ հետ չեմ ստացել, թեև նամակ եմ գրել հատուկ այդ մասին. պիտի հեռագրեմ, եթե այս երկու օրս էլ չստացա: Ունիմ այդ լուսանկարների նեգատիվները, բայց պահված են, բավական ժամանակ և աշխատանք պիտի գործադրել գտնելու և նոր արտադրություն կատարելու համար: Աշխատանքը մի քիչ մեծ դուրս եկավ, քան կարծում էի, մաքուրը չսխառարատւած. 110 մեծ երես և քառասունի չափ նկար, բայց գրեթե, ամբողջապես նորություն յուր արձանագրություններով և հնագիտական նյութերով. նվիրված է ակադեմիկ Մատին և պետք է նաև առանձին գրքով հրատարակվի. եթե մեծ կլինի «Անահիտ»-ի համար և հնարավորություն չէք ունենալ գրքով ևս հրատարակելու, կպահեք, ես կկարգադրեմ, թե ուր պիտի ուղարկել, Ձեզ ուրիշ հոդված կուղարկեմ: Մանրամասնություններ հոդվածի հետ:

Առայժմ ուղարկում եմ Ձեզ մի փոքրիկ հոդված. եթե Դուք, օր. Սիրարիի Տեր-Ներսեսյանը կամ Հաբեղյանը կարողանաք արձարծված խնդիրը լուսաբանել, անձամբ քննության ենթարկելով Ժաք Մաթեոսյանի

ձեռագիրը և իմ հոդվածի հետ կամ հետո հրատարակել «Անահիտ»-ի մեջ, շատ գոհ կլինիմ:

Ծոտով պաշտոնական բարի լուրեր կըստացվին, Փարիզի հայոց Առաջնորդարանում կաթողիկոսական ընտրություն կարգադրությունների նկատմամբ. մեր կառավարությունն այս խնդրում միանգամայն կորրեկտ և բարյացակամ վերաբերմունք ցույց տվավ, ներկայացուցիչ ուղարկեց ցավակցություն հայտնելու կաթողիկոսի մոմիվան առթիվ և ուրիշ դյուրություններ թաղմանը հավաքված պատգամավորների և հյուրերի կառավարության համար: Այժմ էլ յուր համաձայնությունն է հայտնել ազատ ընտրության, արտասահմանյան պատգամավորների գալստյան, ժողովի համար նշանակված օրակարգի, ընտրության հետ կապված խնդիրների լուսաբանության համար թերթ հրատարակելու, արտասահմանյան թերթեր ստանալու և այլն, որով մեր դժվարին գործը որոշ չափով դյուրանում է: Հանգուցյալ կաթողիկոսի կողմից հաստատված եկեղեցական սահմանադրության թելադրության համաձայն, ընտրությունը Գերագույն Հոգևոր խորհրդի կողմից նշանակված է հոկտ. 26-ին. հույս ունինք, որ ժամանակը միանգամայն բավարար պիտի լինի նախապատրաստական բոլոր աշխատանքը կատարելու և պատգամավորներ ընտրելու համար. պաշտոնական հաղորդագրություններ և կարգադրություններ շուտով կուղարկվին Նորհրդային Միության և արտասահմանյան բոլոր թեմերը: Եվրոպայի թեմից կարող են չորս պատգամավոր գալ. աշխատեցեք ընտրվել և Հայաստան գալ. կծանոթանաք նաև երկրի վիճակի և կատարվող մեծ շինարարության հետ: Հույս ունինք, թե զգաստության և գործնական իմաստության հոգին իշխող պիտի լինի Էջմիածնում գումարվելիք մեծ ժողովի մեջ և կարող պիտի լինինք ընտրել մեր հիմնվուրց սրբազան Աթոռի համար արժանավոր աթոռակալ:

Արմենակ Սազրգյանի հոդվածներն ստացել եմ շնորհակալությամբ, բայց ես կարծում էի, թե հնարավոր կլինի ամբողջական աշխատությունն ստանալ, որ մեր և պարսկական մանրանկարչության փոխազդեցության խնդրի լուսաբանության համար կարող էր օգտակար լինել: Կաշխատեմ օգտվիլ Հանրային մատենադարանին ուղարկած օրինակից:

Մինչև հուլիսի 20-ը այստեղ եմ. ապա կարճ ժամանակով Նախիջևան կերթամ իմ թեմի ընտրությունները դեկավարելու հա-

մար. պատասխանն այնտեղ կարող եք ուղարկել:

Սիրո ողջուններով

Ձեր ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

1982, դեկտ. 6, ա. Էջմիածին

Հարգելի բարեկամ

Ա. ՉՈՒԱՆՅԱՆ

Սեր տեսակցության հետևյալ օրը կամեցա դարձյալ տեսնվել Ձեզ հետ, երկու անգամ թանգարան եկա, բայց Դուք չկայիք: Ձեզ հետ առիթ ունեցա խոսելու, բայց, գուցե, Ձեր հիշողությունից վրիպած լինի Էջմիածնի ինձ ուղարկած ճանապարհածախսի համար. ես 400 դրլարի փոխարժեքն ստացել եմ մեր Միության դրամներով, դրլարը 1 րուրի 96 կոպեկ: Այդ գումարից վեց հարյուր րուրին տվել եմ վանքին, երբ կարիք ունեք, իսկ գանձարանում ոչ մի կոպեկ, ստացագիրներն էլ ինձ մոտ են, մնում է 184 րուրին: Այս մասին գրել էի տ. Վոսմաշյանի եպիսկոպոսին, բայց պատասխան չստացա: Կիսկորեմ հասկացնեք իրեն գործի էությունը:

Սենեքերիմ Տեր-Հակոբյանին հայտնեցի Ձեր հանձնարարության մասին, բայց չեմ կարծում, թե կարողանա կատարել. եթե հիշել կարող եք, գրեցեք ինձ, ազատ ժամանակ կգրեմ և կուղարկեմ:

Հուսամ, թե Հայաստանից տանում եք լավագույն տպավորություններ, հարուստ տեղեկություններով: Հավատում եմ, որ նա հիմի պիտի դառնա մեր ժողովրդի ամբողջության վերածնության՝ հոգևոր-գեղարվեստական ստեղծագործող ժողովուրդ դառնալու, ինչպես մեր նախնիքն են եղել:

Ձեզ տեսնելու կրկին առիթը, երևի, չեմ ունենալ. բարի ճանապարհ եմ մաղթում Ձեզ և երկար տարիներ արդյունավոր Ձեր բարձր կոչման գործունեության մեջ, ինչպես մինչև այժմ:

Եղբայրական սիրով

Ձեր ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

1983, մարտի 28, ա. Էջմիածին

ԱՐՇԱԿ ՉՈՒԱՆՅԱՆՑԻՆ

Փարիզում

Սիրելի՛ բարեկամ, Ձեր պատվական նամակը հունվարի 23-ին գրված, ստացել եմ ժամանակին, բայց, տարաբաղդաբար չեմ կարողացել անմիջապես պատասխանել:

Նկարագարդ կոնդակի մասին զեկուցիս. Հայրապետին, կատարել տվեք ինչ որ պետք է իմ ցուցումների համաձայն, մի ճաշակավոր բան պատրաստելու, և ուղարկեցեք հաշիվը. մենք հարկավորը կպարգադրենք. ոչ բարեգործականին և ոչ եկեղեցու վարչության նեղություն պատճառելու կարիք չկա առայժմ: Հուսամ, թե չեք մոռացել, որ երեք տեսակ պիտի տպագրվի, մեծ, միջակ և փոքր չափերով, յուրաքանչյուրից հինգ-հինգ հարյուրական: Եթե մեծերը շուտ հասնեին, և անդրանիկ օրհնության կոնդակը կարողանայինք դորա վերա տպել տալ, շատ գոհ կմնայինք: Ի դեպ, կոնդակը վաղուց պատրաստ է, բայց մինչև այժմ ուշացել է տեխնիքական պատճառով. եթե այս հապաղումը վերջավորվի, իհարկե, առանց շատ ուշանալու, ճաշակավոր զարդագրությամբ, կմոռանանք մինչև այժմ ուշանալու սրտնեղությունը:

Վեհին զեկուցել եմ նաև Մալխասյանի թոռան մասին. հարկավորը կարգադրված է. ի սրտե ուրախ կլինիս. Հայրապետը, ինչպես և մենք, եթե երեխայից սպասվածը իրականություն դառնա հուրախություն ոչ միայն մերձավորների, այլ և արվեստի բոլոր բարեկամների: Բայց շատ զգույշ պիտի վարվել երեխայի հետ, որ բուռն և մեծ թոփաբներով չգաղաճա, այլ աստիճանաբար, մարմնական աճեցողության համեմատ:

Կարդացել եմ Տ. Հակոբյանի մոտ Ձեր նամակի այն մասերը, ինչ վերաբերում են Աղեքսանդրի վարքի նկարներին, Ալիկյանի արտագրած Քուչակյան տաղաշարքերին և Մարիայի լուսանկարներին. վերջինը պատրաստ է, խնդրում է միայն շտապեցնել մեքենայի առաքումը: Կինոֆիլմով, լուսնոկոմի հասցեով, Ս. Տեր-Հակոբյանին հասցնելու, անհատական: Ես ինքս Ալիկյանի արտագրությունների համար օգտակար լինել կարող չեմ, բայց, եթե հնարավոր չեղավ ստանալ, հայտնեցեք ինձ տեղերը, ես կարտագրեմ կամ կլուսանկարեմ Ձեզ համար. նույնը և Աղեքսանդրի վարքի պատկերների համար, եթե օրթոխրոմատիկ լավ ապակիներ և համապատասխան թուղթ գտնել կարողանամ:

Գուսանի անվան շուրջն ստեղծված աղմուկը շատ է անհամ. գերագույն խորհուրդը կամեցել է կրոնական ժողովի կատարած սխալի հետևանքով ստեղծված դժվար կացությունից ազատել նրան, իսկ այնտեղ նրստածներից ոմանք առանց հասկանալու, պրիստիժի խնդրի դարձրին և բարձունքից ձյան գունդը գլորեցին, որ յուր հետգհետե հավելումներով, զգվելի կերպարանք է ըն-

դուռնում: Այն, մեր գործիչներից շատերին և լրագրության շատ է պակասում զգաստության և զգոնության ոգին: Գուցե ստիպված կլինինք այդ զգվելի պատմության հանգամանքների բացատրությամբ ևս զբաղվել:

Ս. Հայրապետը և ամենքս ստողջ ենք, և աշխատում ենք հետզհետե կանոնավորություն մտցնել գործերի մեջ:

Սիրո ողջուններով՝

Ձեր ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Հ. Գ.—Զատիկի տոների առթիվ գնում եմ Նախիջևան, բայց ապրիլի վերջերին այստեղ կլինեմ և կաշխատեմ մայիսի ընթացքին մի հոդված հասցնել «Անահիտ»-ի համար: Ինձ ողարկելիք օրինակը Նախիջևան ուղարկեցեք, Արեւյանի հասցեով: Կիսնորեի հետամուտ լինիք իմ լուսանկարների ստացման մասին:

1934, օգոստոսի 22, Էջմիածին

Սիրելի բարեկամ,

Ա. Չոքանյան

Ձեր վերջին երկու նամակը, վերջինը Գեորգ եպիսկոպոսի ծրարի մեջ, ստացել եմ, ինչպես տեսնում եք դեռ այստեղ եմ և այսօր էլ չգիտեմ հաստատ, թե ե՞րբ պիտի նամակարկեմ ընկնեմ, թեպետ ըստ երևույթին ոչ ուշ: Համեմայն դեպս լավ եմ համարում ու-

ղարկել Ձեզ Քուչակյան կամ համեմատել այն նյութերը, որոնք իմ նկատողության տեսարակների մեջ նշանակած ունեն: Սենեքերիմը զբաղված լինելով, չկարողացավ այդ կողմից օգտակար լինել: Աղեքսանդրի վարքի մանրանկարների համար այս անգամ հիշեցնել չկարողացա, որովհետև բացակա է. քանի շաբաթ է, փակ է մատենադարանը արձակուրդի պատճառով: Ձեռագրի հիշատակարաններն էլ մի առ մի արտոնագրել և ողարկել չեմ կարող, մատենադարանի փակ լինելու պատճառով. բայց եթե մինչև դուրս գալս չբացվեցավ, կարող եք օգտվել «Արարատ» 1919 իմ «Գրիգորիս Աղթամարցի» հոդվածից, այնտեղ տեղեկություն կա այդ ձեռագրի հիշատակարանների և ժամանակի մասին:

Ողարկում եմ նաև մի հոդված Եղիշե Թադևոսյանցի էությունների ցուցահանդեսի մասին, թեպետ մասնագետ չեմ նորա արվեստի մեջ, բայց սերս ու հարգանքս դեպի Թադևոսյանցը ստիպեց ինձ գրել այդ փոքրիկ գնահատականը. կարծում եմ, ցուցահանդեսի էությունն ու գնահատականը սխալ չէ հասկացված իմ կողմից:

Տ. Վոսմաշյան եպիսկոպոսից նամակ չեմ ստացել:

Սիրո ողջուններով

Ձեր ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
(Շարունակելի)



Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԾԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՐՀԻՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ*

ՄԱՐԴԱՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

Հնդկաստանի մեծագույն և բազմամարդ բաղաբներից մեկն է Մադրասը, որպես համաշխարհային վաճառականության կենտրոն, որպես առևտրական մեծ շտեմարան՝ նշանավոր պետական ու հանրային հոյակապ իր շենքերով, բազմաճյուղ և լայն պողոտաներով ու փողոցներով և բանուկ իր նավահանգստով:

Վավերական պատմական աղբյուրների վկայությամբ հարավային Հնդկաստանում և, մանավանդ, Մադրասի մեջ հայերը հաստատվել են ԺԶ դարի սկզբներից:

Հնդկահայության եկեղեցական-մշակութային, ազգային-հայրենասիրական կյանքի առաջին ու կարևոր կենտրոնը հանդիսացել է Մադրասը:

Այդ իսկ պատճառով Մադրասի հայ համայնքը համարվում է «հնդկահայության «փառաց մայր», կենսայից ուստան և հայկական մտածումի և գործունեության երբեմնի հրատապ վառարան»⁵²:

Ծառ հին է ընդհանրապես Հնդկաստանի և, մանավանդ, նրա հարավային երկրամասի հետ հայ ժողովրդի հարաբերությունների պատմությունը:

Հնագույն անցյալում հայ-հնդկական առևտրական հարաբերությունների հնագույն աղբյուրը հանդիսանում է, ըստ հ. Ղ. Ալիշանի, հույն պատմիչ Քսենոֆոնի «Կյուրոպեդիա» (դաստիարակություն Կյուրոսի) աշխատությունը. «Նոյն ինքն Քսենեփոն ի նոյն գիրս (Կիրամարզին) ասէ զԽաղտեաց և զՀայոց ստեպ երթեկեղ ի հնդիկս իսկ»⁵³: Բազմահմուտ Մխիթարյանը ավելացնում է միաժամանակ, որ առևտուրը հայերի և հնդիկների միջև շարունակվում է նաև հետագայում, «թեպետ և ոչ յիշիցին, այլ աներկբայ համարելի է և շատ կամ սակաւ անընդհատ առևտուր հայոց ի Հնդիկըս»⁵⁴: Ապա հ. Ղ. Ալիշանը նշում է նաև, որ Ժ դարի երկրորդ կեսին Սմբատ Բ Բագրա-

* Շարունակված: «Էջմիածին» ամսագրի 1971 թվականի № Ը-ից:

⁵² Թորգոմ արքեպ. Գուշակյան, Հնդկահայք, տպավորություններ և տեղեկություններ, Երուսաղեմ, 1941, էջ 40:

⁵³ Հ. Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 493: Տե՛ս նաև պրոֆ. Ա. Գ. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հատոր Բ, Երևան, 1964, էջ 185—186:

⁵⁴ Նույնը, էջ 467:

տունի թագավորը Հնդկաստանից է բերել տալիս Անիի «հրաշափառ Կաթողիկէի գակն լուսոյ զԶահն բիրտդէայ, 80000 ոսկւոյ գնով»⁵⁵:

Հայերի և Հնդկաստանի առևտրական հարաբերությունների մասին հնագույն երկրորդ տեղեկությունը հաղորդում է Ե դարի վերջի բյուզանդական պատմիչ Պրոկոպիոսը, իր «Պարսկական պատերազմներ» գրքում⁵⁶:

Է դարի պատմիչ և Մուշի ա. Կարապետի վանքի վանահայր Հովհանն էպս. Մամիկոնյանն իր «Պատմություն Տարսնոյ» աշխատության մեջ, որը հնում վերագրվում էր Դ դարի մատենագիր Զենոն Գլակին, հիշատակում է ազգային-եկեղեցական մի ավանդություն, ըստ որի նավաբրիատոնեական շրջանում Դենեոս և Գիսանն երկու հնդիկ եղբայր իշխաններ դավադրություն են արքունի իրենց արքայի դեմ և ապա փախչում-ապաստանում հայոց Վաղարշակ թագավորի մոտ, որը և նրանց տալիս է «գերկիրն Տարսնոյ յիշխանութեամբ»: Հնդիկ երկու իշխանները Տարսնոյ շինում են Վիշապ քաղաքը և Աշտիշատի մոտ, Քարքեն լեռան վրա, «կանգնեցին գկուտն զայնոսիկ, զոր ի Հնդիկս պաշտէին»: Ս. Գրիգոր Լուսավորիչը քանդում է այս կուսուները և տեղը կառուցում ա. Կարապետի վանքը⁵⁷:

Մեր եկեղեցական պատմության մեջ «վաղուց պատմականացած ավանդություն է այն, թե հնդկաց առաքյալ Թովմասը Ասորիքն և Հայաստանն անցած է Հնդկաստան երթալու համար, ինչ որ առաջին գիծը կրճատնանշե հնդկահայ ամենահին հարաբերությանց հավանականույն իրողության մը, զոր վերջերս գիտականորեն ջանացած էր հաստատել Կալկաթայի համալսարանի հրեդիկ ուսուցչապետներեն մին»⁵⁸:

Հ. Դ. Ալիշանն ունի մի այլ հիշատակություն, ըստ որի մեծահարուստ հնդկահայ մի վաճառական՝ Մար Թովմա Կանա, Դ դարում, Անտիոքի Եփեսոսաբնու հայրապետի համաձայնությամբ, եպիսկոպոսներ, քահանաներ և քրիստոնյա զաղթականներ է բերում և հաստատում Մադրասի սահմանների մեջ, և տեղի մալաբար իշխանների քարյա-

ցականությամբ հիմնում է Գրանակոր գյուղաքաղաքը, որը հնդկերեն լեզվով կոչվում է Մահա-Ռենյա-Փաթամ, այսինքն քաղաք Մեծին Աստուծո, որ և եկեղեցիներ է կառուցում և բացում քրիստոնեական առաջին վարժոցները⁵⁹:

Մեսրոպ Մեթը «Հայերը Հնդկաստանում» իր աշխատության մեջ մի առանձին էջ է նվիրել «Առաջին հայը հարավային Հնդկաստանում» վերնագրի տակ (էջ 612), որ պորտուգալական հնագույն աղբյուրների վկայության համաձայն հաստատում է վկայականությունը հ. Դ. Ալիշանի հիշատակած Թովմա Կանայի, փոխելով միայն ժամանակաշրջանը: Ըստ Մեսրոպ Մեթի՝ Վասկո դե Գամայից (1498 թ. մայիս 20) ճիշտ 7 դար առաջ մի հայ վաճառական Թովմա Կանա կամ Թովմա Մար, որին պորտուգալական աղբյուրում անվանում են Թովմա Կանանետ՝ շեշտելով նրա հայ լինելը, առևտրական նպատակներով, 780-ին հասնում է Մալաբարի ափները:

Նույն Կանա Թովման կամ Կանայ Թովմա հայ վաճառականը, արժանանալով երկրի հնդիկ իշխանների համակրանքին և վստահությանը, մեծ արտոնություններ է ձեռք բերում նաև տեղի հնագույն քրիստոնյաների կրոնական, ընկերային, տնտեսական ազատության համար և «սիրելի ըլլալով Գրոշինի թագավորին, քրիստոնեական վարդապետության նորոգիչը կըլլա Հնդկաստանի մեջ»⁶⁰:

Հնդկաց աշխարհի առաքյալը համարվում է ա. Թովմասը (Մատթ. Ժ 3), որի անունով էլ հարավային Հնդկաստանի քրիստոնյաները կոչվում են «Ա. Թովմասի քրիստոնյաներ»:

Թովմաս առաքյալը նահատակվել է Մադրասի մոտ 68 թվականին, հետագայում և մինչև այսօր իր անունը կրող լեռան քարձուներին, որ և գտնվում է նրա աճյունը և Մայր տաճարը, որի խորանի վրա կանգնել է «լիմակոտ հնարվեստ մեծ խաչ մը», պահպանել են արձանագրությամբ. «Այս խաչը դրոշմված է այն քարեն, որուն վրա նահատակվեցավ առաքյալն Թովմաս»:

Թովմաս առաքյալն իր հետ Հնդկաստան է բերել, որպես սրբություն, Դուկաս Ավետարանչի կողմից նկարված ա. Կույսի նկարը, որը սերտ նմանություն ունի «հայկական այն պատկերին» կամ ա. Կույսի «Անձնուագործ դաստարակ»-ի հետ, որը Հայաստան է բերել ա. Բարթողիմեոսը⁶¹:

⁵⁵ Նույնը, էջ 467:

⁵⁶ Պրոկ. Ա. Գ. Առաքելյան, Նույնը, էջ 186: Տե՛ս նաև Արշակ Ալադյան, Պատմություն հայ գաղթականության, Կահիրե, 1949, էջ 140:

⁵⁷ Հովհանն էպս. Մամիկոնյան, Պատմություն Տարսնոյ, Երևան, 1941, էջ 107—108: Տե՛ս նաև Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Ա, Երևան, 1944, էջ 403—406:

⁵⁸ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 43:

⁵⁹ Հ. Դ. Ալիշան, նույնը, էջ 466:

⁶⁰ Արշակ Ալադյան, նույնը, էջ 140:

⁶¹ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 75:

Ինչ էլ լինեն Մադրասի հայ համայնքի նախապատմական գոյության մասին եղած ազգային-եկեղեցական այս ավանդություններն ու պատմական ժխտ ակնարկները, ԺԶ դարում Մալաբարի ափունքների վրա և մանավանդ Մադրասում՝ այն հնագույն մատուց, որը կոչվում էր «Ս. Թովմասի քաղաք», երևացել են ջողայեցիք որպես առեվտրականներ:

Ս. Թովմաս լեռան բարձունքին կա հայկական արձանագրություն հնագույն մի հայ եկեղեցու, որը կրում է 1547 թվականը: 1707-ին Սաֆարյան մահտեսի Զաքարը, «ի յիշատակ Սաֆուլին», շինել կամ վերանորոգել է նույն բարձունքի վրա կանգնած ս. Թովմասի եկեղեցին, իսկ 1726-ին մի այլ նշանավոր հայ Պետրոս Ոսկան(յան) իր ծախքով կառուցել է տվել բլրի գագաթը վերելակող, 166 աստիճաններով, «մեծածախս և վիթխարի քարե սանդուղը»⁶²:

ԺԶ դարում որևէ եվրոպացու հարավային Հնդկաստան ուղք դնելուց առաջ ջողայեցի հայերը հասել էին Մադրաս և ուր հաստատվել էր մի հայ համայնք. «Հնդկական աշխարհի ամենեն կանուխ եվրոպականացած և անգլիական ոգիին դրոշմովը խորագույնս տպավորված այս մարզին մեջ է որ ահա ծաղկեցավ հնդկահայ գաղութներուն ամենեն ուժեղն ու պատվականը, որուն պատմությունը ազգային տարեգրությանց մեջ պիտի մնա անմոռանալի էջ մը, իբրև հիշատակությունը քանի մը կարևոր ձեռնարկներու, որոնք նորագույն ժամանակաց հայկական վերածնության ամենեն գեղեցիկ ազդակներեն հանդիսացան»⁶³:

Մադրասի հայ համայնքը իր եկեղեցական, մշակութային, հայրենասիրական-ազգային զարթոնքն ապրեց ԺԸ դարի սկզբներից մինչև ԺԹ դարի կեսերը:

1790 թվականին Մասուլիսպատամում գրված մի արժեքավոր ձեռագրի հիշատակարանից (գրիչ՝ Սարգիս Հովհաննես) իմանում ենք, որ 1666 թվականից հայերը վերջնականապես և մնայուն կերպով հաստատվել են Մադրասում: Այստեղ գտնվող հնագույն հայերեն արձանագրությամբ տապանագիրը, որը խոջա Մարգարինն է, կրում է 1663 թվականը:

ԺԸ դարի առաջին քառորդին, որպես արտահայտությունը այդ զարթոնքի, Մադրասում և ս. Թովմասյան ուխտավայրերում կառուցվում են երեք հայկական եկեղեցիներ. առաջինը՝ ս. Թովմասի լեռան բարձունքում, 1707 թվականին:

«Գագաթը բլրին որ կբարձրանա օվկիանոսի կապույտին և քաղաքին ու շրջակայքին կանաչագեղ համայնապատկերին առջեվ, կկանգնի ցած քայց ընդարձակ մատուռ մը, որուն հյուսիսային արտաքին պատին վրա փորագրված է. «Ի յիշատակ Սաֆուլին, մահտեսի Զաքարի, որդու 1707»⁶⁴:

Ս. Թովմասի լեռան վրա գտնվող այս մատուռը, որը ժամանակին պատկանել է հալեբին, ապա անցել է հուլանդացիների, ֆրանսիացիների, անգլիացիների ձեռքը, այժմ սեփականությունն է պորտուգալացի Կուինացի կաթոլիկ կույսերի միաբանության. «եկեղեցվո ներքին պատերը զարդարված են երկրտառան առաքելոց մեծադիր նկարներով, ամենքն ալ հայ վրձնի գործ և հայատառ անուններով: Չախակողմը կա կարճ սյունի մը վրա նստած փոքրիկ ամպիոն մը, որուն վրա հայ մանրանկարչական ոճով հրեշտակախառն փորագրություններ կան, իսկ ներքին սյունին վրա, արձանագրություն մը ԺԸ դարեն: Մատուռին մեջ ու դուրսը, դռան առջև, կան քանի մը հալեբեն տապանագրեր, նույն տարեթվով: Հայկական է նաև մատուռի արևելադարձությունը»⁶⁵ (Ընդգծումը մերն է—Ա. Հ.):

Մադրասում հայկական երկրորդ եկեղեցին կառուցվել է 1712 թվականին, ս. Գեվորգյան կոչված բերդի կողքին: Սակայն անգլիական զբաղումից հետո անգլիացիք արգելում են բերդի կողքին բարձրադիր և հոյակերտ հայ եկեղեցու գործունեությունը: Եկեղեցին փակվում է 1748-ին: Պահվել է, սակայն, ս. Գևորգյան բերդի կողքին կառուցված հայ եկեղեցու կառուցման արձանագրությունը: Այնուհետև հայերը ժամանակավորաբար քաղաքի իրենց ազգային գերեզմանատանը կառուցում են փայտյա մի մատուռ, որը մինչև նոր եկեղեցու շինությունը, 1772 թվականը, պահում է իր գոյությունը:

1729 թվականին կառուցվում է մի այլ հայկական եկեղեցի Մադրասի արվարձաններից Մալաբուր գյուղաքաղաքում, որն ունի հետևյալ պերճախոս արձանագրությունը. «Ցիշատակ է հայոց ազգին, թիւն Փըրկչին 1729»:

Պարզ է, որ նման հոյակապ եկեղեցու շինությունը ենթադրում է կազմակերպված ու եկեղեցական-ազգային կյանքով ապրող բարգավաճ հայ համայնքի գոյությունը.

«Քանի մը տուններե քաղկացած ճղճիմ հատվածի մը գործը չէր անշուշտ երկաթագիր խոշոր տառերու հստակ տողի մը մեջ

⁶² Նույնը, էջ 44:

⁶³ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 42:

⁶⁴ Նույնը, էջ 74—75: Տե՛ս նաև Մեսրոպ Մեթյան, Հայերը Հնդկաստանում, էջ 607—608:

⁶⁵ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 74—75:

տիրական զգացումով մը պանծացնել այսպես ազգային ոգիին ամբողջ խրոխտանքը աշխարհի այս հեռաստանյա սահմաններում մեջ... հայ ազգային եկեղեցվո առաքելական ինքնությունն ու հնությունը շեշտել ուզելով, իր եկեղեցիին միջոցով հայությունը երևցնելու և առանձնացնելու ձգտում մը հանդիսավորելով խոնարհ բայց լուրջ ճիգով մը»⁶⁶:

1698 թվականին Մադրասում գրված և այժմ Լոնդոնի Բրիտանական թանգարանում գտնվող մի ոսկեփորիկ ձեռագրի հիշատակարանում խոսվում է 1664—1698 թվականներին Մալաբարում որպես քաղաքագլուխ պաշտոնավարող «իշխող և իշխան» երկու հայազգիների մասին, մեկը՝ Լրգազն, մյուսը՝ Մարկոս Ընդգատ անուններով⁶⁷:

Մադրասի հայոց վերջին ու մինչև այժմ կանգուն ա. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1772-ին հայկական թաղում: Ա. Աստվածածին եկեղեցին «քաղաքին ամենն փայլուն» շենքերից մեկն է, «երկայն և նեղ շինություն մըն է քարակերտ, բայց փայտյա ծածկով... երկուստեք արտաքին երկայն պուրասրահ գավիթներով, որոնք ամբողջությամբ, ինչպես նաև հարակից բակը բովանդակապես, ծածկված են հողահավասար տապանաքարերով: Գեղեցիկ են խաչկալը, մանավանդ ա. Կույսին վերափոխման պատկերը և անոր աստիճանները զարդարող քան սերտունական պատկերները, որոնք շինաստան են նկարված: Խորանին վերև, դուրսեն, կքարծրանա հայկական կաթողիկե մը, որ փակ տանիքին վրա կկանգնի:

Բակին կեդրոնը կքարծրանան քարաշեն եռահարկ զանգակատան աշտարակը, երեք գույգ զանգակներով»⁶⁸:

Մադրասի հայոց եկեղեցին կառուցվել է 1772-ին՝ նվիրատվությամբ Ծամիր Սուլթանում Ծահափիրյանի, ազգային գերեզմանատան կողքին: Եկեղեցու շինությունից յոթ տարիներ առաջ, 1765 թվականին, Ծամիրը, ի հիշատակ իր կնոջ մահվան, միևնույն հողամասի վրա կառուցում է քարակերտ մի մեծ սենյակ, որ մինչև այժմ կա և կոչվում է «Ծամիրյան սենյակ» և գործածվում է որպես եկեղեցական սպասների ավանդատուն և դիվանական հին տոմարների և արձանա-

գրությունների գրասենյակ: Մի ժամանակ այս սենյակը գործածվում էր որպես Ծամիրյան տպագրատուն:

ՄԱԴՐԱՍԻ ՀԱՄԱՅՆ-ԲԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶՏԱՏԳՐԱԿԱՆ ԾԱՌԺՈՒՄԸ

Մադրասի հայ համայնքը իր եկեղեցական-մշակութային, հայրենասիրական ու անտեսական բարգավաճման բուն վերելքն ապրում է ԺԸ դարի առաջին քառորդից մինչև ԺԹ դարի կեսերը:

Այս ժամանակահատվածում առաջարկ են իշնում թվով փոքր, բայց արտով ու տեսիլքներով մեծ այս համայնքի ծոցում բացառիկ դեմքեր, որոնց փառավոր անունն ու կատարած եկեղեցաշեն, հայրենակներ գործունեությունն անմոռաց երախտագիտությամբ են արձանագրված մեր ժողովրդի պատմության մեջ, «մեզի հասկցնելու համար թե բախտին հովերեն այսքան հեռավոր ափունքներում վրա նետված հայերու փոքրիկ թիվ մը ի՞նչ մեծություններ գործեց հոս, իր ազգին անունը սիրելի ընծայելու համար օտարներուն և իր հայրենիքին անունը միշտ ավելի լուրջ խոսումներով կենդանի պահելու համար իր մեջ»⁶⁹:

ԺԸ դարի առաջին քառորդին Մադրասի հայ համայնքի ծոցում առաջ եկած ժամանակագրությամբ առաջին և հնագույն, բացառիկ դեմքը ջողայեցի աղա Պետրոս Ոսկան(յան)ն է, որին խոջա Ոսկանի և թողը նշանավոր ջողայեցի խոջա Պողոս Վեղիջանյանի, որը 1627-ին կառուցել է տվել Նոր Զողայում ա. Բեթլեհեմ եկեղեցին:

Խոջա Պետրոսը առասպելական հարբատություն է կուտակում. «Ջգոն և խորագիտագույն ըստ աշխարհի, նշանատր եղև փարթամությունը և մեծագործությունը ի Հնդկաստան»⁷⁰: Բայց ոսկու դեզերի կողքին ունենում է նաև ոսկի սիրտ և իր նյութական ողջ կարողությունը նվիրում է իր մայր եկեղեցուն, իր ժողովրդի հառաջդիմության և նաև, որպես ազնիվ ու վեհանձն քաղաքացի՝ Մադրասին և նրա ժողովրդի բարօրությանը: Հնդկահայերը միշտ մասնակցել են հրեղիկ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին օտար նվաճողների դեմ:

Այսպես Մադրասի հայ Կրեստի նվիրատվությամբ է կառուցվել Մադրասում 1726-ին ա. Թովմասի լեռան ստորոտի՝ դեպի բարձունքը առաջնորդող 160 աստիճանաճոց փառավոր ու մեծածախս սանդուղքը, երկար ու կամարակապ գեղեցիկ կամուրջը, Ադիար գետի վրա, որը Մամլան գյուղը կա-

⁶⁶ Նույնը, էջ 45:

⁶⁷ Ս. Տեր-Գրիգորյան, Հայք ի հարավային Հնդկաստան, «Բազմալեզ», 1927, համարներ մարտ, մայիս, հունիս: Տե՛ս նաև Թորգոմ արքեպ. Գուշակյան, էջ 45: Մարտյա Սեթյան, էջ 604—607:

⁶⁸ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 72—73:

⁶⁹ Նույնը, էջ 46:

⁷⁰ Հ. Ղ. Ալիշան, նույնը, էջ 474:

պում է Մադրասին, 130 աստիճանանոց մի այլ սանդղոտք Սահդաբադի մոտ, «որոնք կմնան դեռ, և երեքն - այ հասարակական գործածության տեսակետով օգտավետ շինություններ են, որոնք հայտնաբերված մեջ հաշվական անունը սիրելի կդարձնեն անշուշտ տեղական ժողովուրդին»⁷¹:

Պետրոս Ոսկանը եղել է մեծ մարդասեր և իր քաղաքացիական պարտքը երախտագիտությամբ է հատուցել իրեն հյուրընկալող երկրին և նրա ազնիվ ժողովրդին:

1746 թվականին անգլո-ֆրանսիական պատերազմի ժամանակ նա համարձակությամբ պաշտպանեց իրեն հյուրընկալող երկրի և ժողովրդի շահերն ու ազգային անկախությունը, ի գին իր ողջ հարստության կորստի, երբ դեմ դուրս եկավ անգլիացիներին և ֆրանսիացիներին, որոնք կոչվում էին միմյանց դեմ և փորձում իրենց տիրապետությունը հաստատել Մադրասում և հարավային Հնդկաստանում: Այնուհետև իր տանն է ընդունում և արքայական ասպնջականությամբ պատվում ու մեծարում Արկոդի հնդիկ Նալայակին՝ իշխանին, Նրա Մադրաս այցելությանն առիթով, քաղաքի փողոցների ու պողոտաների վրա փռելով առատորեն գորգ ու մետաքս, և այդ բոլորը իր հաշվին:

Նույն թվականին Մադրասում, Վիպերի թաղամասում, քաղաքի աղքատ քրիստոնյաների համար կառուցել է տալիս ու Կույսի մատուռը:

Նա եղել է միաժամանակ հարազատ զավակը Մայր Աթոռի և երբեք չի մոռացել ու էջմիածինը: 60000 ռուսի է նվիրել՝ ի պաշտոնություն ու էջմիածնի: Նվիրատվություն է կատարել Երուսաղեմի հայոց ու Հակոբյանց, Մուշի ու Կարապետ վանքերին, Նոր Զուղայի և Կալկաթայի հայությանը: Հակառակ այն բանի, որ կաթոլիկների հետ ընդհարվել էր, նվիրատվություններ է կատարել նաև անհիշաչար մեծահոգությամբ Հոռմի ու Պետրոսին: Իր կտակի մեջ կարևոր մի գումար է հատկացրել նաև Մեքքայի մահմեդականներին, և երբ խոստովանահայրը հարցրել է նրան այդ նվիրատվության շարժառիթը, խոջա Պետրոս Ոսկանը ասել է փիլիսոփայաբար. «Ես այդ գերեզմանին կոնքրկով միլիոն մը վաստկեր եմ, թո՛ղ այս ալ անոր»⁷²:

Խոջա Պետրոսը, հզոր կամքի և պնդակեղծ կարագրի տեր այդ մարդը, եղել է նաև ջերմ հայրենասեր. «Այս կորովի և ուղղամիտ մարդուն մեջ գերազանցորեն տիրական զգացումն էր իր հայրենիքին՝ ծննդա-

վայրին սերը, որով ամենե՛ն ավելի համակված էր իր սիրտը»⁷³:

Խոջա Պետրոս Ոսկանը մահանում է 1751 թվականի հունվարի 15-ին Մադրասում, 70 տարեկան հասակում, և թաղվում իր իսկ կառուցած ընտանեկան մատուռ-գերեզմանատանը, երբ դեռ չէր կառուցվել այժմյան ու. Աստվածածին եկեղեցին: Հավատալով որ հայրենասեր այս մարդու գերեզմանի վրա կա բովանդակալից և ծավալուն մի արձանագրություն, գրաբար և լատիներեն լեզուներով, ուր խոսվում է նրա նկարագրի, հոգեկան ու քարոյական մեծության, նրա առաքինությունների և մարդասիրության մասին, «մի մարդ, որի համբավը տարածվել է ամեն կողմ, մինչև իսկ երկինք. հզոր պաշտպանն ու պունը հայերի, խնամակալն ու ջերմ բարեկամը՝ աղքատի, համարության բարերարը և ախույանը խաղաղության»⁷⁴: «Մարդոց և գիրքերու լուծության մեջ, որքա՛ն պերճախոս է այս քարը, Մադրասի հայության երկու դար առաջվան պատմության ամենե՛ն աղվոր մեկ էջը պարզելու համար մեզ»⁷⁵:

Բայց ավելի սրտառույժ նրա վերջին կտակն է: Խոջա Պետրոս Ոսկանը մահանում է անժառանգ իր ողջ կարողությունը հայ եկեղեցուն, ազգին ու մարդկությանը նվիրած: Իր վերջին կտակում նա գրում էր. «Իմ սիրտը ձգտում է դեպի հայրենիք, ուր սակայն ես անկարող եմ գնալ, ցանկանում եմ, որ երբ իմ վերջին օրը գա, իմ սիրտը ուղարկվի իմ բնիկ ծննդավայր-քաղաքը, այնպես որ ես Պետրոս Ոսկանս այնտեղ ունենամ մի գերեզման»:

Այս տողերը խոջա Պետրոս Ոսկանի հայրենասիրության հզոր և ուժգին վկայությունն են կրում, հայրենասիրություն՝ որ սահման չի ճանաչում»⁷⁶:

Կտակի համաձայն, խոջա Պետրոսի մահից անմիջապես հետո, ոսկյա մի տուփի մեջ նրա սիրտը ուղարկվում է Նոր Զուղա՝ թաղվելու համար իր պապի՝ խոջա Պետրոս Վելիջանյանի 1627 թվականին կառուցած ու. Բեթլեհեմ եկեղեցուն:

Մադրասի հայ համայնքի պատմության փառավորագույն էջը, սակայն, կապվում է ջուղայեցի աղա Ծամիր Սուլթանում Ծահամիրյանի անվան ու հայրենամկեր անմոռաց գործունեության հետ:

Ծահամիրյանը ծնվել է 1723 թվականին Նոր Զուղայում, մահացել է Մադրասում

⁷³ Թորգոմ արքեպ. Գուշակյան, Գույնը, էջ 47—48:

⁷⁴ Մեսրոպ Սեթյան, Գույնը, էջ 586:

⁷⁵ Թորգոմ արքեպ. Գուշակյան, Գույնը, էջ 48:

⁷⁶ Մեսրոպ Սեթյան, Գույնը, էջ 585:

⁷¹ Թորգոմ արքեպ. Գուշակյան, Գույնը, էջ 47:

⁷² Հ. Ղ. Ալիշան, Գույնը, էջ 474:

1797 թվականին: Ծառ վաղ հասակից հաստատվում է Մադրասում, ուր մի ժամանակ դերձակությամբ զբաղվելուց հետո, իր համար աշխատանքով ստեղծում է բարեկեցիկ կյանք և ապա արհեստը թողնելով պարսկերեն է լեզվագիտության բարձր աստիճանի վրա հասնում մարգարտի մեծահարուստ վաճառական՝ վալեյելով երկրի հնդկի իշխանների-մապալանների վստահությունն ու բարեկամությունը:

Ծառամիլիանն իր ազգակից վաճառականների մեջ բացառիկ տեղ է գրավել նաև իր ընդհանուր զարգացումով, «անգլերենի հմուտ և եվրոպական ընթերցումներով մշակված և հետաքրքիր միտք»⁷⁷:

Ծառամիլիանի անունը անխառնաձայն կապվում է Ժ.Ն. դարի հայ ազատագրական շարժման հետ: Այդ ժամանակահատվածում հնդկական գաղութը և մանավանդ Մադրասը դառնում է հայ ազատագրական շարժման կենտրոնը: Այստեղից հանդես եկան գաղափարի պրոպագանդիստներ, մարդիկ, որոնք ձգտում էին ընդհանրացնել Ղարաբաղում եղած շարժումն ամբողջ հայության մեջ, բանավոր և գրավոր քարոզություններով հայ ժողովրդի մեջ և դրա հետ միասին ցույց տալով նաև գաղափարն իրականացնելու գործնական միջոցները: Այդ տեսակ գործիչներից առաջինն էր Հովսեփ Էմինը, որը ոգևորվել էր «Գանգեսի ափերին հասած հայոց տղամանկների և Ղափանի մեծ շարժումով»⁷⁸: Հովսեփ Էմինը իր ողջ կյանքը նվիրեց իր գաղափարի և ծրագրի իրականացմանը: «Էմինը մշակել էր հայ ժողովրդի ազատագրման գրանդիոզ ծրագիր», բայց «նրա ծրագրերը զարնվում էին իրականության և խորտակվում. նրա քարոզները հող չեն գտնում, որովհետև շարժումը ժողովրդի մեջ, երկրի ներսում չէր ստեղծվել, այլ դրսից էր ներմուծվում»⁷⁹: «Նրա ձեռնարկած գործը իր թուր մանրամասնություններով ավելի մի ֆանտաստիկ արկածախնդրության է նման», բայց նա «մի անսովոր երևույթ էր հայկական կյանքի մեջ»⁸⁰:

Էմինը գրել է իր փոթորկոտ կյանքի ու երկարամյա թափառումների պատմությունը, որը ճանաչողական մեծ արժեք է ներկայացնում: Գիրքը, որը տպվել է անգլերեն լեզվով Լոնդոնում 1792 թվականին «Մի հայի՝ Հովսեփ Էմինի կյանքը և արկածները» անվան տակ, մեծ ազդեցություն է գոր-

ծել Մադրասի խմբակի հայրենասիրական գործունեության վրա:

Մադրասի հայրենասերների խմբակը և անձամբ Ծառի Ծառամիլիանը Էմինի անձնական բարեկամներն էին, գաղափարակիցներն ու աշակերտները, որոնք ավելի մեծ թափով շարունակեցին այդ գաղափարի գրական քարոզչությունը:

Մադրասի հայրենասիրական խմբակի եռանդուն ոգեշնչողն ու կազմակերպիչը, ազատագրական շարժման «նախահայր» Ծառի Սուլթանում Ծառամիլիանն էր: Այդ խմբակում ընդգրկվել էին Ծառամիլիանի երկու որդիները՝ Հակոբն ու Եղիազարը, Գրիգոր Խոջաջանյանը, դարաբաղի ուսուցիչ ու հրապարակախոս Սովսեն Բադրամյանը, Գրիգոր Հակիկեցի և ուրիշներ:

«Ծառամիլիի գերագույն մտահոգությունն էր իր ազգը. բայց սովորական հայրենասերի մը խանդավառությամբ չէ որ նվիրված էր ան այդ գաղափարին... անկա համոզված էր թե ազգին ապագան հայրենիքի իրականության մեջ միայն կրնա մարմին առնել, թե հայրենիքի գաղափարի իրագործման համար անհրաժեշտ է ժողովրդային ընդհանուր ազգասիրություն և թե այսպիսի ազգասիրության հիմն է ազգային ինքնաճանաչությունը»⁸¹:

Մադրասի խմբակը իր հայրենասիրական մեծ ձեռնարկի կենսագործման և հաջողության համար ստեղծել և ի գործ էր դրել գաղափարական-պրոպագանդիստական բոլոր միջոցները, ստեղծել սեփական տպարան, կազմակերպել «ազգային ժողովներ», խորհրդակցություններ գումարել և մշակել կոնկրետ ծրագիր ազատագրական շարժման: «Հարկավոր էր ավելի ազդու, ավելի համոզիչ ու համապիտու պրոպագանդ: ...Խմբակը հանդես է բերում մի գործունեություն, որի նմանը դեռ չէր տեսել հայ ժողովրդի արթնացած քաղաքական միտքը»⁸²:

1772 թվականին Ծառամիլիանի նվիրատվությամբ Մադրասում բացվում է հայկական առաջին տպարանը, իր որդու՝ Հակոբ Ծառամիլիանի անունով, ուր հրատարակվում է Սովսեն Բադրամյանի հեղինակած «Նոր տեսրակ, որ կոչի Յորդորակ... սակա պափեղյ երիտասարդացն և մանկանցն Հայկազանց ի վեհերտեսայ և ի հեղաքեղյ թմրութենէ քնոյ ծուլութենէ... ի յօգոտ թարմահասակ և մորափոխ մանկանցն հայոց. ի հայրապետութեան Տեսուն Սիմեօնի Ամենայն Հայոց կաթողիկոսի»:

«Նոր տեսրակ»-ը հանդիսանում է առաջին քաղաքական հրապարակախոսությունը

⁷⁷ Թորգոմ արքեպ. Գուշակյան, Գուշակյան, Գուշակյան, էջ 48:

⁷⁸ Առ, Հայոց պատմություն, հատոր Գ, Երևան, 1946, էջ 274—275:

⁷⁹ Գրիգ. Ա. Գ. Առաքելյան, Գուշակյան, էջ 155:

⁸⁰ Առ, Գուշակյան, էջ 774:

⁸¹ Թորգոմ արքեպ. Գուշակյան, Գուշակյան, էջ 48:

⁸² Առ, Գուշակյան, էջ 800:

հայերի մեջ... մի հրատարակություն, որի նշանակությունը հայոց գրականության մեջ, չնայած իր համեմատ գրական արժանավորություններին, կարելի է անվանել չափազանց խոշոր»⁸³:

Մադրասի հայրենասիրական խմբի հրատարակած սույն աշխատության մեջ «խոշոր քաղաքական ծրագիր էին առաջարկում, այն է ստեղծել անկախ քաղաքական իշխանություն Հայաստանում, կառավարման ձևը ոչ միապետական, այլ ժողովրդական, հանրապետական»⁸⁴:

«Այս գործը որ անարվեստ տպագրություն մըն է, գուրկ որևէ գրական արժեքն ունի սակայն մեծ նշանակություն՝ ազգային զգացման ժողովրդականացման տեսակետով: Ներքնշվելով Աստվածաշունչին և Խորենացիին, հեղինակը անոր մեջ կապացուցե հայկական անկախության իրավունքն ու հիմքերը»⁸⁵: «Մովսես Բաղրամյանը գուցե առաջին հայն է Մովսես Խորենացուց հետո, որ վերցնում է հայությունն իբրև մի ազգություն (Լեո), «ներքողը կհյուսե Հայաստան աշխարհին» (Գուշակյան), բայց «և քննադատում է այդ ազգության իրական դրությունը» (Լեո), «անիծախառն անդրադարձություններով անոր թշնամիներուն և խաբանող ակնարկություններով անմիաբանության ոգիին՝ որ անոր կործանումը նյութեցին և պանծացումովը կրթության և քաջության որոնց արդյունքներով միայն կհավատա թե կարելի պիտի լոյս անոր վերականգնումը» (Գուշակյան): «Նոր տեսության»-ի հեղինակը «պահանջում է որ» հայությունը «ոտքի կանգնի իբրև վերածնվող մի մարմին և ազատություն, կատարյալ անկախություն ձեռք բերի: Որովհետև, ասում է, առանց քաղաքական անկախության չկա փրկություն, չկա ազգային պատիվ, առաջադիմություն և երջանկություն»⁸⁶:

«Նոր տեսության կոր կոչի յորդորակ» գրքի հեղինակի հարցը հայ բանասիրության մեջ քննության առարկա է դարձել մի քանի անգամ: ...Մինչև 1908 թվականը «Նոր տեսության»-ի հեղինակը ճանաչվել է Հակոբ Ծաֆամիրյանը, այնուհետև 1908 թվականից մինչև այսօր՝ Մովսես Բաղրամյանը: Այդ կարծիքին է եղել նաև Լեոն...

Այդ հարցը այժմ Արիստ Բարձրացրել է «բանասեր Ս. Ծ. Մնացականյանը... որի փաստարկներն այնքան ակնառու են և համոզիչ, որ ոչ մի կասկած չեն թողնում, որ

«Յորդորակ»-ի հեղինակը ոչ թե Մովսես Բաղրամյանն է, այլ այդ հուշակալոր քերթվածը պատկանում է 1774 թվականի հուլիսին 29 տարեկան հասակում վախճանված հնդկահայ փայլուն տաղանդի՝ Հակոբ Ծաֆամիրյանի ստեղծագործ գրչին»⁸⁷:

1778 թվականին ավարտվում է տպագրությունը «Նոր տեսության»-ի, որի համարները ամենայն փութությունով տարածվում են հնդկահայ գաղթօջախներում, Նոր Զուղայում, Հայաստանում, Վրաստանում, Լարսաքում, Ռուսաստանի հայ գաղություն:

Մադրասի խմբակը 1778-ին սույն տպարանից հրատարակում է իր երկրորդ հայրենասիրական գործը, որը կոչվում է «Գիրք անուանեալ որոգայթ փառաց, վասն կալանատրելոյ ամենայն գործ անկարգութեան»: Գրքի վրա որպես հեղինակ հիշված է Հակոբ Ծաֆամիրյանի անունը:

Միմեռն Երևանցի կաթողիկոսը 1776 թվականին Մադրասի իր բարեկամներին՝ Գրիգոր Խոջաջանյանին և Ծամիր Ծաֆամիրյանին գրած նամակում գրքի հեղինակ է համարում դարձյալ Մովսես Բաղրամյանին: «Մովսես Բաղրամյանը ոչ գրքի հեղինակն է, — ասում է Լեոն, — և ոչ էլ որևէ մասնակցություն է ունեցել շարադրության մեջ: Բայց հեղինակ չի կարող համարվել և Հակոբ Ծաֆամիրյանը, որովհետև «գիրքն» իր բովանդակությամբ ցույց է տալիս, որ այն չէր կարող հորինել մի պատանի, որ դեռ կրթություն էր ստանում: Հեղինակ է հանդիսանում, անկասկած, Հակոբի հայրը՝ Ծամիր Սուլթանյանը Ծաֆամիրյանը»⁸⁸: «Ուսումնասիրությունը ցույց է տալիս համոզիչ փաստերով, որ «Որոգայթ»-ի հեղինակը հանդիսանում է ոչ թե Հակոբ Ծաֆամիրյանը, այլ նրա հայրը՝ նախկին դերձակ Ծամիր Ծաֆամիրյանը»⁸⁹:

Դժբախտաբար գրքի անունը՝ «Փառքի մի որոգայթ» որ պիտի կալանավորի անկարգության բոլոր գործերը, ոչինչ չի հուշում այդ հրատարակության բովանդակության և հայրենասիրական մեծ արժեքների մասին: «Գրվածքը չունի և ոչ մի տեսակ գրական արժեք... Բայց ի՞նչ գոհարներ ենք գտնում այդ կոպիտ և անտաշ շարադրության մեջ: «Որոգայթ» փառաց»-ը... իր բովանդակությամբ կատարյալ մի պարծանք է մեր գրականության համար: Նա ուրվագծում է պետական, վարչական, օրենսդրական կար-

⁸³ Նույնը, էջ 807 և 1024:

⁸⁴ Պրոֆ. Ա. Գ. Առաքելյան, նույնը, էջ 142:

⁸⁵ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 49:

⁸⁶ Լեո, նույնը, էջ 1024—1025:

⁸⁷ Պրոֆ. Ա. Գ. Առաքելյան, նույնը, էջ 366—369: Տե՛ս նաև «Պատմա-բանասիրական հանդես» 1962, № 2:

⁸⁸ Լեո, նույնը, էջ 1034:

⁸⁹ Պրոֆ. Ա. Գ. Առաքելյան, նույնը, էջ 142 և 334:

գեր, որոնք պիտի մտցվեին ազատված Հայաստանի մեջ»⁹⁰:

«Խոշոր ու փայլուն երևույթ էր Հակոբ Ծախմիրյանի տպարանում տպված այդ փոքրիկ, արտաքուստ անհրապույր ու աղքատիկ գիրքը: Նա վաղ առավոտի արվեստվորն էր, որ գալիս էր ասելու, թե հայ ժողովուրդն այլևս կրոնական մի համայնք չէ... այլ մի քաղաքական ազգ, որ քաղաքական միություն է սնուցանում, քաղաքական իրողություն ունի»⁹¹: Այսպիսով ԺԸ դարի վերջին 25-ամյակին սկիզբ է առնում և ձեռնարկվում հնդկահայ համայնքի ծոցում ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը:

Այս մասին ավելի իմանալ ցանկացող մեր բնորոշողներին հանձնարարում ենք կարդալ Լեոյի «Հայոց պատմություն», հատոր Գ, 803—821 և 1024—1048 և պրոֆ. Առաքել Առաքելյանի «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն», հատոր Բ, 141—175 և 333—374 էջերը:

Մադրասի խմբակի և նրա ղեկավար Ծախմիրյանի հայրենասիրական գործունեությունը չէր սահմանափակվում հրատարակչական-պրոպագանդիստական կամ լոկ գրական ձեռնարկներով: Ծախմիր Ծախմիրյանն ու Գրիգոր Խոջաջանյանը, որոնք անձնական բարեկամներ էին Սիմեոն Երեմյանի կաթողիկոսին, միշտ սերտ հարաբերության մեջ էին նրա հետ, համոզված լինելով, «ամենից կարևոր հիմնարկությունը, որը կարող էր աջակից հանդիսանալ իրենց, Էջմիածնի Աթոռն էր»⁹²: Նրանք միաժամանակ խնդրում էին կաթողիկոսին, որ հովանավորի և քաջալերի իրենց հայրենասիրական ձեռնարկը և իր ազդեցիկ միջնորդությամբ ապահովի Ղարաբաղի հայ մելիքների միաբանությունն ու սերտ համագործակցությունը, վրաց Հերակլ թագավորի օգնությունը և մանավանդ խնդրի Եկատերինա Բ կայսրուհու աջակցությունը ձեռնարկի հաջողության համար: Ծախմիրյանն ու Խոջաջանյանը խնդրում էին Ամենայն Հայոց կաթողիկոսին, որ հայրապետական կոնդակով և նվիրակների միջոցով համազգային տուրք սահմանի՝ «մի-մի փարա ամեն կիրակի յուրաքանչյուր հոգուց ազգային գործի օգտին»՝ ռազմական արհեստը հայերին սովորեցնելու և նախապատրաստական այլ աշխատանքներ կատարելու համար:

Սիմեոն Երեմյանին, որպես ԺԸ դարի մեր ազատագրական շարժման խոհեմ, հեռատես ու պահպանողական ղեկավարներից մեկը, ելնելով այդ ժամանակահատվածում մեր հայրենիքի և ժողովրդի ծանր ու ողբերգական վիճակից, վնասակար էր համարում բնդհանրապես «Նոր տեսության»-ի և «Ռոքայա»-ի հրատարակությունը և, մասնավորաբար, Մադրասի հայրենասերների ձեռնարկը և, մանավանդ, նրանց ապստամբական շարժման նախապատրաստությունը:

Սիմեոն Երեմյանին Ծախմիրյանին և Խոջաջանյանին գրած իր պատասխան նամակներում⁹³, կսկիծով ու դատություններ էր նկարագրում օսմանյան ու պարսկական լծի տակ մեր ժողովրդի վիճակը, երկրի ամաչությունն ու թշվառությունը. «Մնացորդքն յազգէն մերմէ ոչ թէ ի յառաջաքաղէ, այլ իբրև ի ճուքաղէ մնացեալ է. եմ կարկտահարք, որդակերք և վտիտք ամենեկին. ոմանք ի դառն աղքատութեան և ի կարէ պահանջմանէ իշխանաց անգլխոց, որ կանամքք և որդուքք ի տուէ և ի գիշերի անդադար յաշխատութիւնս հիծեալք, հագի գապրուստս իրեանց առ ձեռն բերին... արդ, յայսպիսեաց զի՞նչ կարծէք, կարէ՞ ուման հետևիլ և դաս առնուլ»⁹⁴:

Սիմեոն Երեմյանին, իր նամակում խոսքն ուղղելով իր մտերիմ բարեկամ Գրիգոր Խոջաջանյանին, գրում էր. «Ինք ի հանգրստեան և յապահովութեան գոլով, ոչ գիտէք և ոչ տեսանէք զխեղճութիւն այս կողմնականաց, որք երանեն զմեռեալս»⁹⁵ և հարց էր տալիս՝ նման ժողովրդից ի՞նչ էք սպասում:

Լեոն, բնության առնելով Մադրասի խմբակի հայրենասիրական և գրական-պրոպագանդիստական գործունեության հանդեպ Սիմեոն Երեմյանի «անվերապահորեն խիստ վերաբերմունքն, նրա կարգադրություններն, արգելքներն ու սպառնալիքները», գրում է հետևյալը. «Էմինն ու Ծախմիրյանը, իբրև հեղափոխական գործիչներ, ըմբռնել էին ազատության գաղափարը եվրոպական մտքով և ազատության զինվորի սուր հայացքով էլ դիտում էին հայերի ստրկական դրությունը, քննում էին նրանց անկման ու դժբախտության պատճառները: Այդ կողմից նրանց խորտակել չէր կարելի: Սակայն նրանք սաստիկ թուլանում էին, երբ գալիս էին գործնական առաջարկներին, նրանց գաղափարներն իրականացնելու համար: Ընդհանուր հայությունը բարձրացնե-

⁹⁰ Լեո, նույնը, էջ 1035:

⁹¹ Նույնը, էջ 1033:

⁹² «Դիվան հայոց պատմության», գիրք Ը, Թիֆլիս, 1908, էջ 574:

⁹³ Նույնը, էջ 577—590:

⁹⁴ Սիմեոն կաթողիկոս, Գիրք որ կոչի Պարտավճար, Էջմիածին, 1783, էջ 308:

⁹⁵ «Դիվան հայոց պատմության», էջ 580:

լու և ազատ ու անկախ մի ազգ դարձնելու ծրագիրը թե՛ Էմինի և թե՛ Շահամիրյանի ձեռքում շատ էր ուտուպիական, շատ էր տհաս և անհամոզեցուցիչ: ...Իսկ Սիմեոն կաթողիկոսը իրականության մարդ էր և հասկանում էր իրական ուժերի փոխհարաբերությունը⁹⁶:

Շահամիրյանը լայն կապ ու հարաբերություն էր պահպանում՝ իր հայրենասիրական ծրագիրն իրականացնելու համար, նաև վրաց Հերակլ Բ թագավորի հետ՝ նրան համարելով հայ Բագրատունիների վերջին շտապիկը և նվեր ուղարկելով արքայական ոսկե թագ ու գոհարազարդ ոսկե շքանշան, որի վրա քանդակված էր հայկական և վրացական միացյալ զինանշան: Հերակլը, ի նշան գոհունակության, Շահամիրյանին շքանորհում էր իշխանական տիտղոս, բայց գործնականորեն չէր կարողանում օգտակար լինել Շահամիրյանի հայրենասիրական ձեռնարկին:

Շահամիրյանը եռանդուն աշխատանք էր տանում նաև նամակագրությամբ Ղարաբաղի մելիքների հետ:

Շահամիրյանը նույն նպատակով Ռուսաստանի առաջնորդ Հովսեփ արքեպ, Արդությունի միջոցով կապ էր պահպանում Ռուսաստանի հայերի, ինչպես նաև ռուսական արքունիքի հետ: «Շահամիրյանը հայ ժողովրդի ազատագրական գործում վճռական նշանակություն էր տալիս Ռուսաստանի դերին»⁹⁷: «Այս մեծահարուստ վաճառականները, — գրում է Մեսրոպ Սեթը, — նշանավոր էին իրենց բարեպաշտությամբ, ճշմարիտ մարդասիրությամբ և հայ ժողովրդի ու մեր դասական գրականության զարգացման բոլոր նախաձեռնողությամբ: Նրանց հայրենասիրությունը հավանաբար անգուցական էր: Նրանք դիմել էին Ռուսաստանի Եկատերինա Բ-ին՝ ազատելու Հայաստանը մահմեդականների դաժան լծից և սգն առնելու իր գերիշխանության և հովանու ներքո: Երկու միլիոնատերեր պատրաստակամություն էին հայտնել իրենց միլիոնները դնել ռուսական կառավարության տրամադրության տակ, նախաձեռնարկված պատերազմի առիթով»⁹⁸:

Այդ միլիոնատերերից մեկը Շամիր Շահամիրյանն էր, որը մտածել էր «նույնիսկ դրամով գնել Հայաստանը»⁹⁹:

1797 թվականին, 74 տարեկան հասակում, մահանում էր Շահամիրյանը, «հայրենասեր

ծերունին, որ իր փարթամության ամենափայլուն օրերում ալ, ազգին նախադրով միայն մտահոգված է... իրեն հետ գերեզմանեց ի վերջո իր բոլոր հույսերը և իղձերը»¹⁰⁰:

«Շահամիրյանը երկրորդ խոշոր և ինքնատիպ դեմքն էր, որ հնդկահայ գաղթականությունը տալիս էր Հայաստանի ազատության գործին: Նա բռնում էր Էմինի տեղը, բայց Էմինի նման թափառական ճանապարհորդ չէր: Հայաստանն ու հայ ժողովուրդը չէր տեսել նա և չտեսավ երբեք, բայց անխնայ ու ազդու պրոպագանդ էր մղում և կարողացավ իր անունը կապել հայկական շարժումների այս երկրորդ շրջանի հետ, ուր նա ազդու դեր կատարողներից մեկն է»¹⁰¹:

Մադրասի խմբակի երրորդ հայրենասիրական բովանդակությամբ հրատարակությունը 80 էջանոց մի գրքուկ է, որը կոչվում է դարձյալ «Տետրակ որ կոչի նշանակ կառավարելու ինչս... ի հայրապետութեան Տեառն Դուկասայ Ամենայն Հայոց կաթողիկոսի 1783»:

«Մադրասի խմբակի հայրենամկեր գործունեության մի կոթող է այդ «Տետրակ»-ը: Այդ փոքրածավալ գիրքը քաղաքական բովանդակությամբ շարադրված մի գոյծ է, որի մեջ արտացոլվել է հեռավոր արևելքի մի անկյունում ծվարած հայ գաղութի հասարակական ներքին կյանքը, նրա քաղաքական տրամադրությունները և ապագայի հեռանկարները»¹⁰²:

ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԴՐԱՍՈՒՄ

1783 թվականից լույս է Շահամիրյանի տպարանը, երբ մեծամեծ կորուստների և ընտանեկան դառն ձախորդությունների է մատնվում Շամիր Շահամիրյանը: 1789-ին Մադրասում գործում է շիրազեցի տ. Հարություն քհն. Ծմավոնյանի տպարանը, որով և շարունակվում է Մադրասի հայրենասիրական խմբի գլխավորած լուսավորական-հրատարակչական գործը:

Հարություն քհն. Ծմավոնյանը ծնվել է 1750 թվականին Պարսկաստանի Ծիրազ քաղաքում և 1784-ին, 34 տարեկան հասակում, երկու վաղամեղիկ զավակների կորուստը սեղմած իր սրտում և տարիների ծանր սգից հետո, գալիս է պաշտոնավարելու Մադրասի հայոց ս. Աստվածածին եկեղեցում և նրա շրջափակում բացում է իր տպարանը: Այս լուսամիտ քահանան իր սե-

⁹⁶ Առ, նույնը, էջ 815:

⁹⁷ Պրոֆ. Ա. Գ. Առաքելյան, նույնը, էջ 146:

⁹⁸ Մեսրոպ Սեթյան, նույնը, էջ 580:

⁹⁹ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 50:

¹⁰⁰ Նույնը, էջ 50:

¹⁰¹ Առ, նույնը, էջ 812—813:

¹⁰² Պրոֆ. Ա. Գ. Առաքելյան, նույնը, էջ 370:

փական միջոցներով և աշխատանքով թուղթ և հայերեն տառեր է պատրաստում և 1789-ին հրատարակում «Պատմություն կուսին Մարիանե», 1791-ին՝ «Թաղեու Սոգինեանց», տետրակ որ կոչի ողբ Հայաստանեայց», 1792-ին՝ «Ներսէս Ծնորհալի, գիրք որ կոչի Յիսուս Որդի», 444 էջ, և 1793-ին՝ «Գիրք Պորփիրի որ կոչի ներածութիւն, յորում պարունակին վերձանութիւնք Ամենասու Դաւթի Անյաղթ փիլիսոփայի և լուծմունք ներածութեան և վերձանութեան և նոցին լուծման», 413 էջ¹⁰³:

Սակայն տ. Հարություն քնն. Ծմավունյանի հրատարակչական մեծագործությունը, որը հավերժացրեց նրա անունը մեր մշակույթի պատմության մեջ, հանդիսանում է 1794-ի հոկտեմբերի 16-ին օտար ափունքների վրա՝ Մադրասի հայոց ա. Աստվածածին եկեղեցու հովանու տակ առաջին հայ պարբերաթերթի՝ «Ազդարար»-ի հրատարակությունը:

1794 թվականի օգոստոսի 7-ին տ. Ծմավուն քահանան հրատարակում է տպագրված մի հայտարարություն՝ ողոված «քարեպաշտ պարոնաց և մաքրակենցաղ տիկնանց Մադրասի հայոց», որ խոսում է այն մասին, որ ինքը մտադրվել է ամեն ամսի վերջում իր տպարանից լույս ընծայել մի տետրակ «Ազդարարող» անունով, որից ընթերցողը կհամանա նույն ամսվա անցքերը, քաղված զանազան «կազեթներից», քարտեզներից և գրքերից, ինչպես նաև կարևոր և քաղցրալուր քաներ: Տետրակի վերջում կտպվի նաև հաջորդ ամսի օրացույցը, որի մեջ կլինեն սրբերի տոները, լուսնի ծննդյան և լրման օրերը:

«Ազդարար»-ի առաջին համարը, ութամյա դիրքով և 48 էջերով, լույս է տեսնում 1794 թվականի Ագարիայի (ջողայեցիների հատուկ) տոմարով, թիքա (հոկտեմբեր) ամսի 16-ից: Պարբերաթերթը ունեցել է 28 բաժանորդներ:

Ծուրջ երեք հարյուր տարիներից ի վեր, 1512-ից, տպագրական արվեստը թեև մոտոք էր գործել մեր ժողովրդի կյանքում, և հրատարակվել էին շուրջ 910 գրքեր՝ Վենետիկում, Կ. Պոլսում, Լիովում, Հոռոմում, Ամստերդամում, Փարիզում, Լոնդոնում, Էջմիածնում և այլուր (Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ, էջ 3—214), «բայց պարբերական թերթի մը գաղափարը չէր գրաված դեռ ոչ մեկին մտադրությունը, առաջին անգամ Ծմավուն քահանան է, որ կը-

հղանա զայն լինելով այսպես հիմնադիր և հայր հայ լրագրին»¹⁰⁴:

Հնդկահայ զաղույթը բուն ու խանդավառ ոգևորությամբ է ողջունում առաջին հայ ամսաթերթի հրատարակությունը Մադրասում, որովհետև այն ճշմարտապես հանդիսանում է միության կապ հայության մայր զանգվածների և Հնդկաստանի այս հեռավոր, բայց հյուրընկալ ափերում ապրող հայ ժողովրդի բեկորների միջև:

«...երբ լույս տեսավ «Ազդարար»-ի առաջին համարը, այն մեծ օրն էր, երբ հայ ազգը, կարելի է ասել հաստատապես, մտնում էր քաղաքակիրթ ազգերի ընտանիքի մեջ...: Ծմավունյան Հարություն քահանան առաջին հայ խմբագիրն է... այս պատիվը նրա անկողոպտելի սեփականությունն է մեր գրականության պատմության մեջ»¹⁰⁵:

«Ազդարար»-ը ուներ կրոնական-պատմական, քանասիրական, գրական, հրապարակախոսական, քաղաքական, առևտրական բաժիններ: «Ազդարար»-ը հրատարակվում էր Դուկաս կաթողիկոսի օրով, նրա օրհնությամբ և քաջալերանքով: «Ազդարար»-ը իր յուրաքանչյուր համարում լայն տեղեկություններ է հաղորդում հնդկահայ իր ընթերցողներին Հայաստանի, Պարսկաստանի, Վրաստանի, Ռուսաստանի հաղթած ժողովուրդների ազգային-եկեղեցական, մշակութային-հայրենասիրական գործունեության մասին: «Ազդարար»-ի էջերում արձագանք էին գտնում նաև միջազգային կարևորություններ կապացնող հասարակական շարժումներ, ինչպիսին էր Ֆրանսիական առաջին բուրժուական հեղափոխությունը:

Ամսագրի լեզուն գրաբար էր, թղթակցությունները՝ մատամբ աշխարհաբար, պարսկահայերին հատուկ խոսակցական լեզվով:

«Գրաբարապաշտությունը հնդկահայերի մեջ զարմանալի համատությամբ պահվեց մինչև վերջին ժամանակներս, իբրև գրական լեզու, նույնիսկ և այն ժամանակ, երբ համարյա ամբողջ այդ հայությունը մոռացել էր հայերենը»¹⁰⁶:

«Ազդարար»-ը անընդհատ հրատարակվում է 18 ամիս, 1794 հոկտ.—1796 մարտ: Ընդամենը լույս է տեսել 18 համար: Յուրաքանչյուր համարը՝ 48 էջ: «Ազդարար»-ի հրատարակությունը հանդիսացել է «զնահատելի արդյունքը խորապես հառաջդիմասեր իղձերու և կանխամտածված ծրագրի,

¹⁰⁴ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 53—54:

¹⁰⁵ Լեո, նույնը, էջ 1049:

¹⁰⁶ Լեո, նույնը, էջ 105:

¹⁰³ Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ (1512—1800), Երևան, 1963, էջ 197, 201, 205, 209:

և այս պատճառով հավետ պատվաբեր որ-
քան Մադրասի հայ գաղութին, որուն ընկե-
րական ու մտավորական կյանքին պտուղը
եղավ հայ հրապարակագրական առաջին և
բարենաջող փորձը, նույնքան նաև ու մա-
նավանդ անոր ժրաջան հովվին, որ իրոք և
իրավամբ եղավ անոր անդրանիկ հայ խմբ-
ագիրը»¹⁰⁷:

1824 թվի փետրվարի 9-ին վախճանվում
էր տ. Հարություն քահանա Ծմավոնյանը:

Մադրասի հայոց ս. Աստվածածին եկեղե-
ցու բակում է գտնվում հայ մշակույթի մեծ
երախտավոր տ. Հարություն քհն. Ծմավոն-
յանի գերեզման-տապանաքարը, որի տակ
հանգչում են նաև «հողացեալ աճիւնքն, ի
սուրբ կրօնի արթուն վարուք ուշիմ և զգօն
յաննուստ յարգեալ, ճարտար, խոհամիտ և
սուրբ հանճարիւք բարեկրօն աւագերէց»-ի:

1965 թվականին Հնդկաստանի հայոց
հայրապետական պատվիրակ տ. Հայկա-
զուն արքեպ. Աբրահամյանը տ. Հարություն
քհն. Ծմավոնյանի «մամուռի հողախատն
պատվածքի մը ներքև գտնվող տապանա-
քարը» հանելով, ամրացնում է Մադրասի
հայոց ս. Աստվածածին եկեղեցու հարա-
վային պատին և նոր տապանաքար է զե-
տեղում հին գերեզմանի վրա:

Տ. Հարություն քհն. Ծմավոնյանի տապ-
արանը փակվում է 1809 թվականին, երբ ար-
դեն խափանվել էր «Ազդարար»-ի հրատա-
րակությունը: 1796 թվականին, Ծամիր Ծա-
համիրյանի մահից և «Ազդարար»-ի դադա-
րելուց հետո, Մադրասի հայ գաղութի ծո-
ցում թուլանում է հայրենասիրական խմբա-
կի գործունեությունը: Մադրասի առևտրա-
կան խավը, որը քաջալերում էր և հովանա-
վորում գրական-հայրենասիրական առաջ-
ընթացը համայնքի, մատնվում է տնտեսա-
կան ճախրողությունների, երբ, մանավանդ,
Հնդկաստանի առևտրական շարժման կենտ-
րոնը Մադրասից փոխադրվում է Սինգա-
պուր, Մալակկա, Պինանկ և այլն: Մադրա-
սի հայ առևտրականների զավակները չեն
կարողանում պահել իրենց ծնողների տըն-
տեսական նախկին պաճառ դրությունը և
մեկնում են այլ տեղեր՝ վերաշինելու համար
իրենց վտանգված տնտեսական բախտը:

1809 թվականին Մադրասում գործում է
Արագիս Ծատուր Աղալայանի տպարանը,
որ հրատարակվում են 4—5 կարևոր գոր-
ծեր, որոնցից են Ներսես Ծնորհալու «Ողբ
Եղեմեայ քաղաքի» (1810 թ., առաջին
տպագրություն), Հովհաննես Զուղայեցի

վարդապետի—Մրգուզ—«Գիրք որ կոչի
սրբազնագործություն» (1812 թ.) և այլն:

1830-ական թվականներին որոշ չափով
վերակենդանանում է եկեղեցական, մշակու-
թային և հայրենասիրական կյանքը Մադ-
րասում: 1830-ական թվականներին գործում
է ազգային մի փոքր դպրոց, 21 աշակերտ-
ներով, բացվում է «Հայոց դպրատան գրա-
տուն»:

Զուղայեցի մադրասաբնակ առևտրական-
ները միշտ էլ ունեցել են բուռն սեր և հոգա-
ծություն դեպի կրթական գործը՝ բարձրաց-
նելով այսպես նաև իրենց համայնքի անունն
ու համբավը, որպես հառաջդիմության, լու-
սավորության և կրթության մեկենասների:

1771 թվականին Սիմեոն Երևանցին Մադ-
րասի Գրիգոր Խոջաջանյան վաճառականի
նվիրատվությամբ բացում է առաջին տպա-
րանը Մայր Աթոռում: Հովհ. արքեպ. Ար-
ղությանը Մադրասի հայ առևտրականների
նվիրատվությամբ բացում էր առաջին դրա-
րանոցները Ռուսաստանի իր թեմում:

Ռաֆայել Ղարամյանի և ապա Սամվել
Մուրադյանի նվիրատվությամբ բացվում էին
նոր կրթարաններ Իտալիայում, Ֆրանսիա-
յում՝ հայ սերնդի ազգային-կրոնական դաս-
տիարակության համար: Այսպես, 1834-ին
Պադուայի մեջ՝ Մուրադյան վարժարանը,
որը 1846 թվականին փոխադրվում էր Փա-
րիզ և 1855-ին՝ Վենետիկ, ուր 1836 թվա-
կանից ի վեր շարունակվում էր Էդուարդ
Ղարամյանի նվիրատվությամբ բացված
Ռաֆայելյան վարժարանը: 1855 թվականից
ի վեր շարունակվում են այս երկու վարժա-
րանները՝ իբրև միացյալ հաստատություն՝
Մուրադ Ռաֆայելյան անունով, Վենետիկի
Մխիթարյան հայրերի ղեկավարության ներ-
քո:

ԺԹ դարի երկրորդ կեսին Մադրասի հայ
համայնքն իր ազգային-մշակութային, տըն-
տեսական վարժեքի վրա էր կանգնել. «Այ
այնուհետև գոյության ոչ մեկ նոր շարժում
կվերևի անոր կյանքին մեջ... վեճեր և ան-
հարկի պառակտումներ ներքնապես հետզ-
հետե ավելի կտկարացնեն զայն... չքավոր
անցորդներ... անգործ մնացած ջուղայեցի
գաղթականներ... մերթ և մերթ վայրկյա-
նական կայծ մը միայն կարթնցնեն ազգային
ոգևորության ալ հանգած այս վառարանին
մեջ... Մարդիկ լուծ են այլևս հոգ... բայց
քարերը կխոսին տակավին»¹⁰⁸ (Ընդգծումը
մերն է—Ա. Հ.):

(Շարունակելի)

¹⁰⁷ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 55:

¹⁰⁸ Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 71:



ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ

(Առաջնորդական փոխանորդ Արարատյան թեմի)

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ ԾԻՐԻՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

115. Սիմեոն Ա. Երևանցի (1763—1780).
—Աշակերտ ա. Էջմիածնի դպրոցի. հետագային ինքն էլ ուսուցիչ նույն դպրոցում: Հասցրել է բազմաթիվ աշակերտներ: Նշանավոր նվիրակ ա. Էջմիածնի. շրջել է Թուրքիայի, Պարսկաստանի, Հնդկաստանի հայկական թեմերը:

Դեռևս վարդապետ զբաղվել է գրական աշխատանքով: Հիմնել է Ռուսաստանի թեմը: Ա. Էջմիածնում հիմնադրում է տպարան 1771 թվին:

Շահխաթունյանը Սիմեոն Երևանցու մանկան և թաղման կապակցությամբ գրում է. «Կացեալ արդիւնաւոր վաստակօք ի հայրապետութեանն ամս ԺԷ և ամիսս իբր երկու՝ վախճանեցաւ ի 26 յուլիսի 1780 ի չորրորդ ժամու աւուրն. որոյ և զմարմինն ամփոփեցին ի գաթի եկեղեցւոյն սրբոմիոյն Գալիանեայ ի հարաւակողմ»²⁶⁴:

Ա. Գալանեի վանքի հարավային կողմում է գտնվում Սիմեոն Երևանցու գերեզմանը: Ծիրնաբարի վրա կա հետևյալ տապանագրությունը.

«Քրիստոս աստուած իմ Տէր բարի,
Լո՛ւր աղէտից քոյս ծառայի.
Դու կացուցեր Զիս յայս կարգի,
Ի մշակել ըզքո աչգի.
Իսկ ես անուամբ այս պաշտօնի,
Գտայ ծառայ ամենայնի.
Եւ որպէս թէ գալարտաւոր մի,
Փոխատուաց զիս մատնեցի,
Ոյց ետու եւ ծառայեցի,
Վարձն իմ գտող եւ զցաւ առի,
Այսու կենօք ողորմելի,
Ժամանակս իմ վճարեցի.
Այժմ ամօթով կամ առաջի,
Զի ծառայել քեզ չկարացի.
Արդ դու նայեա՛ց չիս քաղցրութեամբ,
Թո՛ղ զլանցանս ներողութեամբ,
Ուրախացո՛ւ առ Քեզ կոչմամբ,
Եւ սփոփեա՛ քո սուրբ տնայեամբ.
Վասն խաչիդ՝ զոր պաշտեցի,
Եւ տո՛ւք անուանդ՝ զոր կրեցի,
Սիմեոն կաթողիկոս Երևանցի,
Ի ՌՄԻԹ թոռի, եւ յուլիսի 26-ի,
Ի Վարդապառ կիրակեի»:

* Ծարուհակված «Էջմիածին» ամսագրի 1971 թվականի №№ Ա-ից և Գ-Ը-ից:

²⁶⁴ Շահխաթունյանց, հ. Ա, էջ 231:

116. Ղուկաս Ա. Կարնեցի (1780—1799).— Կարնո գավառի Քղի ավանից էր. եղել է նվիրակ Ռումելիի և Խրիմի, ապա նվիրակ

և առաջնորդ Զմյուռնիո: Սիմեոն կաթողիկոսի աշակերտն էր: Նրա ծերության ժամանակ կանչվեց ի ա. Էջմիածին, ուր մնաց իբրև օգնական և գործակից՝ մինչև նրա մահը:

Ղուկաս կաթողիկոսը վախճանվել է 1799 թվին, 77 տարեկան հասակում և թաղվել է ա. Գալանեի վանքի հարավային մասում. այդ է վկայում ինչպես այսօր գոյություն ունեցող շիրիմաքարը, այնպես էլ Ծախաթունյան սրբազանը. «Ղուկաս Կարնեցի... կացեալ ի հայրապետութեան գամս ԺԹ, և ամիսս Ե. վախճանեցաւ ի 28 դեկտեմբերի 1799 յութերորդ ժամու գիշերին. գորոյ գմարմին յառաջիկայ ասոր տօնի Որդոցն Որոտման հանգուցանեն ի գալթի եկեղեցոյ սրբոհոյն Գալիանեայ կուսի ի հարաւա-կողման»²⁶⁵:

Ա. Գալանեի վանքում մենաստանի գալթի հարավային մասում, Միհաս Ա. Ակնեցու շիրմի կողքին տեսնում ենք Ղուկաս Կարնեցու շիրիմը, որն ունի հետևյալ տապանագրությունը.

«Յարկ դամբարանիս է վեհին Մեծի, Տեառն Ղուկասու կաթողիկոսի. Բնիկ գաւառաւ էր սա Կարնեցի, Հանդարտակեցաւ եւ ջանիք բարի, Թէպէտ դիպեցաւ դառն ամանակի, Պատեցեալ վշտօք ըստ փողոյն մեծի, Այլ յօրէ կոչմանն եղ իսկ ի մտի, Ծբեղազարդել զգահն հրաշալի. Որ եւ ետ ծաղկել կարի սխրալի, Զմեջ տաճարին Միածնաիջի: Նա եւ նորոգել ետ շուրջանակի, Ծինեալ եւ այլ շէնս՝ որք են իսկ յայտնի: Ապա ընկալեալ զվախճան բարի. Դիմեաց առ Քրիստոս յոյսն ամենայնի. Յորմէ ընկալցի զվարձս բարի, Եւ յարքայութեան նորին հրճուեսցի. Ամփոփեցաւ յամի տեառն 1799 ի դեկտեմբեր 29, ի Տօնի որդոցն որոտման»:

117. Ընտրյալ կաթողիկոս Հովսեփ Արդուրյան: Ծնվել է Սանահինում 1743 թվին: Թիֆլիսում հիվանդանում է և այնտեղ վախճանվում 1801 թվին: Արդուրյանին ընդունում են լոկ անվամբ կաթողիկոս²⁶⁶:

Ժիրիմը գտնվում է ա. Գալանեի վանքի արևմտյան գալթի հարավային կողմում (վեցերորդ գերեզմանը): Տապանագրությունը հետևյալն է.

«Արդուրյան քաջ արհին,
Տէր Յովսէփ պանծալին.

²⁶⁵ Ծախաթունյանց, «Ստորագրութիւն», հ. Ա, էջ 231—232:

²⁶⁶ «Ազգապատում», մասն Բ, էջ 3242:

Կայսրընտիր արժանին.
Մեծ գահիս Միածնին,
Այլ տապար ժանտ մահուն,
Ի սա իսկ հար իսկոյն.
Որոյ կամք կալ յաթոռ,
Եմուտ աստ ի քուն խոր:
1801, յ-9 մարտի»:

118. Դավիթ Ե Լեիզեթցի (1801—1807). — «Կացեալ ի նոյն սենեկի յաթոռ Էջմիածնի բազում ջերմեռանդութեամբ ամս Ժ, և ամիսս Ե, վախճանեցաւ ի 31 հոկտեմբերի 1817 և եղաւ մարմինն ի տապանի ի գալթի տաճարի սրբոհոյն Գալիանեայ ի հիւսիսակողման»²⁶⁷:

Նրա գերեզմանը պահպանվել է մինչև մեր օրերը: Նշված շարքում հինգերորդն է և ունի հետևյալ տապանագրությունը.

«Մհա՛ դամբարան եւ յարկ բնակութեան,
Դաիթ Հօրն այն դիոյ հանգստեան.
Կաթողիկոսի շնորհիւ օծութեան,
Եւ Հայրապետի գահիս սրբութեան,
Որոյ դադարեալ ի խռովութենէ,
Զկնի հրաժարման ի վեհութենէ.
Միտով միշտ գգուեալ ի պետէն մերմէ,
Սրբազան տեառն մեծէն Եփրեմէ.
Հանգեստ սա յամի տեառն փրկչական,
Հազար ութն հարիւր տասնէօթն

թուական:

Ի նոյնքերի ասոր միական,
Մեծաշուք փառօք եղաւ յայս տապան»:

119. Դանիել Ա. Սուրմառեցի (1807—1808). — 1802 թվին Բագրևանդում օծվում է կաթողիկոս: Այդ օծումից հետո սկիզբ է առնում Դավիթ-Դանիելյան վեճը:

Ռուսաց 1808 թվին դեպի Կովկաս արշավանքի ժամանակ պարսիկ խանի հարկադրանքով գնում է Երևանի քերդը և «ուր հասեալ յօր մահուն՝ վախճանեցաւ 1808 յ9 հոկտեմբերի. և մարմինն նորա զկնի պատե-րազմին քերեալ լԵրևանայ լճմիածին՝ ամփոփեցաւ առ հիման սեանն մեծի զանգա-կատան սրբոյ տաճարիս ի հարաւ կուսէ»²⁶⁸: Գերեզմանաքարը ունի հետևյալ տապանագրությունը.

«Կաթողիկոս Ամենայն Հայոց

Դանիել Ա. Պապազեցի

Վախճանեալ յ9 հոկտեմբերի 1808»:

120. Եփրեմ Ա. Չորագեղցի (1809—հրժ. 1830, վխճ. 1835). — Ծնվել է 1750 թվին Երեւանի Չորագեղում: Նվիրակ Հնդկաստանի և ապա Ռուսաստանի: 1830 թվին վերջնականապես հրաժարվում է գահից՝ ծերու-

²⁶⁷ Ծախաթունյանց, հ. Ա, էջ 233:

²⁶⁸ Ծախաթունյանց, հ. Ա, էջ 234:

թյան և այլ պատճառներով: Վախճանվել է 1835 թվի հուլիսի 16-ին և ապա 18 հուլիսին հանդիսավոր հողարկավորությամբ ամփոփում են մարմինը «ի միջին տեղում գերեզմանոցի միաբանության»՝ ըստ յանձնարարության իրոյ, յորոյ վերայ և կառուցափոքրիկ շինուածք վիմակերտ և արկաւ ի վերայ շիրմին մարմարոնեայ վէմ պատրաստեալ յառաջագոյն՝ որ ունի գրուած յինքեան՝ ըստ այսմ:

«Եփրեմ առաքինութեամբ սրբանեայ Հայրապետ» ծնեալ յամի տեառն 1750. կաթողիկոսացաւ ի 1810, եւ ընկալեալ ի թագաւոր կալսեթէ ամենայն Ռուսաց զասպետութիւն սրբոյն Ամենայի Ա. Աղեքսանդրի Նեացոյ և Անդրէի Առաքելոյ. վերափոխեցաւ յաստեացս երջանիկ մահուամբ յանձն կեանսն յախտենից. եւ եղաւ յաշմ շիրիմ ի 1835, ի 16 յուլիսի»²⁶⁹: Հիշատակս Շիրիմը և տապանագրութիւնը մնում է:

121. Հովհաննէս Ը Կարբեցի (1831—1842).—Կարբեցի կաթողիկոսը ծնվել է 1762 թվին: Նոր էր թևակոխել իր 80-րդ տարին, և տառապում էր քարի հիվանդությամբ: Վախճանվում է 1842 թվին, մարտ ամսի 25-ին: Մարմինը ամփոփվում է Մայր տաճարի դռան առաջ, զանգակատան հյուսիսակողմը, ապիտակ հասարակ մարմարից տապանաքար է դրվում վրան հետևյալ տապանագրությամբ.

«Կաթողիկոս Ամենայն Հայոց
Հովհաննէս Ը Կարբեցի
Վախճանեցաւ ի 1842 ամի մարտի 25»:

122. Ներսէս Ե Աշտարակեցի (1843—1857).—Ծնվել է 1770 թվին Աշտարակում: Ուսանել է ս. Էջմիածնում. նշանակվում է Վրաստանի առաջնորդ 1814 թվին: Հիմնել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: 1828 թվի ռուս-պարսկական պատերազմի ժամանակ ծավալել է հայրենասիրական մեծ գործունեություն:

1857 թվի փետրվարի 13-ին, 86 տարեկան հասակում, վախճանվում է Թիֆլիսի առաջնորդարանում գրասեղանի առջև:

Մարմինը պահվում է առաջնորդարանում մինչև փետրվարի 17-ը և ապա մեծ հանդիսավորությամբ մարմինը փոխադրվում է ս. Էջմիածին՝ փետրվարի 26-ին: Հաջորդ օրը՝ փետրվարի 27-ին, չորեքշաբթի, մարմինը ամփոփում են Մայր տաճարի զանգակատան հարավային մասում, Դանիել կաթողիկոսի շիրմի մոտ²⁷⁰, դեղնագույն մար-

մարիոնից շիրիմաքարի տակ հետևյալ տապանագրությամբ.

«Պաշտպան հայրենեաց կաթողիկոս Ամենայն Հայոց Ներսէս Ե Աշտարակեցի, ծնեալ ի 13 փետրվարի 1761 վախճանեալ ի 13 փետրվարի 1857»:

123. Մատթէոս Ա. Կոստանդնուպոլսեցի (1858—1865).—Ազգանունով Չոխաշյան. նախկին պատրիարք Կ. Պոլսի և առաջնորդ Չմյուռնիայի: Համարվում էր իր ժամանակի գիտնական հոգևորականներից մեկը: Հեղինակած է բազմաթիվ կրոնաշունչ գրքեր:

Կաթողիկոսության ժամանակ կարգավորում է Արևելահայաստանի և ռուսական կայսրության մեջ եղած հակակական ծխական դպրոցները, ինչպես նաև Մայր Աթոռի դպրոցն և ձեռագրատունը: Կազմել է տալիս Մայր Աթոռի ձեռագիրների «Կարինյան ցուցակը» (1863 թ.):

Կարճատև հիվանդությունից հետո վախճանվեց 1865 թվի օգոստոսի 27-ին, վերափոխման ութերորդի կիրակի օրը:

Թաղվել է ս. Գալանեի վանքում, հյուսիսային մասում, դամբանաշարում չորրորդը: Շիրիմը ունի հետևյալ տապանագրությունը.

«Կաթողիկոս Ամենայն Հայոց
Մատթէոս Ա. Կ. Պոլսեցի
Վախճանեցաւ եօթանասուն
եւ մի ամաց (21 օգոստոսի 1865 ամի)»:

124. Գեորգ Դ. Կոստանդնուպոլսեցի (1866—1882).—Ծնվել է Կոստանդնուպոլսի Սամաթիա թաղում 1813 թվի հուլիսի 13-ին և 53 տարեկան հասակում, 1866-ին ընտրվեց կաթողիկոս: Եղել էր Պրուսայի առաջնորդ, ապա Կ. Պոլսի պատրիարք:

Հիմնեց «Արարատ» ամսագիրը: Բացեց Գեորգյան ճեմարանը ս. Էջմիածնում, 1874 թվին և իր եկեղեցաշեն ու կրթական գործունեության համար կոչվեց Մեծագործ:

Գեորգ Դ. դեռևս 67 տարեկան հասակում 1880 թվին լրջորեն հիվանդացավ և 1882-ի դեկտեմբերի 6-ին վախճանվեց 69 տարեկան հասակում: Այսօր էլ ս. Էջմիածնի Մայր տաճարի զանգակատան հյուսիսային կողմում կա մի գերեզման, տեղական մարմարից, հետևյալ տապանագրությամբ.

«Հանգիստ սրբաւնեալ մարմնոյ Գեորգ Չորրորդ կաթողիկոսի Ամենայն Հայոց Կ. Պոլսեցոյ, ծնեալ 15 յուլիսի 1813 ամի եւ վախճանեալ ի 6 դեկտեմբերի 1882 ամի»:

125. Մակար Ա. Թեղոտցի (1885—1891).—Մակար կաթողիկոսը ծնվել է 1813 թվի ապրիլի 6-ին: Որդին էր Մուշ նահանգի Պուլանդզ գավառի Թորոտ գյուղացի Հագրոյանց տեր Պետրոս քահանայի: Զբաղվել է շինարարությամբ՝ նորոգեց Մայր տաճա-

²⁶⁹ Նույն տեղում, էջ 236:

²⁷⁰ «Արարատ», 1876, էջ 206—211:

րը²⁷¹, հիմնադրեց Մայր Աթոռի նոր տպարանը: Մահանում է 1891 թվականի ապրիլի 16-ին 78 տարեկան հասակում:

Մակար կաթողիկոսի մարմինը Ավագ երեքշաբթի օրից մինչև սուրբ Հարության օրը պահվեց Վեհաքանոն: Ապրիլի 22-ին, Հատկի մեռելոցի երկուշաբթի օրը, մարմինը հողին է հանձնվում Մայր տաճարի զանգակատան հարավային սյան մոտ:

Մակար կաթողիկոսի շիրիմը այսօր էլ գտնվում է հիշատակված տեղում, դեղնավուն շիրիմաքարի տակ, հետևյալ տապանագրությամբ.

«Մակար Ա. կաթողիկոս Ամենայն Հայոց. ծնաւ 1813 ամի 13 ապրիլի, վախճանեցաւ 1891 ամի, 16 ապրիլի»:

126. Մկրտիչ Ա. Վանեցի (Խրիմյան) (1892—1907).—Ծնվել է Վանում՝ 1820 թվին, ապրիլի 4/17. վարդապետ է ձեռնադրվել 1854 թվի փետրվարի 14-ին, եպիսկոպոս՝ 1868 թվին Գևորգ Դ կաթողիկոսից, 1862-ին՝ առաջնորդ Տարոնի և վանահայր Մշո ս. Կարապետ վանքին, Կ. Պոլսի պատրիարք՝ 1869 թվին:

Կաթողիկոս է ընտրվում 1892-ին և օծվում 1893 թվի սեպտ. 26-ին:

Վախճանվել է 1907 թվի հոկտեմբերի 29-ին (11 նոյեմբերի Գ. տ.), երկուշաբթի առավոտյան ժամը 9-ին: Թաղումը կատարվում է 6/19 նոյեմբերի 1907 թ. երեքշաբթի օրը: Խրիմյանը թաղվել է Մայր տաճարի զանգակատան հարավային կողմը՝ Ներսես Ե Աշտարակեցու շիրիմին կից: 1910 թվին հայոց Հայրիկի գերեզմանի վրա հունիսի 6-ին դրվում է տապանաքար, որը պատրաստել էր տվել ս. Էջմիածնի սինոդի հանձնարարությամբ Թիֆլիսի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունյանցը՝ Թիֆլիսում: Գերեզմանաքարը սպիտակ մաքուր մարմարիոնից է, մոտ երկու մետր երկարությամբ: Մարմար շիրիմաքարի չորս կողմերը շրջանակաձև քանդակված են նուրբ և սիրուն ծաղիկներ. գլխավերևում կա հայրապետական թագը, զույգ գավազաններ, հովվապետական և այլ զարդեր՝ բոլորն էլ բարձրաքանդակ և ուռուցիկ: Բարձրաքանդակ և շատ սիրուն տառերով փորագրվել է նաև տապանագիրը, որը գրել է Մատթեոս Բ Իգմիրլյան կաթողիկոսը: Ահա այդ տապանագրությունը.

«Կաթողիկոս Ամենայն Հայոց

Մկրտիչ Ա. Վանեցի

Խրիմեան Հայրիկ

Նուագող վշտից հայրենեաց հայոց

²⁷¹ «Արարատ» ամսագիր, 1888, էջ 288:

Ծնեալ ի 4 ապրիլի 1820 ամի
Վախճանեալ ի 29 հոկտեմբերի 1907 ամի»:

127. Մատթեոս Բ Իգմիրլյան (1908—1910).—Ծնվել է 1845 թվի փետրվարի 22-ին, Կոստանդնուպոլսի Գում-գաբու թաղում:

1864 թվին ձեռնադրվում է սարկավագ, 1865 թվի հունիսի 22-ին՝ վարդապետ, 1876 թվի մայիսի 17-ին՝ եպիսկոպոս:

1894 թվի դեկտեմբերին քվեով ընտրվում է Կոստանդնուպոլսի պատրիարք: 1908 թվի նոյեմբերին ընտրվում է կաթողիկոս: 1909 թվի սեպտեմբերի 13-ին, Խաչվերացի կիրակի օրը ընդունում է հայրապետական օծում:

1910 թվի դեկտեմբերի 11-ին վախճանվում է, և դեկտեմբերի 19-ին կատարվում է թաղումը: Նրա շիրիմը Մայր տաճարի զանգակատան հարավային մասում է գտնվում Գևորգ Դ կաթողիկոսի դամբարանին մոտ: Տապանաքարը ունի հետևյալ արձանագրությունը.

«Կաթողիկոս Ամենայն Հայոց
Տ. Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցի
1908—1910

Ծնեալ ի 22 փետրուարի 1845 ամի
Վախճանեալ ի 11 դեկտեմբերի 1910 ամի»:

128. Գևորգ Ե Սուրենյանց (1911—1930).—Ծնվել է Թիֆլիսում 1847 թվի օգոստոսի 28-ին: Եպիսկոպոս՝ 1882 թվի մայիսի 9-ին: Կաթողիկոս է ընտրվում 1911 թվի դեկտեմբերի 13-ին: Օծվում է 1912-ի հունիսի 1-ին:

Վախճանվել է խորը ծերության մեջ. ս. Էջմիածնում, 1930 թվի մայիսի 8-ին: Թաղումը կատարվել է մայիսի 18-ին: Թաղվել է Մայր տաճարի զանգակատան հարավային մասում, Մակար կաթողիկոսի շիրիմին առընթեր, որտեղ և այսօր հանգչում է դեղնավուն մարմարյա շիրիմաքարի ներքո: Ծիրիմը ունի հետևյալ տապանագրությունը.

«Կաթողիկոս Ամենայն Հայոց
Տ. Տ. Գևորգ Ե Տիֆլիսեցի
1911—1930

Ծնեալ ի 28 օգոստոսի 1847 ամի
Վախճանեալ յ8 մայիսի 1930 ամի»:

129. Խորեն Ա. Մուրադբեգյան (1932—1938).—Ծնվել է Թիֆլիսում 1873 թվին: Վարդապետ՝ 1901 թվին: 1910 թվի սեպտեմբերի 19-ին եպիսկոպոս:

1932 թվի նոյեմբերի 10-ին ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովում ընտրվում է կաթողիկոս և օծվում կիրակի, 13 նոյեմբերի³¹⁰:

³¹⁰ Ա. Հատիտյան, «Էջմիածին», 1968, № 9, էջ 28—85, № Դ, էջ 19—27:

Վախճանվում է ս. Էջմիածնում 1938 թվի ապրիլի լույս 6-ի գիշերը և թաղվում ս. Գալանեի վանքի արևմտյան դռան մոտ: Վեհափառ Հայրապետը Խորեն կաթողիկոսի շիրմի վրա դնել է տալիս սպիտակ մարմարից գերեզմանաքար հետևյալ տապանագրությամբ.

**«Կաթողիկոս Ամենայն Հայոց
Տ. Տ. Խորեն Ա.
1932—1938»**

136. Գեորգ Զ Չորեքչյան (1945—1954).
—Ծնվել է 1868 թվի նոյեմբերի 2-ին Նոր Նախիջևանում (Դոնի Ռոստով): 1889 թվին ստանում է սարկավագի աստիճան:


Երկար տարիներ պաշտոնավարում է հայրենի բաղաբում (1894—1913). վարդապետ է ձեռնադրվում 1913 թվին ս. Հովհաննիս վանքում: 1917 թվին՝ եպիսկոպոս և

Վրաստանի առաջնորդ: 1936 թվին կաթողիկոսական տեղապահ. 1941 թվին ազգընտիր տեղակալ, ապա 1945 թվին կաթողիկոս Ամենայն Հայոց:

Վերաբացում է 1945 թ. ս. Էջմիածնի հոգեվոր ճեմարանը. 1944 թվին հրատարակում է «Էջմիածին» ամսագիրը: Վախճանվում է 1954 թվի մայիսի 9-ին: Թաղումը կատարվում է 1954 թվի մայիսի 27-ին և աճյունը ամփոփվում է Մայր տաճարի զանգակատան հարավային մասում՝ Խրիմյան կաթողիկոսի դամբարանի մոտ: Շիրմի վրա դրվում է սև գրանիտի դամբանաքար հետևյալ տապանագրությամբ.

**«Գեորգ Զ հայրենասէր կաթողիկոս
Ամենայն Հայոց
ծնեալ 2-ն նոյեմբերի 1868 ամի
Վախճանեալ յ9 մայիսի 1954 ամի»:**





Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՕՐԵՐԻ ԿԱՆՈՆԱԳԼՈՒԽՆԵՐԸ

Քրիստոնեական, մասնավորապես արևելյան-քրիստոնեական արվեստի աչքի ընկնող հատկանիշներից մեկը՝ գրական պաշտամունքային խոսքերի երաժշտական մարմնավորման բազմազանությունը, բնորոշ է նաև հայ եկեղեցական երգային մշակույթին:

Խոսքն այստեղ հայ հոգևոր երգարվեստի գրական-երաժշտական տեսակների (ժանրերի) շուրջ չէ, թեև կապված է դրան, և ոչ էլ նույն արվեստի ուշ միջնադարյան էապես համեցած մի նոր ճյուղավորման (ի դեմս Երուսաղեմի, Վենետիկի, Կ. Պոլսի, Նոր Զուղայի ու Էջմիածնի նախաթաշնանական երգեցողությանը), այլ՝ մի կողմից ավելի տարրոլումակ (բան գրական-երաժշտական տեսակը), և մյուս կողմից՝ ավելի հին ու հիմնական (բան ուշ միջնադարի հիշյալ ճյուղավորումը) երևույթների մի շրջանակի մասին:

Ողջ հաջախարհի ու նաև Կիլիկիայի տարածքների վրա V—XV դարերի ընթացքում եկեղեցական երաժշտությունը թե՛ ստեղծագործական և թե՛ կատարողական առումով զարգացել է երկու ուղղությամբ: Պարզ, անպաճույճ, գեղջուկ-ժողովրդական երգեցողության մոտիկ մի կադասյարի մեջ՝ կրթական կենտրոններից հեռու գտնված գյուղական-գավառական եկեղեցիներում¹, ուր, հատկապես Կիրակնօրյա պա-

տարագներից, պաշտոներգությանը անհրաժեշտաբար մասնակցել են աշխարհականներ ևս²: Ու մասնագիտացված (պրոֆեսիոնալ) արվեստի բարձր ոճով՝ նշանավոր վանքերին կից մեծ եկեղեցիներում, մասնավոր կաթողիկոսանիստ կենտրոնների մայր տաճարներում, ուր գործել են դպրոցավարտ Դեկղեցականներ, սարկավագներ ու սարկավագապետներ, դպրաց դասեր, դասապետներ ու դպրապետներ:

Այլախնդու պաշտոներգությունների կատարմանը զուգընթացաբար, գրական խոսքերի յուրացման գործում՝ թարգմանչաց արդեն օրինականացված դասերի օգնությամբ: V—IX դարերում այն բարգավաճում է առհասարակ կրթական կենտրոններից հեռու գտնված վայրերի մեջ, և զարգացած ախտատիրության շրջանում հասնելով ուրույն ծաղկման, օրինաչափորեն կապված է մնում գյուղական միջավայրին (մի ժամանակ, երբ արվեստների մասնագիտացված ճյուղերում պատմաշրջանի ոգին ու ճաշակը թելադրում է քաղաքը, քաղաքային կյանքն ու մշակույթը):

² Այստեղ մենք նկատի ունենք ոչ թե հնավանդ ու գեղեցիկ այն սովորույթը, որով հավատացյալները մասնակցել են պաշտոներգությանը՝ «Ամեն», «Եւ ընդ հոգւոյ թում», «Առաջի քո Տէր», «Կեցո Տէր» և ուրիշ պատասխան-բացականչություններով, և կամ միանալով երգչաց դասերին, սաներ՝ «Տէր ողորմես»-ին (ինչպես տեղեկացնում է դեռևս Խոսրով Ամենացին): Այլ՝ կղերական փոքրագույն աստիճանավորների՝ օրհնված դպիրների իսպառ բացակայության ոչ հազվադեպ դեպքերը (որոնց ժամանակին ակնարկել է նույնիսկ Ն. Լամբրոնացին), երբ երգեցիկ դպիրների պաշտոնը ամբողջապես կատարել են աշխարհական մանուկներ և կամ պարզապես տարբեր հասակի աշխարհականներ. (հմտ. Հ. Վ. Հացունի, Պատմություն Հայոց աղօթամատույցին, Վենետիկ, 1965, էջ 89 և 94—96):

¹ Այս ուղղությունը հնագույն ծագում ունի ինչպես այլուր, այնպես էլ հայկական կյանքում: Նրա արմատները թաղված են քրիստոնեական գաղտնի համայնքների կազմակերպությանը վերաբերող վաղ ժամանակներում: Ըստ այդմ՝ Հայաստանում երգեցողության սույն ոճը սկսվում է ձևավորվել առնվազն II—III դարերից (հմտ. մեր հոդվածը՝ Քննական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության, Բ, ԳԱ «Լրաբեր», 1971, № 1, էջ 44—45): IV հարյուրամյակի ընթացքում նույն այդ ոճն ամրապնդվում ու զարգանում է՝ եկեղեցիներում

Առաջին ուղղությունը, որը դարձրեց շարունակ սնել է գյուղական-գավառական համեստ ճաշակի տեր զանգվածներին, ըստ բոլոր տվյալների, աչքի է ընկել, գլխավորապես, հոգևոր եղանակների կազմության ու վերադասարկության ազգային-ավանդական առանձնահատկությունների առավել հստակ պահպանումով³։ Երկրորդի համար հիմք են ծառայել նույն առանձնահատկությունները։ Սակայն այն, որպես մասնագիտացված ուղղություն, զարգացել է շատ ավելի լայն մի հունով։ Օգտվել է ոչ միայն գեղջուկ-ժողովրդական, այլև գուսանական աշխարհիկ արվեստից, հետևողականորեն հաղորդվել է Արևելքի և Արևմուտքի երաժշտական առաջավոր մշակույթներին, նաև հենվել է սեփական տեսության վրա։ Եվ օրինաչափորեն դառնալով հին ու միջնադարյան հայկական հոգևոր երգարվեստի պատմական զարգացման ու գաղափարական-գեղարվեստական իդեալներին հիմնական կրողը, ավանդական արժեքները ճո-

³ Պատմական օրինաչափությամբ գյուղական կյանքին կապված եկեղեցական երգեցողության այս ուղղությունը բնականաբար գրավեց հայ գյուղի իդեալականացրած Կոմիտասի հատուկ ուշադրությունը։ Այնպիսի, գավառներում, գյուղերում և առհասարակ հեռավոր խուլ վայրերում ձայնագրելով մի ամբողջ շարք եկեղեցական ստեղծագործություններ, Կոմիտասն անմիջական առնչություններ բացահայտեց դրանց, ժողովրդական աշխարհիկ երգերի ու հոգևոր երաժշտարվեստի մասնագիտացված ճյուղին վերաբերող պարզ (հասարակ օրերի) երգեցողության միջև։ Եվ նա մեծ կասկածներ ապրեց մասնավորապես տոնական ծանր, զարդոյրույն նմուշների նախնական հարազատության նկատմամբ, վերջիններս համարելով ուշ միջնադարում պարսկական և թուրքական արվեստներից ներհոսած ազդեցությունների կրողներ (հիմա՞ օրինակ՝ Հայոց եկեղեցական երգեցողությունը, ձեռ.՝ ԶԱԳԱԹ, Կոմիտասի դիվան, Երուս. 862)։ Այդ կասկածները (ինչքան էլ որ դրանք արտահայտված լինեն դրական-հաստատական շարադրանքով), ծագել են քննարկվող խրեդոյներին վերաբերող նրա երաժշտական-տեսական մտքերի նախնական խմորման աստիճաններից մեկի վրա։ Հանի որ գործնականում («Պատարագ»-ում ու հոգևոր ուրիշ երգերի մշակումներում, ձայնագրություններում, վերձանություններում թե վերականգնումներում և ավելի ուշ, քան վերոհիշյալ կասկածների հոգևորը), Կոմիտասը ինքը ևս առաջ բերավ ծանր, ոլորուն ու զարդարուն հոյակերտ եղանակներ։ Հարցն այն է, որ մեր եկեղեցական ծանր եղանակների բարդ ու ճոխ հյուսվածքը հաստատագրված է XII—XIII դարերի խազալիոր գրչագրերում։ Եվ ընդհանրապես հայ եկեղեցական ծանր երգեցողությունը ոճական առումով ուրիշ ծանր չէ, քան զարգացած ալիստատիկության շրջանի մեր մանրանկարչության, նարտարապետության ու բանաստեղծության մեջ ևս դրսևորված՝ գեղագարդ-բողոքոջափառ արտահայտվելակերպի համապատասխանը։

խացրել է նորանոր զանգվածով, ի քաղաքարություն աշխարհիկ ու հոգևոր ազնվականության, այլև պալատական շրջանների հարստերին աճող ու նրբացող ճաշակի։ Այս ուղղությունն է, որ X—XV հարյուրամյակներում մի քանի անգամ արձագանքելով նաև հայ քաղաքային կյանքի զարգացման հաջորդական աստիճաններին հատուկ հասարակական հովերին, հոգևոր երաժշտության՝ որպես մոնոդիկ արվեստի հեղաշրջման դարավոր միտումները հասցնում է լիակատար իրագործման։ Վաղ միջնադարի մեծակերտ (մոնումենտալ) ձևերի հիման վրա բարձրանում են բազմահնչյուն ոլորումներով հարուստ մեծակերտ-զարդարական (մոնումենտալ-դեկորատիվ) հոյակերտ ստեղծագործությունները՝ տաղ, մեղեդի, սրբատաղություն, ծանր ու ստեղծ շարական և այլն։ Հանդես են գալիս արվեստագետներ, որոնց ստեղծագործական ջանքերն ուղղվում են գլխավորապես անցյալում հորինված երգերի երաժշտական բաղկացուցիչը վերանայելով ճոխացնելու նպատակին⁴։

Սեզ հետաքրքրում է հոգևոր եղանակների ստեղծման ու կատարման մասնագիտացված ուղղությունը⁵,

⁴ Թե՛ Հայաստանում, և թե՛ մանավանդ Կիլիկիայում գործած անանուն այդ երգիչները զարգացած ալիստատիկության շրջանի (մասնավորապես XII—XIII դարերի) ճաշակի համաձայն զարդոյրելով վերադասակարգել են ոչ միայն հնագույն երաժշտության ստեղծների՝ Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի ու այլոց մի ամբողջ շարք ստեղծագործությունները, այլև նույնիսկ Գրիգոր Նարեկացու տաղերից նմուշներ, ինչպես նաև նրա ուրիշ ափսոսելի (տե՛ս մեր հոդվածը՝ Կոմիտասը և Նարեկացու տաղերը, «Հանրեր Երևանի համալսարանի», 1969, № 3, էջ 46 և 48)։ Հատկանշական է, այս տեսակետից, որ XIII—XIV դարերում Բյուզանդիայում ևս հանդես են եկել *μελοσουργοί* կոչված երաժիշտներ, որոնք նույնպես հիմնականում, հին երգերն են ծաղկեցնելով վերադասակարգելով (տե՛ս E. Wellesz, A History of Byzantine Music and Hymnography, L., 1962, էջ 238)։ Բայց ահա երաժշտական «Լարուսի» էջերում հանդիպում ենք տողերի, որոնց համաձայն հայ հոգևոր երաժշտության մեջ պարզ հյուսվածքի հին երգերի ծանրացումն ու զարդոյրումը իբրև թե, տեղի է ունեցել, հայկական նոր ձայնագրության ստեղծումից հետո, Հ. Լիմոնջյանի, Գ. Երանյանի, Ն. Թաշճյանի և Պոլսահայ ուրիշ *«embellisseur»* (ծաղկեցնող) երաժիշտների միջոցով, որ կոպիտ սխալ ու մեծ թյուրիմացություն է (հիմա. Larousse de la Musique, Paris, 1957, հատ. I, էջ 46)։

⁵ Չասելու համար՝ լոկ մայրաքաղաքային կաթողիկե եկեղեցիներում և կաթողիկոսանիստ վանքերի մայր տաճարներում կիրարկված երգեցողությունը՝ ծավոյր, պատմական ճակատագրի բերմամբ, դարերի ընթացքում չափազանց շատ են փոփոխվել մեր մայրաքաղաքներն ու քաղաքական բարձրագույն իշխանությանն նստավայրերը, և էլ ավելի՝ կաթողիկոսանիստ կենտրոնները։ Նույնիսկ մի կողմ դնելով Ար-

որի շրջանակներում էլ հնուց ի վեր տարբերվել են կանոնացված և ազատ երգեցողությանց մեծ հատվածներ:

Մի կողմ թողնենք IV դարը, երբ մեզ մոտ ազգային հոգևոր արվեստը զարգանում էր աղմուսերգության⁵ մեր արդեն հիշատակած⁶ հայկական-ժողովրդական միակ հունի մեջ (զուգահեռաբար՝ պաշտոնական ալլադու երգեցողությանց): Գրեթե գյուտից հետո հայ եկեղեցական երաժշտության մեջ մշտապես կենցաղավարել են կանոնական (կատարման առումով պարտադիր) և ազատ երգեր: Վերջիններս պատմական հեղաշրջման որոշ փուլում նույնպես կանոնացվել են, բայց դրանց փոխարեն ստեղծվել են նորերը, որոնց կատարումը դարձյալ միատեմանակ ազատ է եղել:

Այսպես, ս. Սահակը և ս. Մեսրոպը՝ ամենօրյա կատարման համար պարտադիր համարելով, կանոնացրել են լոկ հայոց հնագույն Սաղմոսարան-ժամագրքի բովանդակությունը (ուրիշ աղմուսականություն, կից՝ մարգարեական տաս օրհնություններ, քաղաք, աղոթք ու համաքրիստոնեական երկու երգ): Մինչդեռ նույն շրջանում արդեն ծագած հայ հոգևոր ինքնուրույն երգարվեստը (իր «կցուրդ» տիպի բազմապիսի կտորներով) կանոնացումից ազատ է մնացել, ու այդպես էլ զարգացել է մի քանի հարյուրամյակ⁷:

VIII դարում, երբ, Ստեփանոս Այունեցու (երկրորդի) նախաձեռնությամբ ու ջանքերով հայ իրականության մեջ աստիճանաբար ընդունելություն է գտնում եկեղեցական միևնույն տոնին վերաբերող ուրիշ երգերից բաղկացած շարքը, կարգը կամ կանոնի տեսակը, (ժանրը), «կցուրդ» տիպի հին ստեղծա-

գործությունները շարվում, կարգվում են՝ որպես նոր կանոնների բաղկացուցիչներ (օրհնություններ, հարցեր, գրքեր, ողորմյաներ, տերհերկնիցներ և այլն), որով և կանոնացվում են⁸:

Բայց ահա՝ ազատ երգեցողությանց հատվածն ևս սկսում է նոխանալ տաղային ստեղծագործության ոլորտին պատկանող նոր գործերով, որոնք մեծ ծաղկում են ապրում հատկապես X դարում ու ավելի ուշ, և որոնցից շատերը երկար ժամանակ կենցաղավարում են նույնիսկ որպես արտապաշտամունքային երգեր. մինչ XIII—XV հարյուրամյակներում գիտակ ու նախաձեռնողի ձեռքեր դրանք ևս հավաքելով զանազաններում, ստեղծում են՝ զանգ-տաղ-մեղեդի-հորդորակ տիպի շարքեր, դարձյալ կանոնացնելու նպատակով⁹:

Կարևոր է դիտել, որ երգեցողությանց ազատ հատվածներ ևս մշակելով դրանք ժամանակ առ ժամանակ կանոնացնելու փորձը (պրակտիկան), բնորոշ արտահայտություններից մեկն է՝ յուրաքանչյուր նախորդ պատմաշրջանի տոնական կտորները ամենօրյա դարձնելով, հանդիսալոր պարագաների համար միշտ նորերն ունենալու պահանջի: Այդպես է, քանի

կան») անվանված երգերի զարգացման սկզբնադարը (տե՛ս մեր հոդվածը՝ Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարվեստը, «Բանբեր Մատենադարանի», № 7, Երևան, 1964, էջ 184—188):

⁵ Այունեցին գործն սկսել է վերոհիշյալ Սաղմոսարան-ժամագրքում ընդգրկված մարգարեական տաս օրհնությունների հարապատմությամբ տարբեր ձայնեղանակներում տակավին V—VI հարյուրամյակներում ստեղծված շուրջ 80 կցուրդներից՝ Հարության ավագ օրհնությունների ած-դկ ուր շարքերի կազմումով, որով միաժամանակ օրհնականացրել է նաև ուր-ձայնի նոր (մեղեդիական նորոգված բովանդակություն ունեցող) և հոգևոր ինքնուրույն երգերի միակցությանը վերաբերող մի համակարգ (փաստորեն՝ շարականի ուր-ձայնը):

⁹ Մեզ հասած հնագույն զանազանը (զանգերի ու տաղերի տակավին առանձին մասերով), գաղափարված է 1241 թ. Կիլիկիայում (տե՛ս Fr. Macler, Catalogue des manuscrits arméniens... de la bibliothèque nationale, Paris, 1908, էջ 36—37. Մաշտոցի անվ. Մատենադարանում պահվում է գրագրիս մանրածապալներ): Ժողովածուիս զարգացման մեջ հանգրվան կազմող գրագիր է դարձյալ Կիլիկիայում (Սսում) 1394-ին օրհնակված զանազանը (տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3508), ուր եկեղեցական միևնույն տոնին նվիրված զանգ, տաղ ու մեղեդի տիպի երգերը շարքերով են զետեղված արդեն: Եվ վերջապես՝ Գր. Խաթեցու կազմած զանազանով (Մատենադարան, ձեռ. № 5328) փակվում է ժողովածուի զարգացման նախորդ շրջանն ու սկսվում նրա ուշ միջնադարյան կյանքը, երբ այն պարտադիր-կանոնական չի դառնում լոկ անկման պայմանների բերումով. վաճառական դպրոցներում այլ-եվս չեն դաստիարակվում ոչ միայն զանազանի,

տաղը, ստանում ենք՝ Վաղարշապատ-Դվին-Աղթամար-Արգինա-Անի-Ծամնդավ-Հոռմյուլ-Սիս (ու դարձյալ) Էջմիածին (մանրամասնությանց մեջ տակավին ոչ լրիվ) երկար շարքը, ավելի ճիշտ՝ աշխարհագրական հսկա տարածք ընդգրկող շրջանակը: Այս տեսակետով բոլորովին հակառակ պատկեր է ներկայացնում, օրինակ, Բյուզանդիան, որն իր գոյության ողջ ընթացքում (IV-ից մինչև XV դարի կեսերը) որպես մայրաքաղաք (այն է՝ քաղաքական ու հոգևոր իշխանության և տնտեսական ու մշակութային կենտրոն) պահպանեց ու զարգացրեց միևնույն միջնատեղը՝ Կոստանդնուպոլիսը: Այնպես, որ բյուզանդագետ արվեստաբաններն այսօր իրենց ուսումնասիրություններում կարող են հիմնական ուշադրությունն ուղղել այդ միջնատեղի գեղարվեստական արտադրանքի վրա, ինչպես իրավացիորեն վարվում է, ասենք, Վ. Լազարը, գեղանկարչության հետազոտության ասպարեզում (տես նրա՝ История Византийского живописи, М., 1947—48, երկու հատ.):

⁶ Տե՛ս մեր հոդվածը՝ Հասարակ օրերի կանոնագրությունը, «Էջմիածին», 1971, Դ, էջ 38:

⁷ Այս կետը չհասկացած հեղինակներն էին, որ ժամանակին նույնիսկ մինչև VIII հարյուրամյակ իջեցնել փորձեցին «կցուրդ» (ու հետագայում «շարա-

որ երգեցողությանը ազատ հատվածները սկզբից ենթ կատարվել են առավելագույն տոնական օրերին¹⁰։ ինչպես մեր, այնպես էլ օտարների մոտ։ Հայտնի է, օրինակ, որ Եփրեմ Խորին Ասորու կեցողությունը (տակավին հեղինակի կենդանության օրոք ու նրա մասնակցությամբ) կատարվել են կիրակի օրերին, տերունական տոներին և Մարտիրոսաց հիշատակների առիթով¹¹։

Կիրակու Գանձակեցին՝ խոսելով թարգմանաշատ մանանակաշրջանում ու նաև VII—VIII դարերում (մինչև նոր կանոնացումը) հորինված կցուրդների, այն է՝ ինքնուրույն ազատ երգերի ու նրանց հեղինակների մասին, մի ամբողջ շարք տոներ է հիշատակում, որոնց միջիով են եղել այդ երգերը¹²։ Եվ նույն Գանձակեցին ու Վարդան Արևելցին ևս, պատմելով Ներսես Գ. կաթողիկոսի օրոք հիշյալ ազատ ստեղծագործությունների փոխերգեցողության ընթացքում տեղի ունեցած նշանավոր շփոթի դեպքը, այն կապում են Վարդապետի տոնի հետ¹³։

Այսուհանդերձ, հարկավ, սխալ կլինի մտածել, որ կանոնական երգեցողությունը անփոփոխ կմնար հանդիսավոր օրերին. և կամ, որ տոնական արարողությունները նաև երաժշտականորեն ճոխացնելու պահանջը գոհացում կստանար լոկ ազատ երգերի կատարմամբ։ Խնդիրն այն է, որ եկեղեցին ներդաշնանաբար չէ, որ թույլ էր տալիս ինքնուրույն ազատ երգերի կատարումը, երգեր, որոնց ստեղծողներն իսկ հոգևոր պետեր են եղել։ Եկեղեցական շրջաններում մնուց ի վեր գոյություն է ունեցել տոնական արարողություններին համապատասխան շուրջ ու փալ գաղափարներին համապատասխան ձգտումը։ Եվ այդ ձգտման համաձայն էլ ծագել ու զարգացել են, առաջին հերթին, կանոնական երգերի եղանակների՝ հասարակ ու մանդիսավոր օրերի համար նախատեսված տարբերակների մանրամասն գրքերի ու կցորդաբանների քննադատությունը պատշաճ կերպով վերաբաժանելու ընդունակ «փոխառի» երաժիշտներ։

¹⁰ Ասում ենք առավելագույն, որովհետև այդ ազատ երգերի թվին են պատկանում նաև պահոց կցուրդները կամ շարականները։

¹¹ Rubens Duval, Anciennes Littératures Chrétiennes (La Littérature Syriaque), Paris, 1907, էջ 14—15։

¹² Կիրակու Գանձակեցի, Պատմություն Հայոց, (աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի), Երևան, 1961, էջ 29—30 (Արարիկն և երգաշարականաց թաղը և գեղեցիկ եղանակաւ և մեծ խորհրդով ճննդեանն Քրիստոսի և քառասորեայ գալստեանն ի տաճարն, մկրտութեանն և եկատրութեանն ի Քեթանիա և յերուսաղէմ, մեծի շարաքուն չարաբանացն և յարութեանն, համբարձմանն և հոգւոյ գալստեանն, խաչի և եկեղեցւոյ, և այլ տօնից տշրուականաց, և սրբոց ամենեցուն, ապաշխարութեան և ամենայն ննջեցեցոց)։

¹³ Կիրակու Գանձակեցի, նշվ. աշխատությունը, էջ 61—62։ Նաև՝ Հատարումն Պատմության Վարդանայ վարդապետի լուսարանեայ, Վենետիկ, 1862, էջ 69։

րակները։

Այս հարցը կարող է քիչ ավելի լայն լուսարանություն։

Նախքան հայ եկեղեցու կազմավորումը, համաքրիստոնեական երաժշտարվեստը (որի ժողովրդական ճյուղի նկատմամբ ընթացքին, հատկապես Մերձավոր Արևելքում, մասնակից են եղել հայ զանգվածները ևս)¹⁴, զարգացման երկու խոշոր շրջան էր բոլորել արդեն¹⁵։ Առաջինը, որ տեղ է մինչև II դարի վերջերը, հատկորոշվում է պաշտամունքային արարողությունների երաժշտական նկատմամբ սկզբունքների նախնական պետականության (տարբեր համայնքների մեջ). ինչպես և հեթանոսական ու աշխարհիկ արվեստից ներմուտը զգալապաշտական (սեմաուալիտական) տարրերի, այն ավարտուն կերպարների (սուներ՝ ամբողջական եղանակների) տարիքային օգտագործման, այլապես նվագարանների և նույնիսկ ծափ ու դարի կիրարկումով։ Երկրորդ շրջանում (մինչև IV դարի սկիզբները), երբ բազմազան ու ամրապնդված համայնքների գլուխ են կանգնում եկեղեցու մի ամբողջ շարք թագմակողմանի, համայնագիտական կրթություն ստացած լուսավորյալ հայրեր, ծեսն ու արարողությունը դրվում են կազմակերպական լուրջ հիմքերի վրա։ Ավելի ու ավելի են գիտակցվում հոգևոր կյանքի ճրգնավորական (ասկետական) ձգտումները և քրիստոնեական ծայնային (վոկալ) միաձայնության ոգեպաշտական (սպիրիտուալիտական) միտումները, պաշտամունքից աստիճանաբար¹⁶ վտարվում են պարը, նվագարանները։

¹⁴ E. Wellesz, Byzantine Music (տե՛ս Proceedings of the Musical Association, 1932, 1)։

¹⁵ O. Ursprung, Katholische Kirchenmusik (տե՛ս E. Bücken, Handbuch der Musikwissenschaft, Potsdam, էջ 12—14)։

¹⁶ Ծառմունք սկսեցին ընդհանրական եկեղեցու հույն և արևմտյան հայրերը։ Ասորի հովվապետները դանդաղեցին ընդատաշելու, հատկապես նվագարանների սխառտումն արգելելու հարցում։ Եփրեմ Խորին Ասորին ինքն իսկ նվագակցել է տավիղով իր կցուրդները կատարող երգեցիկ խմբերին (տե՛ս վերը նշված աղբյուրը)։ Այդ ժամանակ (IV դ.) Հայաստանում Ներսես Մեծի ձեռնարկումներն ընդհանրապես ժխտելով հեթանոսական սովորույթները՝ ողողվում էին նաև նվագարանների գործածության դեմ (մասնավորապես հուդարկալորությանը ընթացքում)։ Սակայն պատմությունից գիտենք, որ Ներսես Մեծի մամից հետո նվագարանները դարձյալ երևացին թաղման ծեսում, ու դարեր շարունակ կիրարկվեցին նրա մեջ, որովհետև այն չհալածվեցին հայ եկեղեցու կողմից, ինչպես ցույց տվեց Հ. Վ. Հացումյան (տե՛ս նրա հոդվածը՝ Եկեղեցական երաժշտության մասին, «Հագմուկ», 1917, № 5, էջ 207)։ Երաժշտական գործիքների սխառտումն ընդունված ավանդույթ է եղել մեզ մոտ նաև եկեղեցուց դուրս տեղի ունեցած հոգևոր ուրիշ շքերթների ու բացօթյա

Պատմական զարգացման պայմանի ընթացքը մի կողմից (այսինքն՝ ճգնաժամային ոգու խորացումով) հանգեցնում էր պաշտամունքային երաժշտության մեջ պարզ ու խիստ ոճի հաստատմանը¹⁷։ Մյուս կողմից, սակայն, պատմական նույն ընթացքը իր հետ բերում էր նաև եկեղեցական արվեստը նոր հիմքերի վրա ճոխացնելու անհրաժեշտությունը։ IV դարի սկզբներից վաղ քրիստոնեական երաժշտությունը թևակոխում էր զարգացման երրորդ՝ ամենավճռական փուլը։ Հայտնակող եկեղեցին կատարելագործելով իր կազմակերպական հիմունքները, ծեսի ու արարողության կատարումը բաժանում էր հստակ տարանջատված դերերի ու դրանք վստահում միայն խստորեն աստիճանավորված սեփական պաշտոնյաներին, (դպրից մինչև եպիսկոպոս)։ Այլև գատորոշված վերաբերմունք, մշակում դեպի եկեղեցական տարվա շրջանները (մեծ Պահք, Հինունք), ամիսներն ու շա-

րաթները (օրհնակ՝ ալագ շաբաթը), հասարակ օրերը, կիրակիները և սրբոց ու տերունական տոները, կանոնական երգերը ևս երաժշտական մարմնավորման ստույգ տարբերակելով ըստ ավուր պատշաճի։

Այս շարժումը Հայաստանում, քրիստոնեությունը աշխարհում առաջինը պետական կրոն հռչակած երկրում, ծավալվեց նույն IV դարում, չխոսելով V հարյուրամյակի մասին։

Ե. Տնտեսական անցած դարակազմերին հրատարակված և դպրաց դասերին վերաբերող մի հետաքրքիր կոնդակ է առաջ բերում (հաստատելու համար, և իրավացիորեն, թե «անկից առաջ ալ դպիրք այլ տեսակ կանոններ ունին եղեր»), ուր, ի միջի այլոց, ասվում է. «Ամենայն ժամերգությունը պարտին ըստ պատույ աուրն և ըստ վաղելությունն բանին երգել. այսինքն՝ ի հասարակ աուրս միջակ ձայնի, յորդոր ասացուածովք. յապաշխարութեան աուրս պահոց՝ ողորմագին մեղմ եղանակաւ, և յերեւելի աուրս՝ բարձր և ծանր եղանակելով, ըստ ամենայնի հրամանաւ ժամօրհնողին. և մի ոք հակառակ գրելոցս ըստ անորոշակին անբանաբար դողանչեացէ»¹⁸։

Եթե մտաբերենք, որ ժամերգության կանոնական մի շարք հատվածներ կան, որոնք իրենց գրական բնագրերով կրկնվում են հասարակ, պահոց և տոնական օրերին, ապա պարզ կլինի, որ այստեղ խստորեն նաև այդ հատվածների եղանակավորման ու կատարման մասին է։ Արդ, բոլոր հիմքերը կան հաստատելու համար, որ հատուկ պատրաստված երգեցիկ խմբերի գոյությունն ու նրանց միջոցով եկեղեցական տարվա կանոնական երգեցողությունները ևս սույն ու նման ձևերով զանազանելու ավանդույթը մեզ մոտ էլ վաղեմի արմատներ ունի։ Դպիրներ, փոխ առ փոխ կատարում, երգչաց դասեր, դասապետներ կամ դասերի առաջնորդներ, սարկավագներ և այլն՝ հիշատակվում են տակավին Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Նիշի, Հովհան Մանգակունու և այլոց աշխատություններում¹⁹։ Մովսես Խորենացին «սարկավագապետ» է անվանում ս. Սահակի աշակերտներից Երեմիային²⁰, որին Կորյունն էլ «հատվածպետեր պաշտոնյաների գլխավոր» կոչելով²¹,

արարողությունների ժամանակ։ Բուն եկեղեցում, ըստ եղած տվյալների, գործածվել են բոժոժավոր քնոցն ու բուրվառը, ծնծղան, կոչնակն ու զանգերը։ Ամեն ինչից երևում է, սակայն, որ այդ տվյալներն այնքան էլ հին չեն։ Համենայն դեպս՝ այլ բան են հուշում վաղ միջնադարյան մի քանի կարկառուն դեմքերի բնորոշ արտահայտությունները, որոնցից երկուսը առաջ բերեց դարձյալ Հ. Վ. Հացունին (տե՛ս «Բազմավագ», 1897, № 9, էջ 432)։ մաշտոցյան շարականներից մեկի պերճախոս սկզբնատողը՝ «Հընչմամբ փողոյ, սաղմոսարանաւ և բնարի օրհնեցէք զգուրն ի յերկինս» (պահոց բձ, տր.), և Հովհան Օճնեցու խոսքերը՝ «պարտ է ուսումնասիրացն... նուագարանօք քնարախարոյ լինել երաժշտական հոգւոյն» (տե՛ս Յովհաննու Իմաստասիրի Աւճնեցւոյ Մատենագրութիւնը, Վենետիկ, 1953, էջ 31)։ Սրանց կարող ենք ավելացնել Թեոդորոս Քոթեմալորի հետևյալ ասույթը, որին հանդիպում ենք Աստվածածնին նվիրված գովեստում. «Ընդհանրական առաքելաշէն եկեղեցիք Քրիստոսի, փառատրոդական երգաբանությամբ, հոգեզուարճ նուագարանօք վերագոչնացուք ի սերկեան աուրս դասավարդութեամբ» (տե՛ս նույն տեղը, էջ 199)։ X—XV դդ. մատենագիրները սակայն, անսպասելիորեն բարձրացնում են պաշտոններգության մեջ հին սովորությամբ նվագարաններ չներմուծելու (այլապես չափազանց ուշացած) խրդիլը, որ նույնպես պերճախոս փաստ է։

¹⁷ Որոշակի սահմանների մեջ դնելով բարձր զարգացած հեթանոսական արվեստի նվաճումներից օգտվելու փորձը, ինչպես նշել ենք ուրիշ աղբյուր էլ (տե՛ս մեր հոդվածը՝ Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարվեստը, «Բանբեր Մատենադարանի», № 7, Երևան, 1964, էջ 205—206)։

¹⁸ Կանոնական կոնդակ դպրաց Հայաստանաց Սուրբ Եկեղեցւոյ, հաստատեալ երանաշնորհ տեսուն Յօհաննիսի սրբազան Արքեպիսկոպոսի... յամի Տեառն 1811... Կ. Պոլիս (կանովն Զ) (տե՛ս Ե. Տընտեսայն, Նկարագիր երգոց Հայաստանեայցս եկեղեցւոյ, Կ. Պոլիս, 1874, էջ 129)։

¹⁹ Որոնցից վկայություններ քաղելով և մեկտեղելով է, որ Հ. Վ. Հացունին կազմեց մեր հասարակաց աղոթքի պաշտոնյաների աստիճանավորված ընդհանուր պատկերը (տե՛ս նրա՝ Պատմութիւն հայոց աղօթամատուցին, գլ. Ե.)։

²⁰ Հմմտ. «Բայց գլխաւորական մարմինն նորա [մեծին Սահակայ] բարձեալ սարկավագապետինն նորին Երեմիայի հանդերձ աշակերտակցօքն»... (Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Արեւյանի և Ս. Հարությունյանի, Տփլիս, 1913, էջ 356)։

²¹ Կորիւն, վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 88 («Ձոր և առեալ վաղվադակի ամենայն հանդերձելովք ձեռնասուն աստուածաւեր պաշտօնեիցն իւրոց,

նույնիսկ երաժշտական գոյությունն է վկայվում դեռևս V դարում: Բայց որ առավել կարևորն է, հայկական առաջին աղոթամատույցի՝ Սաղմոսարան-ժամագրքի մեջ հասած հնագույն նյութերի մեջ իսկ հանդիպում ենք մոուզների (ինչպես՝ սահակյան քարագները²², Հովհան Մանդակունու «Զարթուցեալքս»-ը²³, «Փառք ի բարձունս»²⁴ երգը և այլն), որոնց եղանակները պահպանված են՝ Յորդոր, Միջակ ու Ծանր, և կամ սովորական ու տոնական օրերի համար նախատեսված տարբերակներով:

Այդ կարգի նյութերի մեջ առաջին տեղերից մեկը գրավում են կանոնագրությունները, որոնց եղանակների՝ հասարակ օրերին կատարվող (կամ առաջնային) ձևերին ծանոթացել ենք արդեն²⁵: Դրանց հետ ուշագրավ յուրատիպ հարաբերությունների մեջ են նույն եղանակների՝ հանդիսավոր պարագաների համար վերապահված տարբերակները²⁶, որոնք հորինված են առաջինների հիման վրա, համապատասխան նախորդների հորդոր-միջակ ընթացքը հանգուցային տեղերում ծանրացնելու, չափական միավորը մասնատելով կշռույթը կոտորակելու, ու ելնելը ազատ տարբերակելու միջոցներով:

Քննարկվող եղանակները իրենց գլխավորագույն գծերի մեջ հրապարակ են եկել (դա կարող ենք հաստատել՝ մտարերելով ողջ նախընթացը ևս) V դարում: Բայց որպես տոնական կոտորներ ենթակա լինելով հետագա նոխսացման ևս (մեկ որ առաջ է գալիս տոն օրերին երգերի եղանակներն ուղեցնելու միտումը՝ իրացվում է հարաճուն կերպով), հետագայում ծանր ընթացքի նոր հատվածներ են ընդունել, որոնք, այն նախապես եղածները՝ մեղեդիապես տարբեր չափով հարստացել են VII—VIII, X—XI և XII—XIII հարյուրամյակներում (նաև որոշ խաթարումներ կրելով ու միջնադարում):

Նշված կետերի միասնամուտ անկախությունը նկատելի է քննարկվող կանոնագրությունների առաջին ստամոտների եղանակներում: Բայց նույնիսկ սրանց մեջ՝ ծանր ընթացքն, օրինակ, չի հասցրել դառնալ բացարձակ ու համատարած, որ ուշագրավ և կարևոր

պարագա է: Մյուս տներում (մինչև «Փոխ»-ը) նվագում են ծանր ընթացքի հատվածները: «Փոխ»-երի առաջին տներում դարձյալ փոքր-ինչ խտանում է եղանակի հյուսվածքը, հետո նորից նոսրանում:

Սաղմոսաւաների եղանակների ընդհանուր պատկերն, ուրեմն, հյուսվածքի առումով, կանոնագրություններից յուրաքանչյուրի շրջանակներում, բազմաշերտ է²⁷: Նույնիսկ ստորև մեր առաջ բերած մոուզները, որ են՝ քննարկվող կանոնագրությունների ու դրանց «Փոխ»-երի առաջին տները, բացարձակ միատիպ չեն: «Փոխ»-երի շարքում, օրինակ, ակ և դձ կտաքները քիչ ավելի դուրսն ելնելն ու կոտորակված կընոյք ունեն, քան մյուսները²⁸:

Ավելի ուշագրավ մի աստիճանավորություն է նկատվում կանոնագրությունների առաջին տների եղանակների մեջ: Նախ այս կապակցությամբ ասենք, որ բոլոր կտորներում ևս՝ ընթացքի թեկուզ հատվածական ծանրացման շնորհիվ (որ ենթադրում է կշռույթի կոտորակում ու ելնելի տարբերակում), մեծացել է եղանակների ծավալը (սրանց առաջնային ձևերի համեմատությամբ), և փոխվել է խոսքի ու երաժշտության ձևակառուցողական դերերի հարաբերությունը հոգուտ երաժշտական քաղկացուցչի: Վերոհիշյալ ծանր հատվածները հատուկ են երգերի ծավալման որոշակի փուլերին: Վերջիններից պետք է նշել, նախ՝ «ալելուիա»-ները և ապա՝ սրանց անմիջապես նախորդող հանգաձևերը, որոնք զարդոտված են բոլոր ուր կոտորներում: Եղանակների սկզբնական դարձվածքները մի քանի կոտորներում ծանրացված են ամբողջապես, ուրիշ երգերում՝ մասամբ միայն ու երբեմն էլ անփոփոխ են թողնված:

Այսպես, Աձ կտորում եղանակի սկզբնական դարձվածքը պահել է իր առաջնային սաղմոսատիպ բնույթը: Բկ-ում զարդոտված է այդ դարձվածքի երկրորդ կեսը: Նմանապես՝ ԴԿ եղանակում, բայց սա, ամբողջությամբ առած, աչքի է ընկնում ելնելի ավելի ազատ տարբերակումով ևս: Գձ և ԳԿ եղանակներում, «ալելուիա»-ների ու նախորդող հանգաձևերի հետ միասին, ամբողջապես զարդոտված են նաև

որոշ գլխատրին Երեմիա անուն ճանաչել, այդ սուրբ և բարեպաշտոն... Բարձեալ զուրբն [Սահակ] սաղմոսիք և օրհնութեամբ և հոգևոր բարբառով...):

²² Երգք Զայնագրեալք ի ժամագրոց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1877, էջ 175—181 (Ի պէտս հանդիսատր ատորց), 182—188 (Ի պէտս հասարակ ատորց):

²³ Անդ, էջ 25 (Ծանր), 39 (Չափատր), 55 (Յորդոր):

²⁴ Անդ, էջ 289—291 (Ի հանդիսատր ատորս), 291—293 (Վասն հասարակ ատորց):

²⁵ Տե՛ս մեր հոդվածը՝ Հասարակ օրերի կանոնագրություններ, «Էջմիածին», 1971, Դ, էջ 37—51:

²⁶ Դրանք ևս առաջ ենք բերում եվրոպական ձայնանշաններով («Մահու դատեա»-ի հետ միասին): Հմմտ.՝ Երգք Զայնագրեալք ի ժամագրոց... էջ 66—87 և 109:

²⁷ Այդ պատկերի մեջ ամենապարզ շերտերն հանդիսադրող ձևերը ուրիշ բան չեն, քան հասարակ օրերի համար նախատեսված նույն եղանակների անփոփոխ թողնված համապատասխան հատվածները: Ուստի հանդիսավոր պարագաների երգեցողության մեկարդակի վրա՝ դրանք չէ, որ համարվելու են, ասենք, մեղեդիական հյուսվածքի նախնական կադապրներ:

²⁸ Դրանցից դձ կտորը (որին ամեն տեսակետով մոտիկ է «Մահու դատեա»-ն) շատ էլ չի հետացել իր առաջնային (սովորական օրերին կատարվող) ձևից, որովհետև վերջինս նույնպես համեմատաբար հարուստ հյուսվածք ունի և ատելիատիպ ձայնեղանակ: Այլ «Փոխ»-ի վրա սակայն, հատկապես մինչև «ալելուիա»-ն, նկատելի է ժամանակի ազդեցությունը. իսկ «ալելուիա»-ի եղանակի աղբյուրն կրճատված լինելը շատ տարիմաստ է թվում:

սկզբնական բանաձևերը: Նույնն է պարագան ԴԶ կտորում ևս: Սրա տարբերիչ հիմնական հատկանիշը, սակայն, կապված է ելևէջին: Մեղեդիի առաջնային ձևի վճռական տարբերակման շնորհիվ գոյացել է դժ դարձվածք տիպի եղանակ²⁹: Այլ եղանակը, բացի բոլոր ծանրացումներից ու զարդոյություններից, իր առաջնային ձևի համեմատությամբ մասն մաքուր բառակա ցած է փոխադրվել ու դրանով իսկ, ավելի հստակ դրսևորել ակ դարձվածք տիպը: Գալով Բձ-ին, պիտի նշել վերջապես, որ սույն կտորը՝ իր «բձ-գձ-գկ» խառնուրդով, հանդիսադրում է բուն հին բձ եղանակը (ամենուշտ, որոշ փոփոխություններով)³⁰, որը, ինչպես տեսանք, գրեթե կորսված էր հասարակ օրերի կանոնագրությունում: Իսկ «Մահու դատեա»-ն ստեղծի տիպի եղանակ է:

Միջնադարյան խազափոր գրչագրերում ընդհանրապես բերվում են կանոնագրությունների ու դրանց «Փոխ»-երի առաջին տները³¹. յուրաքանչյուր ձայնեղանակում երկու-երեք անգամ, հետզհետե բարդացող խազափորումներով³²: Համեմատելով մեզ գրադեցնող երգերի միջնադարյան խազագրությունները՝ XIX դարում կատարված դրանց ձայնագրությունների հետ, տեսնում ենք, որ համապատասխանություն կա կանոնագրությունների առաջին տների խազափորումների և ձայնագրությունների մեջ՝ հյուսվածքի առումով: «Փոխ»-երի առաջին տների եղանակները սակայն (մասնավորապես հանդիսավոր օրերին կատարվածները), միջին դարերում ավելի ճոխ են եղել, դատելով մույն խազգրքերից³³:

Եզրափակելով հասարակ ու հանդիսավոր օրերի կանոնագրությունների մասին մեր խոսքը, անհրաժեշտ է շեշտել, որ դրանց եղանակները իրենց ամբողջության մեջ ներկայացնում են հայկական ութ-ձայնի հնագույն համակարգը: Այդ եղանակները ութ խմբի են բաժանվել՝ ըստ ութ աղմուսականոնների: Հատկա-

²⁹ Սրա ա. և բ. տեսակներին հատուկ պտույտների օգտագործմամբ:


³⁰ Դրանք երևում են նշված խառնուրդի «բձ» բաժնի ավելացման մեջ: Այս տեսակետից հին բձ-ի ավելի անխառն մի ձևն է ներկայացնում «Ջարմանայի է ինձ» շարականը:

³¹ Ցավոք, շատ դեպքերում կրճատ գրությամբ, որ այս կամ այն չափով բացասաբար է անդրադառնում խազագրության վրա:

³² Հմմտ.՝ Մատենադարան, ձեռ. № 591 (էջ 6բ—15բ), № 752 (էջ 5ա—10բ), № 759 (էջ 4ա—9ա՝ «Կանոնագրություն Միահամուտ»): Սույն և այլ խազգրքերում կանոնագրությունների ութ շարքերը կազմված են մաս մի-երկու ծիսա-կատարողական առանձնահատկությունների հաշվառումով, որոնց վրա այստեղ կանգ չենք առնում:

³³ Սույն եղանակների ու հին խազափորումների միջև հյուսվածքի համապատասխանություն երևում է հատկապես սկզբնական բանաձևերի շրջանակներում, որոնք ճոխացված են՝ մասն գրական խոսքերի շեշտակի առաջին վանկերի ոլորում երկարացմամբ:

պես ութի բաժանման փորձին խոր անցյալում տրվել են ուրիշ բացատրություններ ևս: Դրանցից մեկը հանդիսանում է՝ տակավին հեթանոս Հայաստանում տարբերացված չորս հիմնական ձայնեղանակները բնության չորս տարերքի հետ կապելու գաղափարի³⁴ հետագա զարգացումը քրիստոնեության շրջանում: Հատ այդ՝ չորս «բուն» ձայնեղանակներից մույնքան «կողմ» եղանակներ են ծագել, բնության չորս տարերքին հատուկ երկուական որակների ընդհանուր հաշվի (= ութ) հիման վրա³⁵: Ի վերջո պետք է նշել, որ թեև կանոնական եղանակները այսպես ութ խմբի




(Մի էջ Մաշտոցի անվ. Մատենադարանի
թ. 752 գրչագրից)

բաժանելիս ընդհանրապես հաշվի են առել դրանք սկսելու, ծավալելու և ավարտելու տիպական դարձվածքները (պտույտները կամ մոտիվները), բայց այդ դարձվածքները ամբողջական մեղեդիներից հատկապես չեն անջատվել ու վերլուծվել, կամ վերացարկվելով տեսականորեն չեն իմաստավորվել: Այնպես որ, ութ ձայնեղանակներն իրարից զանազանելու սկզբունքը գործնականում եղել է դրանք որպես մեղեդիական որոշակի ձևի ու բովանդակության չափամուշներ տարբերելը: Այլ կերպ ասած, երաժշտատեսական մտածողությունը զարգացել է մեղեդիական (ամբողջական) տիպարների տարբերացման ճանապարհով:

(Կանոնագրությունների եղանակավորումը հաջորդ համարում):

³⁴ Հմմտ. մեր աշխատությունը՝ «Հնական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության (Ա), ԳԱ «Լրաբեր», 1970, № 10, էջ 26:

³⁵ Հմմտ.՝ Առաքելի Սինեցույ Յաղագս քերականության համառոտ լուծմունք, Մատենադարան, ձեռ. № 1770, էջ 271բ (ուր հեղինակը հիշեցնելով, որ «յերաժշտականն դ են ձայնքն, ըստ դ տարերցն, և դ ձայնիցն՝ դ ձայն կողմունքն, որ լինի ը» քիչ ստորն գրում է՝ «զի և տարերքն ք ք որակ ունին, այսինքն հուրն՝ ջերմ և չոր, հողն՝ չոր և ցուրտ, ջուրն՝ ցուրտ և գէշ, և օդն՝ գէշ և ջերմ, որ լինի ը»):



Ա. ՔՅՈԾԿԵՐՅԱՆ

ՓԱՐԻԶԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ № 79
ԳԱՆՁԱՐԱՆ-ՏԱՂԱՐԱՆԸ

Ա. ԳԱՆՁԱՐԱՆ

Հայ ձեռագրական մշակույթի հարուստ հավաքածուի մասն են կազմում նաև Գանձարանները, որոնց թիվը հասնում է մի քանի հարյուրի: Այդ ժողովածուները չունեն միանման կառուցվածք. երբեմն կազմված են լինում միայն գանձերից, իսկ շատ ավելի հաճախ գանձերից և նրանց կցված համապատասխան տաղերից, մեղեդիներից ու հորդորակներից. կան նաև ժողովածուներ քաղկացած երկու մասից. նախ՝ Գանձարան, որտեղ բացառապես գանձերն են, ապա՝ Տաղարան, որտեղ գտնվում են տաղերը, մեղեդիներն ու հորդորակները¹: Այս վերջինների մասն է Գանձարանների մեզ հայտնի հնագույն օրինակը՝ Փարիզի Ազգային Մատենադարանի № 79 ձեռագիրը, որի բնութայնն էլ նկիրված է ներկա հոդվածը:

Խնդրո առարկա ձեռագրի վերջում պահպանված է Տաղարանի գրչի ընդարձակ հիշատակարանը, որտեղ նշված է ընդօրինա-

կության ժամանակը՝ 1241 թ.: Մինչև օրս մասնագետների կողմից այդ թվականը վերագրվել է նաև առաջին մասին՝ Գանձարանին: Պիտի ասել, որ սույն հիշատակարանին անդրադարձել են շատ բանասերներ, սակայն ձեռագիրն ինքը առանձին ուսումնասիրության նյութ չի դարձել: Նրա մասին առաջին անգամ խոսում է հ. Ղ. Ալիշանը, բերելով հիշատակարանի այն հատվածները, որտեղ ակնարկվում է ոմն Հովսեփ երածը՝ տապետի, ինչպես և Հերոմ թագավորի եղբայր՝ Բարսեղի մասին²: Նույն այդ Հովսեփը հետաքրքրել է Հ. Տաշյանին³, ինչպես նաև ուրիշների. գրեթե բոլորն էլ սահմանափակվել են հիշատակարանի սույն նրան վերաբերող մասով: Մ. Պոտուրյանը գանձարանային նյութերի մասին իր գրած հոդվածում նույնպես կանգ է առնում Փարիզի այդ ձեռագրի վրա՝ իբրև հնագույն Տաղարանի⁴, իսկ Յր. Մակլերը տալիս է նրա համառոտ

² Հ. Ղ. Ալիշան, Սխտան, Վեցետիկ, 1885, էջ 223, 517:

³ Հ. Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 477—478:

⁴ Հ. Մ. Պոտուրյան, Միջին դարու հայ կրոնական բանաստեղծություն, «Բազմավեպ», 1905, էջ 557:

¹ Գանձարանների կառուցվածքային տարբերությունների մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Քյոչկերյան, Գրիգոր Նարեկացու գանձերն ու Գանձարանների սկզբնավորումը, «Բանբեր Մատենադարանի», № 10, Երևան, 1971, էջ 55—68:

նկարագրությունը: 1824—1825 թթ. Արսեն Բագրատունին Փարիզի Ազգային Մատենադարանի հայերեն ձեռագրերից ընդօրինակում է զանազան նյութեր՝ կազմելով մի ժողովածու, որը մուտք է գործել Վենետիկի ձեռագրերի հավաքածուն «Հաւաքումն բանից նախնեաց, Ա.» խորագրով (№ 294): Այստեղ գետնոված են մեզ ծանոթ Գանձարան-Տաղարանից երկու գանձ և ինը տաղ: Բերված է նաև Տաղարանի հիշատակարանն ամբողջությամբ: Բ. Սարգսյանը ձեռագիրը գնահատում է իբրև խիստ արժեքավոր մի ժողովածու և՛ «խոր հնության համար», և՛ այն բանի, որ «ըստ վկայության Հ. Արսեն Բագրատունյի լուսանցից վրա կնշանակվին երբեմն երբեմն՝ հանդեպ երգոց՝ պարսիկ ձայն, ասորի ձայն (իմա՝ եղանակը), որ մեծապես կրնա նպաստել մեր միջնադարյան երաժշտության ծագման և զարգացման ուսումնասիրության»⁶: Նշված հիշատակարանը հրատարակել է նաև Գ. Հովսեփյանը⁷, իսկ ձեռագրի առավել մասնաամսն նկարագրությունը, ներառյալ բոլոր հիշատակարանները և գանձերի խորագրերն ու տաղերի սկզբնատողերը, տվել է Մեսրոպ Մազիստրոս Տեր-Մովսիսյանը⁸:

Գանձարան-Տաղարանների մեզ հետաքրքրող այս հնագույն օրինակը մինչև այժմ բանասիրությանը հայտնի է եղել հիմնականում այս չափով միայն: Մենք նրան ծանոթացել ենք մանրաթափալենի միջոցով⁹ ու նկատել մի շարք առանձնահատկություններ, որոնց շնորհիվ փոփոխվում ու նշգրտվում են որոշ հարցեր:

Ինչպես պարզվում է Ֆր. Մակլերի կազմած ձեռագրացուցակի առաջարանից, հիշյալ ժողովածուն արքա Սրվենի ջանքերով Կոստանդնուպոլսից ու նրա շրջակայքից ձեռք բերված հայերեն ուրիշ ձեռագրերի հետ միասին մուտք է գործել Արքունի գրատուն 1730 թ. և գրանցվել 50 համարի տակ, իսկ այժմ հայտնի է իբրև Ազգային Մատենադարանի Հայկական հավաքածուի № 79 Գանձարան-Տաղարան:

⁵ Fr. Macler, Catalogue des MSS arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale, Paris, 1908, էջ 36—37:

⁶ Հ. Բ. Սարգսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Բ., Վենետիկ, 1924, էջ 1066:

⁷ Գարեգին կաթ. Հովսեփյան, Յիշատակարանը ձեռագրաց, Ա., Ամբիլիաս, 1951, էջ 946—947:

⁸ Մաշտոցի անվան Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ժողովածու:

⁹ Մաշտոցի անվան Մատենադարան, Ամանաթապակներ թածին, № 453:

Ձեռագիրը բաղկացած է 403 թերթերից. գրված է թղթի վրա, բոլորգրով, միասուն: Սկսվում է Գանձարանով (թերթ 1ա—315բ) և ավարտվում է Տաղարանով (թերթ 316ա—396բ). վերջում գտնվում է «Արքասացությունը սրբոյ պատարագի զատկաց» (թերթ 397ա—402ա), որին հաջորդում է Տաղարանի գրչի ընդարձակ հիշատակարանը (թերթ 402ա—403ա): Վերջինից տեղեկանում ենք, որ ձեռագիրն ընդօրինակվել է Դրագարկում 1241 թ. Հովհաննես գրչի ձեռքով. նրան օգնել է Գրիգորը գրելով գանձերը. «Կատարեցաւ երգարանս տաղաց ձեռամբ Յոհաննիս լետին և յոգնամեղի, ի թուականիս Հայոց ՈՏՂ, ի վանս մեծ ուխտի և հոչակաւոր անապատս Դրագարկ կոչեցեալ, ի թագաւորութեան Հերթոյ որդոյ Կոստանդեա: Եւ է առաջնորդ ուխտիս մեծն Բասիլիոս» եղբայր թագաւորին Հերթոյ, և դիտապետ և աթոռակալ իշխանութեան մեծ և հոչակաւոր դէպին Հոռոմկլային՝ տէր Կոստանդին, արժանաւոր այնմ աշտինանի... և ԳԳրիգոր գրագիր, որ առնընդակն եղև և գրեաց գճարոգին, յիշեսչիք ի Տեր...»:

Այս վկայության հիման վրա ձեռագրի առաջին մասի՝ Գանձարանի ընդօրինակությունը վերապահվել է Գրիգորին: Ֆր. Մակլերն ընդունում է նաև առնվազն երկու այլ գրչիների առկայությունը, սակայն նրանց մասին ոչինչ չի ասում, իսկ Մ. Տեր-Մովսիսյանի իրավացի եզրակացությամբ, Գրիգորից ու Հովհաննեսից բացի, եղել է «անհայտ ոմն», այսինքն, ևս մեկ գրիչ, որն ընդօրինակել է ընդամենը մի քանի թերթ գրադեցնող պատարագի նյութերը:

Ինչպես նախօրոք նշվեց, ձեռագրի ուշադիր քննությունը մեզ հանգեցրել է այլ համոզման: Պարզվում է, օրինակ, որ ձեռագրի Գանձարան և Տաղարան մասերը օրգանական ամբողջություն չեն կազմում, հետո են միակցված իրար, ուստի Տաղարանի ընդօրինակության թվականը չի կարող վերաբերել նաև Գանձարանին: Բացի այդ, զանազան փաստերի օգնությամբ ճշտվում է, որ Գանձարանում տեղ գտած հեղինակներից Գեորգը՝ Սկևռացին է, իսկ Մովսեսը, հավանաբար, նրա աշակերտ՝ Մովսես Երզրնկացին: 13-րդ դարի երկրորդ կեսում ապրած այս երկու գանձասացների առկայությունն է, իր հերթին, թույլ է տալիս ասել, որ Գանձարանը պետք է ընդօրինակված լինի ավելի ուշ, քան Տաղարանը: Ձեռաքրքրակալն նորություններ է բովանդակում նաև ձեռագրի Տաղարան մասը: Քննությունը պարզում է, որ այն սկզբից թերի է, և այժմ պակասող թերթերում, հավանաբար, եղել են գանձեր: Կարևոր է և այն, որ Տա-

դարանում տեղ են գտել Հովհաննես Երզնկացուն վերագրվող երկու տաղ՝ նույնպես կապված շիրիմությունների հետ: Ահա այս հարցերի պարզաբանման համար հարկ ենք համարում Փարիզի № 79 Գանձարան-Տաղարանի երկու մասերը ներկայացնել ավելի հանգամանորեն, առանձին-առանձին:

Առաջին իսկ հայացքից ակնթախ է դառնում ձեռագրի երկու մասերի գրչական տարբերությունը. Գանձարանը, օրինակ, գրված է գեղեցիկ ու կանոնավոր ձեռագրով և ունի տողերի գրեթե անխախտ քանակ (տասնհինգ, երբեմն տասնչորս): Այն զուրկ չէ նաև մանրանկարներից: Սկզբում կա մի պարզ կիսախորան, ապա՝ զարդագիր սկզբնատառեր, որոնք սուկ գծանկարներ են՝ կատարված թեթև հեղձ գրչի ձեռքով: Ի տարբերություն Գանձարանի, Տաղարանը ընդօրինակված է նվազ խնամքով և ուրիշ ձեռքով. տողերի քանակը քաններեք է (սկզբի մի քանի թերթերում՝ տասնույթ): Այստեղ չկա ոչ մի զարդագիր կամ մանրանկար: Ձեռագրի երկու մասերի համեմատությունն ի հայտ է բերում նաև պրակակալումն մեջ նկատվող անհամապատասխանություններ: Գանձարանն ունի Ա—ԻԷ պրակ, յուրաքանչյուրը՝ տասներկու թերթից (թերթը ընկած լինելու պատճառով թերի են ԺԵ և ԻԷ պրակները): Այլ է Տաղարանը, որն ունի Ը—ԺԸ պրակ (Ա—Է պրակները պակասում են)՝ յուրաքանչյուրը բաղկացած ութ թերթից (բացառությամբ մի քանիսի):

Այս բացահայտ տարբերությունները ենթադրել են տալիս, որ մենք գործ ունենք երկու առանձին ժողովածուների հետ: Այդ երկուսն էլ նաև թղթից. թեև մանրաժապավենը թույլ չի տալիս որոշակիորեն տեսնել նյութի մանրամասները, այնուամենայնիվ, նկատելի է, որ ձեռագրի երկու մասերը գրված են տարբեր թղթերի վրա: Պարզ է, որ, երբ, որ Գանձարանը Տաղարանից անկախ է, ուստի վերջինիս հիշատակարանը չի կարող վերաբերել նաև ձեռագրի առաջին մասին՝ Գանձարանին:

Արդ, ե՞րբ է ընդօրինակվել Գանձարանը. Տաղարանի հետ միաժամանակ, նրանից առաջ, թե՛ ավելի ուշ: Մեր կարծիքով, հավանական է վերջինը: Համոզվելու համար ավելի մոտիկից ծանոթանանք նրա բովանդակությանը:

Գանձարանն սկսվում է նյութերի ցանկով (Ա—ԾԸ), որին հաջորդում են զանգեղ, բոլորն էլ համարակալված, թվով հիսուկոթ: Բացակայում է ցանկում նշված Ծննդյան տոնի ութերորդ օրվա զանգը: Ժողովածուն հնագույն շրջանի մի շատ ուշագրավ օրինակ է, որտեղ բոլոր զանգերը (բացի երե-

քից) դեռևս կոչվում են «բարոզ»: Այստեղ կան զանգեր նվիրված ոչ միայն տեղումակա տոներին ու սրբերին, այլև Վարդաբանց, Բարգանաց, Ղևոնդյանց ազգային տոներին: Ձեռագրի այս առաջին մասն, ընդհանուր առմամբ, ներկայանում է իբրև ամբողջական մի ժողովածու, բաղկացած բացառապես զանգերից: Ցավոք, գրչի կամ ընդօրինակչության թվականի մասին ոչ մի նշում չկա: Վերջում՝ 315թ թերթում, պահպանվել են հետագայի երեք տարբեր հիշատակագրություններ, որոնցից առաջինի համաձայն ձեռագիրը 1361 թ. եղել է Դարաբաղյաց գալստի՝ Ջորեհանգիստի Սուրբ Լուսավորչի գերեզման կոչված սրբավայրում: Ստորև բերում ենք այդ հիշատակագրությունները.

ա) «Ես Համայ Խաթուն Ազին դուստր, որ տուի զիմ թանջիրայն ի Ջորեհանգիստ Սուրբ Լուսավորչին գերեզմանին ի իշատակութիւն, յախտեան յախտեցից ինձ և ծնողաց իմոց. և այլ մարդ ի հետ գրուց չունի, ո՛չ իմ որդի, ո՛չ եղբայր, ո՛չ աստար, ո՛չ բնիկ, հետ իմ թանջիրին գրուց չունի, ո՛չ առաջնորդ ուխտիս, ո՛չ այլ իշխանատր չունի իշխանութիւն, որ կամ ծախեն, կամ գրակրեն, կամ ի վանացս հանեն: Ով որ հանէ կամ ծախէ, ինք զիտէ ու Սուրբ Լուսավորչին, թվ. ԸԸԺ (1361)»:

բ) «Ես Գոհար յԱզիզս ի յԱխտէն, դուստր թագորշահին, որ գնեցի զխանակին արտին զճ ապ. ու դրի Սուրբ Լուսավորչին գերեզմանն ինձ իշատակ ու իմ ծնողացս, յախտեան յախտեցից: Մարդ ի հետ այն արդին¹⁰ գրուց չունի, ո՛չ իմ աղբարն, ո՛չ աստար, ո՛չ բնիկ մարդ ի հետ գրուց չունի: Ով այլ առէ¹¹ կամ գրուց հետ այն ար(տ)ին այնէ՝ դատած ու կապած գալ առ (իս):

գ) «Ես Մկրտիչս, որդի Քրիստոսորին ի յԱխտէն, որ տուի ի ապ. ի Մալոնայ բարն ի Լուսավորչին դուռն՝ իշատակ ինձ և ծնողաց իմոց և զարմից իմոց որ իշենն»:

Այսպիսով. մեզ հայտնի է դառնում, որ Գանձարանը պետք է ընդօրինակված լինի 1361 թ. առաջ: Միաժամանակ, ինչպես նկատեցինք, նրանում տեղ գտած հեղինակներից երկուսի՝ Գեորգի ու Մովսեսի ով լինելը ենթադրել է տալիս, որ Գանձարանը չէր կարող ժամանակակից լինել Տաղարանին: Այժմ անդրադառնանք այդ երկու զանգաստեղներից յուրաքանչյուրին՝ առանձին-առանձին:

Գեորգի անունով մեզ հայտնի են հենց նույնքան զանգեր, որքան գտնվում են հիշ-

¹⁰ Իմա՝ արտին:

¹¹ Հավանաբար «տառէ» — բողոք, վեճ:

յալ ձեռագրում, այսինքն՝ տասներեք միավոր, որոնք հիմնականում հանդիպում են հնագույն շրջանի ժողովածուներում: Այդ գանձերից միայն մեկը՝ նվիրված քառասուն վկաներին, իր ծայրակայով հոդում է «Գէորգ Անեցի» մնացյալները գրված են նույն չափով (5—5, որը հազվադեպ է խախտվում), բոլորն էլ ունեն միատեսակ ծայրակայ՝ «Գէորգեա բան» (երբեմն՝ «Գէորգեայ բան»): Այս փաստը ցույց է տալիս, որ դրանք անտարակուսելիորեն մի մարդու հեղինակություն են: Ղ. Ալիշանի կարծիքով նա պետք է լինի վերոհիշյալ Գէորգ Անեցին՝ Սամվել Անեցու ուսուցիչը: «Ինքն Սամուել հիշե... Գէորգ վարդապետ մը՝ որուն աշակերտ ալ եղած էր ... շատ հավանորեն այս վարդապետն է Գէորգ Անեցի կոչված գանձասացն, որո անվամբ քսանեն ավելի գանձք կան, չափավոր շնորհքով, որոնց տնագլուխ տառքն Գէորգ կկապեն և մեկուն վրա Անեցի կոչումն ալ դրած է»¹²:

Մեր կարծիքով նման մոտեցումը ճիշտ չէ, որովհետև «Անեցի» մականունը պահպանված է միայն մեկ գանձում, իսկ փաստերը հավաստում են, որ Գէորգի անունով ներկայացող գանձերի հիշյալ խումբը պետք է պատկանի 13-րդ դարի մատենագիր Գէորգ Սկևազու գրչին¹³: Ուշագրավ է, որ Ղ. Ալի-

շանը ծանոթ լինելով Գէորգ Սկևազու աշակերտներից մեկի հաղորդած համապատասխան տեղեկությանը, այնուամենայնիվ, բնության առարկա գանձերը վերագրում է ոչ թե Գէորգ Սկևազուն, այլ, ինչպես տեսանք, մեկ ուրիշ գանձասացի: Այս շփոթության պատճառը՝ ձեռագրի ընդօրինակության ժամանակի մասին եղած վերոհիշյալ սխալ պատկերացումն է: «...այլ վկայի լաշակերտ է միոյն նորին (իմա՝ Գ. Սկևազու—Ա. Բ.), եթե արար նա և գանձս տերունականաց և տօնից սրբոց, և են անշուշտ որոց տնատառք կապեն Գէորգ անուն. այլ լայտ է թէ ոչ ամենեքին, զի են և հնագույնի ուրումն Գէորգեայ այդպիսի գանձք, գտեալք յօրինակի գրելոյ յամի 1241, մինչ թերևս ծնեալ իսկ չէր Սկևազիս»¹⁴:

Այստեղ ակնարկված 1241 թ. ձեռագիրը Փարիզի № 79 ժողովածուն է: Արդ, քանի որ նշված թվականը նրա Գանձարան մասի համար այնևս ընդունելի չէ, հետևապես Սկևազու հարցում Ղ. Ալիշանի ունեցած առարկությունը ենթակա է վերանայման, մասնավոր, որ առկա են Սկևազու, որպես գանձասացի օգտին վկայող այլ փաստեր: Այստեղ առաջին հերթին միջնադարյան կապես այն իրողությունը, որ երբեմն գանձերի խորագրերում հիշվում է հեղինակի լրիվ անունը: Օրինակ. «Քարոզ Ծննդեանն Քրիստոսի կթեբորդ աւորն, արարեալ սրբոյ վարդապետին Գէորգայ Սկևազու»¹⁵, «Նթեբորդ աւոր գանձ, ասացեալ Գէորգեայ վարդապետի Սկևազու ի Ծնունդն Քրիստոսի և ի թլփատութիւնն»¹⁶ և այլն:

Գէորգ Սկևազու հեղինակային իրավունքը հաստատվում է նաև գանձերի խորագրերում պահպանված պատվիրատուների անուններով, որոնք եղել են նրա ժամանակակիցները: Հայտնի է, որ Սկևազին Հեթում Բ թագավորի պատվերով կատարել է Եսայի մարգարեի մեկնությունը¹⁷: Կիպրոսի

¹² Ղ. Ալիշան, Ծնորհալի և սքարագայ իր, Վենետիկ, 1873, էջ 126:

¹³ Ուշ շրջանի ժողովածուներում հանդիպում է նաև «Գէորգեա» (կամ «Գէորգէ») ծայրակայով մի գանձ՝ նվիրված Կյուրեղ Երուսաղեմացուն (ձեռ. № 474, թերթ 116ր, ձեռ. № 6839, թերթ 32ա): Սա փաստորեն Նիկիայի ժողովին նվիրված հեղինակի գանձի մշակումն է, որտեղ որոշ տներ կրկնված են գրեթե նույնությամբ, կան փոփոխված տողեր, իսկ առանձին տներ տեղափոխված են (օրինակ՝ Նիկիայի ժողովին նվիրված գանձի վեցերորդ տունն այստեղ ներկայացնում է իբրև սկիզբ): Նման երևույթը պիտի բացատրել այսպես. հաջորդ է, որ Կյուրեղ Երուսաղեմացին եղել է Նիկիայի ժողովի մասնակիցներից, ուստի այդ ժողովին նվիրված գանձի այն տները, որտեղ հիշվում է Կյուրեղ Երուսաղեմացին, փոփոխվել ու հարմարեցվել են ըստ պահանջի, և ստացվել է գանձի մի նոր միավոր: Դա, ըստ երևույթին, կատարվել է հետագայում, քանի որ վաղ շրջանի ձեռագրերում հիշյալ գանձը բնավ չի հանդիպում: Բացի այդ, վերջին տունը թողնում է հապճեպ շարադրանքի տպավորություն:

Մոտավորապես նույնպիսի բան կատարվել է Գէորգի մեկ ուրիշ գանձի հետ՝ նվիրված Ավետարանիչներին (տես, օրինակ, Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 7785, թերթ 469բ): Ժամանակի ընթացքում վերջինս ենթարկվել է որոշ փոփոխությունների ու աղավաղումների, առաջին և հիմնականորեն

տների միջև կատարվել է տեղաշարժ ու ստացվել է գանձի նոր տարբերակ, արդեն այլ խորագրով՝ «Գանձ Յոհանն և Յակոբա՝ Որդոցն Որոմ(ան)» (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3505, թերթ 123, ժամանակ՝ 1458 թ.):

¹⁴ Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 103:

¹⁵ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 7785, թերթ 50ա:

¹⁶ Փարիզի Ազգ. Մատենադարան, ձեռ. № 80, թերթ 67ր (տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, Մանրածափալենների բաժին, № 454):

¹⁷ 1295 թ. Երեմիա քահանա՝ գրել է. «...Եթե Հեթմոյ Բ արքայի (1289—1307) տեսեալ զմեկնութիւն համարձակախօս աստուածատես մարգարեից

№ 48 Գանձարանում¹⁸, Հովհան Ոսկեբերանին Գլխոված Գեորգի գանձի խորագրում ևս հիշվում է Հեթում արքան. «Քարոզ ս. Յովհաննու Ոսկեբերանու, Գեորգեայ վարդապետի, ի խնդրոյ արքայի Հայոց Հեթում» (թերթ 203թ)¹⁹:

Կիպրոսի այդ նույն ձեռագրում Գեորգի գանձերից երկուսի խորագրերում հիշվում է նաև Սկևռայի առաջնորդ տեր Սիմեոնը. «Քարոզ Նիկիայի սուրբ ժողովոյն, Գեորգեայ(յ) վարդապետի, ի խնդրոյ տեր Սիմեոնի և առաջ(նորդի) Սկևռայի» (թերթ 56ա), «Քարոզ վարագա(յ) սուրբ Խաչին, Գեորգեայ վարդ(ապետի), ի խնդ(րոյ) տեր Սիմեոնի՝ առաջ(նորդի) մեծի ուխտի Սկևռայի» (թերթ 188ա): Հետաքրքրական է նկատվում, որ ձեռագրի գրիչը նույնպես կոչվում է Սիմեոն: Ն. Ալիևյանը գտնում է, որ Կիպրոսի Գանձարանի գրիչը՝ գանձերի խորագրերում հիշված Սկևռայի առաջնորդ տեր Սիմեոնն է. նրա կարծիքով, անթվական այդ Գանձարանը պետք է ընդօրինակված լինի Գեորգ Սկևռացու կենդանության ժամանակ²⁰: Նման ենթադրության համար նա հիմք է ընդունում Գեորգի երկու գանձերին կից գտնվող հետևյալ հիշատակագրությունները.

Եսայեայ, և զի մեծն Եփրեմ կարճ և համառոտ քաջողորակ բանիք էր անցեալ ընդ նա, իսկ աստուածաշնորհ Յովհան Ոսկեբերան... Հոխարար խօսեցեալ. արդ քարգաւաճն այս վեմնս Հեթում՝ ի մտի եղեալ գտնա ի մի ժողովել ... խնդրեաց զայս առնել հարկեցոցիչ հրամանաւ՝ ի յերրեքշաբթի և ի լուսարան քարոնապետէն Գեորգեայ... իսկ սա իբրև քարոզ ճշմարիտ՝ հնազանդեալ հարկեցուցանող հրամանին... գրեալ ձեռամբ իւրով ետ նմա...»: (Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 103):

¹⁸ Ձեռագիրն այժմ տեղափոխված է Անթիլիասի կաթողիկոսարանը և կրում է 59 համարը (տե՛ս «Հանդէս Ամսօրեայ» 9—12, 1956, էջ 475—480):

¹⁹ Այս գանձը ձեռագրերում երբեմն Գլխոված է լինում Գրիգոր Աստվածարանին, բովանդակային լոկ անցնում փոփոխություններով: Բրիտանական թանգարանի № 54 Or. 2608 Գանձարանում (1411 թ.) այն ներկայանում է Գեորգ Սկևռացու անունով (տե՛ս Fr. Conybeare, A Catalogue of the Armenian MSS in the British Museum. London, 1913, էջ 119): Այդպիսի մականունն այլ աղբյուրներից մեզ հայտնի չէ, բայց կան ձեռագրեր, որտեղ պահպանված է Գեորգ Սկևռացու անունը (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3866, թերթ 7ա): Ուրեմն, պիտի ենթադրել, որ Գեորգ Սկևռացին կոչվել է նաև Սկևռացի:

²⁰ Հ. Ն. Ալիևյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Նիկուսիայի ի Կիպրոս, այժմ փոխադրված Անթիլիաս, կաթողիկոսարան, «Հանդէս Ամսօրեայ», 9—12, 1956, էջ 480:

ա) «Չքարեհամբա վարդապետն Գեորգ Սկևռացի, որ ողեսց զսա բարի յիշման արժանի արարեք, ով սուրբ երգեցադք: Ընդ նմին և զմեղաւոր հոգս զՍիմէ(ոն), և Աստուած զձեզ յիշեացէ» (թերթ 56ա):

բ) «Չքարեհամբա վարդապետ Գեորգ բարի յիշման արարեք արժանի, ով սուրբ երգեցողք և զմեղաւոր(ո) գծողիկս (այլ հին գրչէ մը), և զիս ԳԲարսեղոս» (թերթ 62ա):

Գեորգ գանձասացի ժամանակակիցներից են նաև Մարկոս վարդապետն ու Թորոս քահանա Տարսնեցին, որոնց համար հեղինակը գրել է հետևյալ գանձերը. «Քարոզ ս. անետարանչացն, ի խնդրոյ Մարկոս վարդապետի, ի Գեորգեայ վարդապետէ», «Գեորգեայ վարդապետի ողեսց քարոզ սրբոյն Բարսղի, ի խնդրոյ Թորոս քահանայի Տարսնեցոյ»²¹: Նշված երկու պատվիրատուների մասին որևէ տեղեկություն չունենք. սակայն, հայտնի է, որ 1290-ական թվականներին, այսինքն Գեորգ Սկևռացու ժամանակ, Սկևռայի վանքում եղել են միաբաններ՝ Մարկոս ու Թորոս անուններով²²: Հետևապես, կարելի է ենթադրել, որ նրանք հենց այն անձնավորություններն են, որոնց մասին հիշվում է գանձերում:

Վերջապես չպիտի մոռանալ, որ Գեորգ Սկևռացու գանձասաց լինելու մասին չի տարակուսում նաև Ղ. Ալիշանը: Նա, պարզապես, Սկևռացու աշակերտի տված վկայության և Փարիզի № 79 ձեռագրի գրության թվականի հսկասական փաստերի պատճառով կանգնում է երկրնորանքի առաջ ու 1241 թ. ընդօրինակված հիշյալ ձեռագրում փորձում է տեսնել մի այլ Գեորգի: Այժմ, երբ մեզ համար արդեն պարզված է այդ թվականի հետ կապված թյուրիմացությունը, Ղ. Ալիշանի վերոհիշյալ առարկությունը միանգամայն անհիմն է:

Այսպիսով, փաստերը հավաստում են, որ Փարիզի № 79 ձեռագրում իբրև գանձասաց ներկայացող Գեորգը՝ Սկևռացին է, որից առ աւսօր մեզ հայտնի է տասներկու գանձ: Ինչ վերաբերում է «Գեորգ Անեցի» ծայրափայլ ունեցող միակ գանձին, առայժմ Գեորգ Սկևռացու գանձերի հետ նրա ունեցած առնչությունը մնում է չյուծված:

Գեորգ Սկևռացին ապրել ու ստեղծագործել է 13-րդ դարի երկրորդ կեսին: Նա ծնվել է 1246—1247 թթ. ու վախճանվել 1301 թ.²³:

²¹ Կիպրոսի ձեռ. № 48, թերթ 198թ և 251թ:

²² Հ. Աճառյան, Հայոց անձնանունների քառարան, Բ. 1944, էջ 352: Գ., 1946, էջ 266:

²³ Է. Բաղդասարյան, Գեորգ Սկևռացու «Վարքը», «Բանբեր Մատենադարանի», № 7, Երևան, 1964, էջ 405:

Ըստ այդմ էլ, նրա գանձերը բովանդակող Փարիզի № 79 ձեռագրի Գանձարան մասը կարող է գրված լինել Տաղարանի ընդօրինակությունից (1241 թ.) բավական հետո: Նշված ձեռագրում մեկ ուրիշ գանձասացի՝ Մովսեսի առկայությունը, մեր կարծիքով, թույլ է տալիս ենթադրել, որ «Գանձարան»-ի ընդօրինակությունը չէր կարող կատարված լինել 1270—1280-ական թվականներից առաջ: Արդ, ո՞վ է Մովսեսը:

Փարիզի № 79 ձեռագրի Գանձարան մասում Մովսեսն ունի քսան գանձ, բոլորն էլ հեղինակի անունը հոդող ծայրակապով՝ «Մովսեսի երգ», «Մովսեսի բան» և անան այլ ձևերով: Այդ ստեղծագործությունները հիմնականում գրված են ազատ բանաստեղծությամբ (նկատելի է 4—5, երբեմն 5—5 ոտքով գրելու միտում). տարակույս չկա, որ բոլորը պատկանում են միևնույն հեղինակի գրչին: Վերջինիս մասին գանձերի խորագրերում չեն պահպանվել լրացուցիչ նշումներ, որոնց միջոցով հնարավոր լիներ պարզել Մովսեսի ով լինելը: Դ. Ալիշանը հրատարակելով Վարդանանց տոմսի նվիրված նրա գանձը (բացի առաջին ու վերջին տներից) պարզապես ասում է. «Այս գանձիս կամ քարոզիս հեղինակն է Մովսես ոմն, ինչպես որ տնագլուխ տառքն ցուցեն... օրինակն 620 տարվան ձեռագրե մը առնված է, որ հեղինակին բավական հնությունն այլ ցուցեն»²⁴: Տպագրելով Մովսեսի՝ Գրիգոր Լուսավորչի թոռներից նվիրված գանձից մեկ տուն, Դ. Ալիշանը գրում է. «Ասոնց համար երգե քաջ գանձասացն Մովսես»²⁵:

Այս է Մովսեսի՝ որպես գանձասացի մասին մեր ունեցած ամբողջ տեղեկությունը: Ուշագրավ է, սակայն, այն փաստը, որ ձեռագրերում Մովսեսի գանձերն ընդհանրապես ներկայանում են Գեորգի ստեղծագործությունների հետ: Նշված հանգամանքն էլ մեզ թելադրում է նրան որոնել 13-րդ դարի հեղինակների շարքում: Այդ տեսակետից ամենահավանական թեկնածուն Գեորգ Սկևոացու աշակերտ՝ Մովսես Երզնկացին է: Վերջինս ծնվել է Դարանաղյաց գավառում՝ Կամախում և ուսումն ստացել Ավագ վանքում: Նա իր ուսուցչի՝ Գեորգ Սկևոացու մասին առհասարակ խոսել է ջերմ սիրով ու ակնածանքով, իսկ նրա մահվան առթիվ գրել հատուկ ողբ:

Ահմարածեշտ է նշել, որ Մովսես Երզնկա-

ցու մասին՝ իբրև գանձերի հեղինակի, բանասիրության մեջ որևէ ակնարկ չի եղել: Դ. Ալիշանն, ինչպես տեսանք, անդրադարձել է Փարիզի № 79 ձեռագրում գտնվող Մովսեսի գանձերին, բայց «Գանձարան»-ի համար մինչև այժմ ընդունված 1241 թ. նրան կաշկանդել է նաև այս հեղինակին ճանաչելու հարցում: Այժմ, երբ այլևս անտարակուսելի է, որ Գեորգ գանձասացը հենց Գեորգ Սկևոացին է, անհավանական չէ, որ Մովսեսը լինի նրա աշակերտ՝ Մովսես Երզնկացին: Հետաքրքրական է, որ 14-րդ դարի սկզբում Մովսեսը հաստատվել է Երզնկայում ու այդտեղ էլ մահացել 1323 թ.²⁶, որովհետև խնդրո առարկա Գանձարանը, ինչպես երևում է 1361 թ. հիշատակարանից, նույնպես այդտեղ էր պահվում: Զայտի մոռանալ նաև այն փաստը, որ այդ Գանձարանում են խմբված Մովսեսի գրեթե բոլոր գանձերը²⁷: Նվազ կարևոր չէ և այն, որ Գեորգ Սկևոացուն ժամանակակից Կիպրոսի № 48 Գանձարանում, նրա աշակերտ Մովսեսը չունի ոչ մեկ գանձ: Դա, ըստ երեւոյթի, պիտի բացատրել նրանով, որ նշված ձեռագրի ընդօրինակության ժամանակ Մովսեսը, երիտասարդ լինելով, դեռևս գանձեր չէր գրում:

Թվում է, թե վերևում նշված տվյալները տալիս են որոշ հիմք Փարիզի № 79 ձեռագրում հանդիպող Մովսեսին նույնացնելու Մովսես Երզնկացու հետ: Եթե իրոք այդ Մովսեսը Երզնկացին է, ապա խնդրո առարկա Գանձարանը չի կարող ընդօրինակված լինել ավելի վաղ, քան 1270 թ.: Մեր կարծիքով հնարավոր է, որ այն գրված լինի Տաղարանից կես դար հետո՝ 1300-ական թվականներին: Ինչ վերաբերում է հիշյալ ձեռագրի Տաղարան մասին, ապա դրան կանդրադառնանք առանձին:

²⁶ Զ. Դ. Ալիշան, Հայապատմ, Վեներիկ, 1901, էջ 507—509:

²⁷ Երուսաղեմի № 231 ձեռագրում պահպանված են Մովսեսի՝ Վարդանանց տոմսի և Գրիգոր Լուսավորչի թոռներին նվիրված երկու գանձերը: Նորայր եպս. Պողոսյանը «Սիոն» ամսագրում (1951 թ., էջ 75—76) հրատարակել է նրանցից մեկը՝ Վարդանանց տոմսի նվիրվածը: Համեմատությունը ցույց է տալիս, որ դա լիովին տարբերվում է միևնույն տոմսի նվիրված հեղինակի մեզ ծանոթ գանձից (Փարիզի ձեռ. № 79, թերթ 48ա) և կարող է դիտվել իբրև այլ խմբագրություն: Եթե այլ խմբագրություն է նաև Երուսաղեմի հիշյալ ձեռագրում գտնվող Գրիգոր Լուսավորչի թոռներին նվիրված գանձը, ապա այս և նախորդ մտուշը կարող ենք ճանաչել իբրև ինքնուրույն միավորներ, ու այդ դեպքում Մովսեսի՝ մեզ հայտնի գանձերի ընդհանուր թիվը կլինի քսաներկու:

²⁴ Զ. Դ. Ալիշան, Յուշիկի հայրենեաց Հայոց, հատ. Ա, Վեներիկ, 1920, էջ 248: Այստեղ, Դ. Ալիշանն, ըստ երևույթի, նկատի ունի Փարիզի № 79 ձեռագիրը:

²⁵ Նույն տեղում, էջ 320:

ԳԵՏԱՇԵՆԻ ԱՎԱԳ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ՄԱՏՐԱՆ ՀԱՅԵՐԵՆ ՋԵՌԱԳՐԵՐԸ

Անցյալներում գրեթե չի եղել որևէ եկեղեցի, որ իր խորաններում չունենար մեկ կամ մի քանի գրչագիր մատյան—«Աւետարան» կամ «Ժամագիրք», «Խորհրդատետր» կամ «Մաշտոց», «Ծարակնոց» կամ «Գանձարան», «Ծաշոց» կամ «Յայնմատրք»: Այլ խոսքով, ամեն մի եկեղեցի աղոթատեղի լինելուց բացի, յուրահատուկ մի գրատուն էր՝ գրչագիր մատյանների իր մեծ կամ փոքր հավաքածուներով: Այդպիսիներից մեկն է եղել նաև Արցախի Գարդման գավառի Գետաշեն ավանի Ավագ սուրբ Նշան մատուռը:

Թե քանի ձեռագիր է ունեցել մատուռը իր կառուցման առաջին իսկ օրից (1677 թ.) և քանակական ինչ փոփոխություններ է կրել հետագայում, դժվար է ասել, որովհետև եղած տեղեկությունները վերաբերում են միայն ժԹ դարին: Այսպես.

Ա. Սարգիս եպիս. Զալալանց, Ծանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հատոր Ա., Տփղիս, 1842, էջ 172—173.—Ս. Զալալանցն իր սույն աշխատության մեջ անդրադառնալով Գետաշեն ավանին, նշում է. «...գոյ աստ գրչեայ հին Աւետարան՝ գրեալ ի թուին Հայոց ՉԽԴ (1295) յանապատին Դրագարկայ... ձեռամբ Թորոս վարդապետի»: Այն հանգամանքը, որ Զալալանցը այդ ձեռագիր չի հիշատակում, բոլորովին էլ չի նշանակում, թե մատրան մեջ ուրիշ ձեռագրեր չեն եղել: Պետք է նկատի ունենալ, որ Զալալանցն իր գրքում նշում էր միայն այն ձեռագրերը, որոնք որևէ տվյալ էին պարու-

նակում նկարագրության առարկա վայրի կամ շրջանի վերաբերյալ: Հետագա աղբյուրները այդ ձեռագիրը արձանագրել են Գանձակի ա. Հովհաննես եկեղեցու մատյանների շարքում: Այն Մատենադարան է մուտք գործել 1922 թվականին և մտել «Խառն ժողովածու» կոչվող հավաքածուի մեջ (№ 1808), իսկ այժմ գրադեցնում է ընդհանուր ֆոնդի 6290 թվահամարը:

Բ. Մակար եպիս. Բարխուդարյան, Արցախ, Բագու, 1895, էջ 259—264.—Մ. Բարխուդարյանը իր սույն գրքում խոսելով Գետաշեն ավանի Ավագ սուրբ Նշան մատրան մասին, Ա.—Դ թվահամարների ներքո արձանագրում է թվով 4 «Աւետարան»: Այսպես.

Ա. «Աւետարան», թղթյա, ժամանակ ՌԺԺԶ (1667), գրիչ-ձաղկող՝ Նիկողայոս, ստացող՝ Ճանդուլի:

Բ. «Աւետարան», թղթյա, ունի ՊԵ (1356), ՊԻԱ (1372) թթ. հիշատակագրություններ:

Գ. «Աւետարան», մագաղաթյա, ունի ՌՀԲ (1223), ՉՀԴ (1325), ՊԼԲ (1388), ՋԽԶ (1497) թթ. հիշատակագրություններ:

Դ. «Աւետարան», թղթյա, ժամանակ՝ ՌԺԲ (1673), տեղ՝ Դաստիփուր, գրիչ՝ Սարգիս երեց:

Արձանագրված այս 4 ձեռագրերից 3-ը (№ՆԲ Բ, Գ, Դ) այսօր որոշակիորեն գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում՝ համապատասխանորեն 6303, 6288, 6746 թվահամարների ներքո: Դրանք Մատենադարան են մուտք գործել քսանական

թվականների վերջերին՝ Գարեգին Հովսեփյանի ջանքերով Արցախի տարբեր վանքերից ու եկեղեցիներից հավաքված հինգ տասնյակի չափ ձեռագրերի շարքում (ՁՆՁ 26, 2, 25): Ինչ վերաբերում է Բարխուդարյանի հիշատակած ՁՆ Ա ձեռագրին, ապա այն այժմ պահվում է Բաքվում՝ Ադր. ՄԱՀ ԳԱ հանրապետական ձեռագրական ֆոնդի 8315 թվահամարի ներքո:

Գ. Երվանդ Լալայան, Գանձակ («Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1899, № 1, էջ 319).— Իր սույն աշխատության մեջ խոսելով Գետաշեն ավանի Ավագ սուրբ Նշան մատրան մասին, Ե. Լալայանը նշում է, որ «մատուռում պահվում է չորս նշանավոր Ավետարան» և ապա տողատակ ծանոթագրության մեջ ավելացնում. «Տես գրչագիրների բաժնում»: Սակայն, «Ազգագրական

հանդես»-ի ոչ տվյալ և ոչ էլ հաջորդ գրքերում ձեռագրերի նկարագրություն չենք գտնում: Տարակույս չի կարող լինել, որ Լալայանի կողմից հիշատակված ձեռագրերը նույնական են Բարխուդարյանի արձանագրած ձեռագրերի հետ, քանի որ Լալայանը իր տվյալները քաղել է Բարխուդարյանի գրքից: Որ դա այդպես է, հաստատում է նաև այն փաստը, որ Լալայանը Գանձակի ս. Հովհաննես եկեղեցու ձեռագրերի մասին խոսելիս, կրկնում է Բարխուդարյանի սխալը և ս. Հովհաննես եկեղեցում եղած ձեռագրերի քանակը 10-ի փոխարեն ցույց է տալիս 11 (անդ, էջ 300):

Հին և նոր թվահամարների ստորև բերվող համեմատական տախտակը ամփոփում է վերը շարադրվածը.

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ
ԳԵՏԱՇԵՆԻ ԱՎԱԳ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ՄԱՏՐԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ
ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

№ ը վ	Գետաշենի Ավագ Ա. Նշան			Գանձակի ս. Հովհաննես			Գ. Հովսեփյան	Բաքու	Մատենադարան		
	Ձալալյանց 1842	Բարխուդարյան, 1895	Լալայան 1899	1885 թ. ցուցակ	Բարխուդարյան, 1895	Լալայան 1899			«խառն հիփոն»	«նոր շարք»	Արդի
1	Ա	—	—	24	Գ	Գ	—	—	1808	—	6290
2	—	Ա	Ա	—	—	—	—	8315	—	—	—
3	—	Բ	Բ	—	—	—	—	—	—	—	—
4	—	Գ	Գ	—	—	—	26	—	—	20	6303
5	—	Դ	Դ	—	—	—	2	—	—	109	6288
							25	—	—	—	6746

ՍՈՒՂՆՈՒ Ա. ԳԵՎՈՐԳ ՎԱՆՔԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Ստեփաննոս եպս. Մխիթարյան Ծիրակացին իր «Ստորագրություն հռչակաւոր վանաց ս. Գեորգայ որ ի Սուղմի» աշխատության մեջ (Թավրիզ, 1889, էջ 38—39) անդրադառնալով վանքում եղած ձեռագրերին, արձանագրել է հետևյալ 2 գրչագիր մատյանները.

1. «Աւետարան գրչեայ ի վերայ բամբակեայ թղթոյ, գրեայ ընդ հովանեաւ առաքելոյ վանս Թուոցաւ (Թաոցոս—Օ. Ե.) ի գաւառին Աւրնկա, ձեռամբ Յակոբ կրօնատրի, թիին 24 (1321), արդեամբ Սիմէօն քահանայի»:

2. «Աւետարան նոյնախի, գրեայ ձեռամբ սուտանուն քահանայի, թիին 247 (1315), ի գիտն Արարատեանց կոչեցեալ»:

Վերոհիշյալ 2 ձեռագրերից առաջինը, ինչպես կարելի է հավաստիանալ թերթ 2-ում եղած հիշատակագրությունից («Յիշատակ է հանգուցեալ Տէր Ստեփաննոսին և կնոջ նորա Ետեսին, որ ետ սրբոյ Գեորգայ

վանացս, 1839 ամի»), Մաշտոցի անվան Մատենադարանի № 3708 ձեռագիրն է. այն էջմիածին է մուտք գործել 1908 թվականին և մտել գրատան «Գևորգյան» կոչվող հավաքածուի մեջ (№ 1352): Ինչ վերաբերում է երկրորդ ձեռագրին, ապա դրա հետագա ճակատագիրը մեզ հայտնի չէ: Այն չի արձանագրված նաև Լ. Խաչիկյանի «ԺԴ դարի ձեռագրերի հիշատակարաններ» միահատորյակում (Երևան, 1950), մի բան, որ ցույց է տալիս թե հեղինակին մատչելի ոչ մի աղբյուրում այն հիշատակված չի եղել:

Բացի վերոհիշյալ գույգ ձեռագրերից, Մուղնու վանքից մեզ հայտնի են ևս երկու ավետարաններ, որոնք էջմիածին են մուտք գործել դարձյալ 1908 թվականին և մտել նույն «Գևորգյան» հավաքածուի մեջ (№ՆՆ 1353, 1354), իսկ այժմ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի շարքում գրադեցնում են 3859 և 4457 թվահամարներ:

րը: Վերջին ձեռագրի 221-ր թերթի վրա անանուն մի հիշատակագիր գրել է. «Ի դուռն սրբոյն Գեորգեայ լիշատակ ի ՌԽԾ (1801), հոկտեմբերի ԺԲ (12)», իսկ մեկ ուրիշը, որի անունը դիտավորյալ կերպով քերված է, թողել է հետևյալ նշումը. «Յամի տեսուն 1860 և լուսատրշական 1566 գտի զաւետարանս սրբոյն Գեորգայ Մողնոյ»:

Բացատրության կարգով նշենք, որ բանասիրությանը լայնորեն հայտնի նշանավոր «Մողնու Աւետարան»-ը (Մատենադարան, № 7736) պատկանել է ոչ թե Մողնու, այլ Թիֆլիսի ա. Գեորգին:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱՆՏԱԿ
ՄՈՒՂՆՈՒ Ս. ԳԵՎՈՐԳ ՎԱՆՔԻ
ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ
ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

Մուգնու ա. Գևորգ			Մատենադարան	
Նշում	Ստ. Մխիթարյան 1889	Զարձակաված	Գևորգյան	Այլի
1	1	—	1352	3708
2	2	—	—	—
3	—	1	1353	3859
4	—	2	1354	4457

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊՍ. ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ՀԱՅԵՐԵՆ
ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրական բազմահազարանոց հավաքածուի բաղկացուցիչ մասերից մեկն է նաև Տալքի և Տիֆլիսի առաջնորդ Կարապետ արքեպս. Բագրատունու հայերեն ձեռագրերի հատընտիր հավաքածուն, որն իր ներկա դրությամբ ամփոփում է Ժ—ԺԺ դարերում ընդօրինակված բազմազան բովանդակությամբ ինն տասնյակից ավելի ձեռագրեր:

Երբ 1856 թվականին Ախալցխայում վախճանվեց Կարապետ արքեպս. Բագրատունին, նրա ողջ կայքը, այդ թվում նաև ձեռագրերն ու տպագիր գրքերը, ժառանգորդների մեջ ծագած անհարկի վեճերի պատճառով ամբողջ տասներեք տարի (1856—1869) մնաց տերության խնամակալության ներքո, մինչև որ Գեորգ Դ-ի ջանքերով հնարավոր եղավ հաստատել տալ Էջմիածնի ժառանգական իրավունքները իր վախճանված կուսակրոն միաբանների կայքի վրա, և, 1869 թվականին փոխադրելով Մայր Աթոռ՝ մոտել գրատան ձեռագրերի շարքը:

Բագրատունու այս հավաքածուն, բացի ժամանակի մամուլում եղած թոռացիկ ակնարկից, տպագիր որևէ ցանկ կամ ցուցակ չի ունեցել և, որպես առանձին հավաքածու, բանասիրությանը քիչ է հայտնի: Բարեբախտաբար պահպանվել ու մեզ են հասել երկու անտիպ ցուցակներ, որոնց միջոցով հնարավոր է դառնում միանգամայն որոշակիորեն ճշգրտել հավաքածուի բովանդակված ձեռագրերն ու նրանց արդի թվահամարները:

Ստորև անդրադառնում ենք այդ գույք ցուցակներին:

Ա. «Ցուցակ ձեռագիր մատենից Կարապետ արքեպիսկոպոսի Տալքոց»¹—Սույն ցուցակում, որը հավանաբար կազմված է իր իսկ Կարապետ արքեպիսկոպոսի ձեռքով,

1—94 թվահամարների տակ արձանագրված է 94 ձեռագիր: Հետագայում, երբ արդեն ձեռագրերը Էջմիածին էին մուտք գործել, մեկը ցուցակի վերջում ավելացրել է ևս 5 ձեռագիր և, փոխանակ նշանակելու 95—99, նշանակել է 93—96 թվահամարներով, նախ՝ կրկնելով 93 և 94 թվահամարները, ապա՝ 96-ի տակ արձանագրելով նույն բովանդակությամբ 2 ձեռագիր: Որպեսզի շփոթություն չառաջանա, Կարապետ արքեպիսկոպոսի 93 և 94 թվահամարները հետագա շարադրանքում կարտահայտենք ա գործակիցով (93ա, 94ա), իսկ նոր հավելումը՝ բ (93բ, 94բ). 96 թվահամարի տակ արձանագրված 2 ձեռագրերը նույնպես կարտահայտենք ա և բ գործակիցներով (96ա, 96բ): Այսպիսով, ըստ վերոհիշյալ ցուցակի, Կարապետ Բագրատունու ձեռագրերի ընդհանուր քանակը հավասար է 99-ի (94+5):

Արձանագրված վերոհիշյալ 99 ձեռագրերից 92-ը (№№ 1—6, 8—51, 53—65, 67—70, 72—79, 81—92, 93բ, 94ա, 94բ, 96ա, 96բ) այսօր որոշակիորեն գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (տե՛ս տախտակ Ա.), իսկ մնացած 7-ի (№№ 7, 52, 66, 71, 80, 93ա, 95) ուր գտնվելն առայժմ մեզ հայտնի չէ:

Բացակայող այդ 7 ձեռագրերն են.

№ 7. «Պատմություն Հայոց ի Մատթեոս քահանայէ», ժամանակ՝ ՌԻԹ (1580), տեղ՝ Երզնկա:

№ 52. «Համառոտ ներկայացմունք տրամաբանութեանց ի Յոսեփունիսի Պոուլեթեստիչի...», ժամանակ՝ ՌՄԼԹ (1790), տեղ՝ Ամատերդյան, գրիչ՝ Սողոմոն արեղա Գրիգորյան Խեչումյանց Վաղարշապատցի:

¹ Մատենադարան, ձեռ. № 8794, թերթ 1ա—97բ:

№ 66. «Դիոնիսիոսի Արիսպագացուն Գործք՝ թարգմանութեամբ Իովացոց»:

№ 71. «Համատու... քաղութան ի Քերականութենէ Հայր Գաբրիէլի»:

№ 80. «Բերթունեանի Բարոզգիրք, առաւել նոյն»:

№ 93ա. «Զեռնադրութիւն կրօնատրաց»:

№ 95. «Մեկնութիւն Սիրաքայ ի Յակոբ պատրիարքէ»:

Բացակայող վերոնիշյալ 7 ձեռագրերից 5-ի (№№ 66, 71, 80, 93ա, 95) մատենագիտական տվյալներն այնքան սուղ են, որ հնարավորություն չեն տալիս փնտրտուքներ կատարելու:

Սույն ցուցակում արձանագրված 99 ձեռագրերից 87-ը (№№ 1—6, 8—29, 31, 32, 34—36, 38—65, 67—70, 72—77, 79, 81, 83, 85—92, 93բ, 94ա, 94բ, 96ա, 96բ) արձանագրված են նաև 1869 թվականին կազմված Սինոդի ցուցակում, իսկ մնացած 12-ը (№№ 7, 30, 33, 37, 66, 71, 78, 80, 82, 84, 93ա, 95)՝ ոչ: Ինքնին հասկանալի է, որ նշված 12 ձեռագրերը Կարապետ Բագրատունու հավաքածուից դուրս եկած պետք է լինեն նրա մահվանից առաջ: Դրա օգտին է խոսում նաև այն, որ բացակայող 7 ձեռագրերից 6-ը (№№ 7, 66, 71, 80, 93ա, 95) հենց այն ձեռագրերից են, որոնք Սինոդի ցուցակում չեն արձանագրված:

Ցուցակի 99 ձեռագրերից 92-ը, ինչպես սասցինք, այսօր որոշակիորեն գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում: Դրանցից 86-ը (№№ 1—6, 8—29, 31, 32, 34—36, 38—51, 53—65, 67—70, 72—77, 79, 81, 83, 85—92, 93բ, 94ա, 94բ, 96ա, 96բ) Մատենադարան են մուտք գործել

1869-ին՝ ըստ Սինոդի ցուցակի, իսկ մնացած 6-ը (№№ 30, 33, 37, 78, 82, 84)՝ տարբեր ժամանակներում և տարբեր ուղիներով. 3-ը (№№ 37, 82, 84)՝ 1880-ական թվականներին անհայտ ճանապարհով, 1-ը (№ 30)՝ 1905-ին Աբգար Հովհաննիսյանի 21 այլ ձեռագրերի հետ միասին (№ 20), 1-ը (№ 78)՝ 1920-ին Խաչիկ վրդ. Դադյանի երկրորդ հավաքածուի կազմում (№ 41/46) և 1-ը (№ 33), որը դեռևս իր կենդանության օրոք Կարապետ Բագրատունին նվիրաբերել էր Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցուն (№ 250/470)՝ 1938-ին Երևանի Գրական թանգարանի ձեռագրերի շարքում (№ 265):

Սույն ինքնագիր ցուցակի վերջում Սահակ Ամատունին կատարել է հետևյալ մատիտագիր նշումը. «Սինոդի ցուցակում, ուր պահված է Կարապետ եպիսկոպոսի կայից ամբողջությունը, ձեռագիր գրքերի համարաթիվը էր 90 հատ, իսկ վերագրյալ ցուցակում՝ 94, որից հետևում է, թե չորս ձեռագիր անհայտացել են ցուցակագրելիս, որոց ամենից նշանավորն է № 16 ձեռագիրը, ուր հիշված են մեր երածշտական խազերի գեղեցիկ հալերեն անունները: Սահակ արքայա Ամատունի»:

Ամատունու այս դիտողությունը, ինչպես կարելի է եզրակացնել մեր վերլուծությունից, այնքան էլ ճիշտ չէ և հետևանք թուրքիկ ակնարկի: Ծիշտ չէ նաև № 16 ձեռագրի կորած լինելը, որովհետև այն Սինոդի ցուցակի № 50 ձեռագիրն է (արդի № 2388):

Ստորև տալիս ենք հիշատակված 99 ձեռագրերի հին և նոր թվահամարների համեմատական տախտակը (տե՛ս տախտակ Ա.):

Ա. ՀԱՄԵՄՏԱՍԿԱՆ ՏԱԽՏԱԿ
ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊՍ. ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԶԵՆԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ
(Հստ ինքնագիր ցուցակի)

Կ. Բագրատունի			Կ. Բագրատունի			Կ. Բագրատունի		
Ինքնագիր	Սինոդ. 1869	Մտնդրն	Ինքնագիր	Սինոդ. 1869	Մտնդրն	Ինքնագիր	Սինոդ. 1869	Մտնդրն
1	2	3	4	5	6	7	8	9
1	1	3723	34	2	2585	67	4	2767
2	9	2631	35	48	2760	68	82	2620
3	13	2609	36	59	2983	69	73	2755
4	12	2687	37	—	3500	70	57	3084
5	83	2520	38	39	2985	71	—	—
6	34	2605	39	75	2686	72	41	2516
7	—	—	40	22	2688	73	10	2863
8	32	3782	41	7	2603	74	69	3077
9	24	2752	42	80	2593	75	15	2588
10	33	2690	43	26	2857	76	49	2772
11	35	2606	44	88	2970	77	19	2584

1	2	3	4	5	6	7	8	9
12	84	2972	45	43	2977	78	—	6415
13	6	3082	46	36	2973	79	31	2702
14	51	2771	47	61	2759	80	—	—
15	87	3503	48	44	2684	81	85	2379
16	50	2383	49	29	2685	82	—	2689
17	11	2613	50	66	3073	83	54	2592
18	20	2607	51	68	3181	84	—	3120
19	78	2517	52	71	—	85	56	2391
20	40	2510	53	47	2986	86	86	2390
21	14	2695	54	23	2967	87	38	2377
22	5	2676	55	55	2498	88	84	2610
23	8	2679	56	37	3275	89	81	2872
24	3	2600	57	74	4527	90	46	2995
25	03	2615	58	62	2963	91	90	2954
26	58	4232	59	30	2953	92	72	2763
27	89	2750	60	60	3186	93ա	—	—
28	45	4330	61	27	3185	94ա	76	2867
29	18	285	62	79	2386	93բ	77	2859
30	—	2748	63	25	2751	94բ	70	2505
31	28	2764	64	53	2956	95	—	—
32	42	3070	65	67	3271	96ա	16	3725
33	—	7623	66	—	—	96բ	17	3726

Բ. «Յուցակ է ձեռագիր մատենից հանգուցեալ Կարապետ արքեպիսկոպոսի, ընդ որոյ լանձնեցա յապիկօնէն (опекун—խնամակալ) եւ ստացա հաստարմէն արքոյ Էջմիածնի»²։ Սույն ընկալա-հանձնողական ցուցակում, որը Սինոդի հանձնարարությամբ կազմված է 1869 թվականին, երբ ձեռագրերը Ախալցխայից Էջմիածին էին տեղափոխվում, 1—90 թվահամարների ներքո, առանց մատենագիտական անհրաժեշտ տվյալների, միայն խորագրերի պարզ նշմամբ, արձանագրված են թվով 90 ձեռագրեր, որոնցից 89-ը (№№ 1—70, 72—90) այսօր որոշակիորեն գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (տե՛ս տախտակ Բ)։ Դրանք բոլորն էլ ունեն ցուցակում նշանակված թվահամարներին միանգամայն համապատասխանող թվահամարներ և կնքված են Ախալցխայի քաղաքային ոստիկանության կնիքով. «Печ. Ахалцыхской градской полиции»։

Երբ 1869 թվականին ձեռագրերը Ախալցխայից տեղափոխվում են Էջմիածին, պարզվում է, որ բացակայում են արձանագրված 90 ձեռագրերից 2-ը (№№ 65, 71)։ Առկա 88 ձեռագրերը (№№ 1—64, 66—70, 72—90) ստույգում են գրատան «Գևորգյան» կոչվող հավաքածուն, իսկ բացակայող ձեռագրերը դուրս են մնում գույքագրումից։

Ներսես վրդ. Խոջապետյանը, որ 1868—1888 թվականներին եղել է մատենադարանակալ և «Գևորգյան» հավաքածուի առաջին գույքամատյանի կազմողներից մեկը,

² Մատենադարանի Արխիվ, Կաթողիկոսական Դիվան, թղթ. 228, վավ. 16։

յուրյայն հաստատում է նշված 2 ձեռագրերի կորուստը, գույքամատյանի նախաբանում գրելով. «...զգրեանս Կարապետ արքեպիսկոպոսի՝ առաջնորդի Տալոց և Տփլիսեաց՝ վախճանելոյ յամի 1856, Ախալցխայ, որք էին թուով ութսուն և ութն ձեռագիր..., որք յօրէ վախճանելոյ նորին ընդ բազում ամս եղեալ կային և մնային ի պահեստի դատարանի տէրութեան, ի սակա վիճելի գոյոյն ժառանգաց ընդ այլ ազգականս հանգուցելոյն...»³։

«Գևորգյան» ցուցակից դուրս մնացած երկու ձեռագրերից 1-ը (№ 65), որը Կարապետ Բագրատունու ձեռագրերի ինքնագիր ցուցակն է, ինչ-ինչ հանգամանքներում անցնում է Էջմիածնյան գրավաճառ եղբայրների ձեռքը (1876 թ. ցուցակ, № 72) և 70 տարվա բացակայությունից հետո՝ 1939 թըվականին կրկին վերադառնում Մատենադարան (1939 թ. ցուցակ, № 5)։ Ինչ վերաբերում է մյուս ձեռագրին (№ 71), ապա դրա որ գտնվելն առայժմ մեզ հայտնի չէ։ Այդ ձեռագիրն է։

№ 71. «Տրամարանութին Յովհաննէս վարդապետ Ամասիացոյ, ճտորգիր, գրեալ ի թողթս բամբակի»։

Դժվար չէ նկատել, որ բացակայող այս ձեռագիրը նույնական է Կարապետ արքեպիսկոպոսի ինքնագիր ցուցակի № 52 ձեռագրի հետ, այն տարբերությամբ միայն, որ ինքնագիր ցուցակում այն արձանագրված է հեղինակի անվամբ, իսկ այստեղ՝ թարգմանչի։ Այսպիսով, Կարապետ արքեպիս-

³ Մատենադարանի անտիպ ձեռագրացուցակների հավաքածու, № 3, թերթ 1ա։

կոպուսի հավաքածուից բացակայող ձեռագրերի ընդհանուր քանակը մնում է անփոփոխ՝ 7 (տե՛ս նախորդ ցանկը):

Ինքնագիր ցուցակի հետ կատարած համեմատությունից պարզվում է, որ սույն ցուցակի 90 ձեռագրերից 87-ը (№№ 1—20, 22—51, 53—64, 66—90) արձանագրված են նաև ինքնագիր ցուցակում, իսկ մյուս 3-ը (№№ 21, 52, 65)՝ ոչ: Այդ 3 ձեռագրե-

րից 1-ը (№ 65) Կարապետ արքեպիսկոպոսի ինքնագիր ցուցակն է և, բնականաբար, ինքն իր մեջ արտահայտվել չէր կարող, իսկ մնացած 2-ը (№№ 21, 52) հավաքածուի մեջ են մտել ցուցակի կազմվելուց հետո:

Ստորև տալիս ենք հիշատակված 90 ձեռագրերի հին և նոր թվահամարների համեմատական տախտակը (տե՛ս տախտակ Բ):

Բ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊՍ. ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ (Ըստ Սինոդի 1869 թ. ցուցակի)

Կ. Բագրատունի			Կ. Բագրատունի			Կ. Բագրատունի		
Սինոդ 1869	Ինքնագիր	Մտնորն	Սինոդ 1869	Ինքնագիր	Մտնորն	Սինոդ 1869	Ինքնագիր	Մտնորն
1	1	3723	31	79	2702	61	47	2759
2	34	2585	32	8	3782	62	58	2963
3	24	2600	33	10	2690	63	25	2615
4	67	2767	34	6	2605	64	88	2610
5	22	2676	35	11	2606	65	—	8794
6	13	3082	36	46	2973	66	50	3073
7	41	2603	37	56	3775	67	65	3271
8	23	2679	38	87	2377	68	51	3181
9	2	2691	39	38	2985	69	74	3077
10	73	2863	40	20	2510	70	94բ	2505
11	17	2613	41	72	2516	71	52	—
12	4	2687	42	32	3070	72	92	2763
13	3	2609	43	45	2977	73	69	2755
14	21	2695	44	48	2683	74	57	4527
15	75	2588	45	28	4330	75	39	2686
16	96ա	3725	46	90	2995	76	94ա	2867
17	96բ	3726	47	53	2986	77	93բ	2859
18	29	2865	48	35	2760	78	19	2517
19	77	2584	49	76	2772	79	62	2386
20	18	2607	50	16	2388	80	42	2593
21	—	2697	51	14	2771	81	89	2872
22	40	2688	52	—	2385	82	68	2620
23	54	2967	53	64	2956	83	5	2520
24	9	2752	54	83	2592	84	12	2972
25	63	2751	55	55	2498	85	81	2379
26	43	2857	56	85	2391	86	86	2390
27	61	3185	57	70	3084	87	15	3503
28	31	2764	58	26	4232	88	44	2970
29	49	2685	59	36	2983	89	27	2750
30	59	2953	60	60	3185	90	91	2754

Բացառված չէ, անշուշտ, որ բացի վերոհիշյալ երկու ցուցակներում արձանագրված ձեռագրերից, Կարապետ արքեպիսկոպոսը ժամանակին ունեցած լինի նաև այլ ձեռագրեր: Այդ է ցույց տալիս Մատենադարանի № 8944 ձեռագիրը, որը գրված է 1823 թվականին Կարինում՝ իր իսկ պատվերով: Այն հետագայում ընկել է Արսեն քհ. Ջոհրաբյանի ձեռքը և Մատենադարան մուտք գործել 1939 թվականին (№ 106):

Այսպիսով, Կարապետ արքեպիսկոպոսի ձեռագրերից մեզ հայտնի են 103-ը, որոն-

ցից 96-ը գտնվում են Մատենադարանի ֆոնդերում, իսկ մնացած 7-ը՝ ոչ: Այսպես.

№ ը/լ	Ց ու չ ա կ	Բանակ	Առկա	Բացակա
ա	Ըստ ինքնագիր ցուցակի .	99	92	7
բ	Հավելյալ Սինոդի ցուցակում .	3	3	—
գ	Չարձանագրված	1	1	—
	Ընդամենը	103	96	7

Կարապետ արքեպս. Բագրատունու այս հավաքածուն կազմված է հիմնականում Արևմտահայաստանի մի շարք շրջանների, հատկապես Մուշի, Բաղեշի և Կարնո վանքերից ու եկեղեցիներից հավաքված ձեռագրերից: Բացի ձեռագրերի մեջ պահպանված հիշատակագրություններից, այդ մասին ունենք երկու մեծարժեք վկայություն:

Ստեփաննոս Պալասանյանը իր «Նախնայաց ձեռագիրների տպագրության վրա» հոդվածում⁴, որը տպագրված է «Ա. Պ.» ստորագրությամբ, անդրադառնալով Կարապետ արքեպիսկոպոսի ձեռագրերին, գրում է. «Հանգուցյալ Կարապետ արքեպիսկոպոսը Էրզրումի առաջնորդ եղած ժամանակը Շաբարյան Գրիգոր վարդապետի ձեռքովը շատ ձեռագիրներ ժողովեց Մուշի և Բաղեշի կողմերից, և 1828-ին պատերազմից հետո հետը միասին Ռուսաստան բերավ...»:

Պալասանյանի այս վկայությունը հաստատվում է մի այլ վկայությամբ՝ արձանագրված «Մշո ժողովների» լուսանցքում⁵: Այն, իր շահեկանության համար, բերում ենք ամբողջությամբ.

«Կարապետ եպիսկոպոս Կարնոյ և ի վերջոյ եպիսկոպոս Ախալցխայոյ վիճակի, յամի տեսուն 1833 զմի ոմն վարդապետաց իրոց առաքել ի վանն Դազարոյ, և ի մատենադարանէ վանիցս գգր»ագիր մատենան զայսոսիկ, զորոց գանունն նշանակեմ աստի ստորեւ, ի պատճառս օրինակելոյ կամ տպագրութեամբ ի լոյս հասարակաց հանելոյ, տանէ՝ խոստանալով ետս դարձուցանել, և ստեալ խոստման իրում, ոչ դարձուցանէ: Քանզի ըստ պատմելոյ խոցոց վանքցի Յովհաննէս ծերունի վարդապետի՝ միաբանի սրբոյ ուխտիս, այս Կարապետ եպիսկոպոս նախքան զգալն Ռուսաց յաշխարհս Տարօնոյ, գայ ի սուրբ վանն և տեսանէ զհազարագիտ մատենան զայսոսիկ, և սպա զկնի բանի ամաց առաքեալ տանէ առ ինքն, որք են պատքիկ գիրքք ինն.

1. Դաշանց գիրք.
2. Տաղարան հին և երկար խազերով.
3. Խորենացի (Պատմութիւն Հայոց).
4. Տօնապատճառ.
5. Ներսիսի Աստենաբանութիւն (Լամբրոնացոյն).
6. Դուկասոյ մեկնիչ (Աւետարանին).
7. Պողոսի (թղթոց) մեկնիչ.
8. Եւ Դուկասոյ մեկնիչ (քայց հեղինակն անյայտ).

⁴ «Մեղոյ Հայաստանի», 1863, № 4:

⁵ Մատենադարան, ձեռ. № 7729, թերթ 292բ:

9. Յայտնութեան մեկնիչ (հեղինակն դարձեալ անյայտ).

Ի գրեանցս յայցանէ, զորոց ստեալ խոստման իրում հափշտակէ ի վանացս Կարապետ եպիսկոպոս, առաւել ընդ կոթուստ օրինակին Մովսիսի Խորենացոյ, Դաշանց թղթոյն, անյայտ Մեկնութիւն Դուկասոյ Աւետարանի և Մեկնութիւն Յայտնութեան ցանեալ մորմոքեցալ, մանաւանդ ընդ երկուցն առաջնոց՝ այն է՝ Մովսիսի Խորենացոյ Պատմութեան հին օրինակին և Դաշանց թղթոյն, որ յայտ է թէ ի հնագոյն և հաւատարիմ օրինակէ պահեալ լինի ի մատենադարանին վանացս, զորոց զգիտէ պարտ է ինձ Մամբրէ վարդապետի Մամիկոնեան, և ես հօր վանացս Յովհաննէս վարդապետի Մուրատեան, զհետ լինել տեղեկանալ, թէ ո՞ր արդեօք մնացեալ իցէ ետ վախճանի Կարապետ եպիսկոպոսի, և վերջապէս ի ձեռն բերել զհազարագիտ ձեռագիրս: Յամի 1870, նոյեմբերի 15, ի վանն Դազարոյ:

Զգիտենք, հիշատակագիրը հետագայում կարողացաւ իմանալ, թե որտեղ են գտնվում վերոհիշյալ ձեռագրերը, բայց վստահ ենք, որ եթե այսօր կարողանար իմանալ, թե վանքում մնացած հարյուրավոր մատյաններից նման եղեմի զոհը չեն դարձել, այլ ապահով պահվում են Մաշտոցի սրբալույս անունը կրող Մատենադարանում, այսպանելու փոխարեն՝ կօրհներ «հափշտակիչ» Բագրատունու հիշատակը:

Ստորև տալիս ենք այդ 9 ձեռագրերի հին և նոր թվահամարների համեմատական տախտակը (տե՛ս տախտակ Գ.):

Գ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ
ՄՇՈ Ս. ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔԻՑ Կ. ԱՐՔԵՊ.
ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ՎԵՐՅՐԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ
ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎ.ՀԱՄԱՐՆԵՐԻ

Համար «Մշո ձեռքերի» 1870	Գ. Բագրատունի		Մատենադարան
	Ինքեագիր	Սինոդ	
1	30	—	2748
2	15	87	3503
3	29	18	2865
4	13	6	3082
5	75	15	2588
6	19	78	2517
7	2	9	2691
8	3	13	2609
9	5	83	2720

Յավորք, Կարապետ արքեպս. Բագրատունին ո՛չ առանձին և ո՛չ էլ ձեռագրերի մեջ համապատասխան նշումներ չի թողել դրանց

նախկին պատկանելության մասին: Ստորև բերվող անվանացանկը կազմված է ձեռագրերում պատահող ավելի վաղ հիշատակագրությունների հիման վրա:

Աբրահամ վրդ., Կարին, 1782 թ.—1 (№ 2977):

Ամիր, ս. Սարգիս եկեղեցի, 1604 թ.—1 (№ 2517):

Ավագ Կանցի, 1729 թ.—1 (№ 3723):

Անանիա, Տեր, 1598 թ.—1 (№ 2385):

Ատրլ տիրացու, Ղարաքիլիսա, 1771 թ.—1 (№ 3500):

Արզնկան—1 (№ 2764):

Ավետիս ավագ քհ. Վարդապետյան, Ախալցխա, 1848 թ.—1 (№ 4527):

Բաղեշ, Ամրդուլու վանք—8 (№№ 2517, 2600, 2605, 2679, 2687, 2748, 2771, 3070):

Բաղեշ, Խնդրակատար ս. Աստվածածին—1 (№ 2865):

Բարսեղ Վանցեցի, Կ. Պոլիս, 1788 թ.—1 (№ 2872):

Գասպար վրդ., Արևելյան Հայաստան, 1741 թ.—1 (№ 2613):

Գևորգ Տեր-Դավթյան, Կարին, 1828 թ.—1 (№ 2763):

Դվնիկ գյուղ, Կարին—1 (№ 2764):

Զաքար ոմն, 1678 թ.—1 (№ 2391):

Զաքարիա վրդ., Զմյուռնիա—1 (№ 3186):

Էջմիածին, Մայր Աթոռի գրատուն—1 (№ 2863): Էջմիածնի գրատնից ուսպարակական պատերազմների ժամանակ թալանի ենթարկված ձեռագրերից է:

Թաղեոս վրդ., Աստրախան, 1798 թ.—1 (№ 2863):

Թորոս, Ա., եկեղեցի, 1590 թ.—1 (№ 3723):

Խաչատուր Պոլսեցի, Էջմիածին, 1769 թ.—1 (№ 3120):

Խաչատուր Վանցեցի, Տեր, 1771 թ.—1 (№ 3500):

Խաչատուր վրդ., Կարնո առաջնորդ, 1714 թ.—1 (№ 2379):

Կարապետ արքեպ. Բագրատունի, Կարին-Ախալցխա, 1822—1850 թթ.—10 (№№ 2585, 2615, 2751, 2754, 2759, 2760, 2956, 2963, 8794, 8944): Առաջինը նվեր է ստացել, նախավերջինն ինքն է գրել, իսկ մյուս-

ները գրված են իր պատվերով:

Կարապետ մահտեսի (կնքադրոշմ)—1 (№ 3077):

Կարին, առաջնորդարան, 1825 թ.—2 (№№ 2697, 3073):

Մանվել վրդ., 1788 թ. (կնքադրոշմ)—1 (№ 3500):

Մարգար վրդ., 1810 թ. (կնքադրոշմ)—1 (№ 2584):

Մարկոս տիրացու, Բաղեշ, ԺԸ դ.—1 (№ 2605):

Մարտիրոս Թոխաթեցի Ավետիքով, Կ. Պոլիս, 1801 թ.—1 (№ 2970):

Միքայել վրդ., Կ. Պոլիս, 1752 թ.—2 (№№ 3725, 3726):

Մկրտիչ մահտեսի, Կարին, 1771 թ.—1 (№ 2955):

Մկրտիչ վրդ.—1 (№ 2606): Դասավանդել է այս ձեռագրով. հավանաբար Ամրդուլու ձեռագրերից է:

Մուշ, ս. Առաքելոց (Ղազարու կամ Եղիազարու վանք)—11 (№№ 2517, 2520, 2588, 2609, 2676, 2690, 2691, 2748, 2865, 3082, 3500, 3503):

Յաշ քաղաք, 1808 թ.—1 (№ 2755):

Նուրիկ մահտեսի, ԺԸ դ.—1 (№ 3275):

Շամսիի քաղաք, 1459 թ.—1 (№ 2517):

Պապա Հաճի Փեթրոս Զորակցի, 1794 թ.—1 (№ 2985):

Պետրոս Բաբերդացի, 1804 թ.—1 (№ 2750):

Պողոս վրդ., 1809 թ. (կնքադրոշմ)—2 (№ 2752, 3275):

Սաղմոսավանք, 1518—1561 թթ.—1 (№ 2603):

Սանահնի վարժարան, 1848 թ.—1 (№ 4527):

Ստեփաննոս եպս. Ենոքյան—1 (№ 2863):

Ստեփաննոս Զուղայեցի, Էջմիածին, 1764 թ.—1 (№ 3084):

Ստեփաննոս վրդ., Ղարաքիլիսա, 1771 թ.—1 (№ 3500):

Ստեփաննոս Տիխիսեցի, Կ. Պոլիս, 1809 թ.—1 (№ 3500):

Վարդան Բաղիշեցի—տե՛ս Բաղեշ, Ամրդուլու վանք:

Վրաստան—1 (№ 2584):

Տաթև, 1459 թ.—1 (№ 2517):





Ս Փ Յ Ո Ւ Ռ Զ Ո Ւ Մ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՍՐՔՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Երուսաղեմի հայոց սրբոց Թարգմանչաց վարժարանը սփյուռքում հալապահպանման շնորհալի օջախներից մեկն է, որի նվիրական կամարների տակ հասակ է առնում խոստումնալից մի նոր սերունդ:

Ինչպես միշտ, այնպես էլ 1970—1971 ուսումնական տարում վարժարանը հաջողությամբ, բարի արդյունավետությամբ ավարտեց իր ուսումնական տարին: Սույն ուսումնական տարում վարժարանի աշակերտության ընդհանուր թիվը, երկրորդական, մասնավորական ու մանկապարտեզի բաժիններում, եղել է 302, որոնցից 257-ը Երուսաղեմի հայ ընտանիքների զավակներ են, իսկ 45-ը Երուսաղեմ են թերվել սովորելու Թուրքիայի ներքին գավառներից:

Վարժարանի աշակերտության ընդհանուր թվից 137-ը աղջիկներ են, իսկ 165-ը՝ տղաներ:

Վարժարանն ունի 23 հոգուց բաղկացած հոգևորական և աշխարհական ուսուցչական կազմ, որը մեծ ոգևորությամբ և մանկավարժական պարտքի գիտակցությամբ է կատարում իրեն հանձնված հայ մատաղ սերնդի դաստիարակության սուրբ գործը:

Վարժարանում, ըստ նախատեսված ուսումնական ծրագրի, դասավանդվում են հայոց լեզու (գրաբար և աշխարհաբար), հայոց պատմություն, հայ եկեղեցու պատմություն, հայ արվեստի պատմություն, կրոնագիտություն, քրիստոնեական, հայ մատենագիտություն: Օտար լեզուներից սովորում են անգլերեն և արաբերեն՝ գրականությամբ հանդերձ: Իսկ ռեալական գիտություններից այստեղ ուսուցվում են մաթեմատիկա, կենսաբանություն, աշխարհագրություն, տարրաբանություն և բնագիտություն:

Այս տարի Թարգմանչաց վարժարանի ամսվերջի քննությունները տեղի են ունեցել մայիսի 18-ից մինչև 29-ը:

Այս տարի վարժարանը տվել է 8 շրջանավարտներ, որոնք մասնակցել են նաև «Ճեներալ սերդիֆիքը» սով. Լանտըն»-ի քննություններին:

Վարժարանում բարձր հիմքերի վրա է դրված եղել ուսումնա-դաստիարակչական գործը: Տեսչությունը և ուսուցչական կազմը ստեղծել են ամեն հնարավորություն, որպեսզի աշակերտները կաշուն գիտելիքների հետ ստանան նաև բարոյական դաստիարակություն, հայրենասիրական ճշմարիտ ոգի:

Վարժարանի աշակերտները ներկա են լինում ամեն կիրակնօրյա ս. պատարագներին, եկեղեցական այլ հանդիսությունների և տարին մի քանի անգամ ստանում են ս. հաղորդություն:

Բացի հանրակրթական ստարկաներից աշակերտները սովորում են մարմնամարզություն: Վարժարանն ունի վոլեյբոլի, բասկետբոլի, սեղանի թենիսի խմբակներ, որոնք, իրար մեջ մրցումներ անցկացնելուց բացի, մրցում են նաև օտար խմբերի հետ:

Ամսվերջի մարմնամարզական դաշտահանդեսը տեղի է ունեցել մայիսի 9-ին, կիրակի օրը, Ժառանգավորաց վարժարանի մարզադաշտում, որտեղ ներկա է եղել ծնողների և բարեկամների մի մեծ թագմություն:

Վարժարանում գործում է նաև ամեցօրյա ձեռագործական խմբակ, որի մեջ ընդգրկվել են վարժարանի բոլոր աշակերտուհիները: Ամեն տարի կազմակերպվում է ձեռագործական աշխատանքների ցուցահանդես-վաճառք՝ հօգուտ դպրոցի:

Տարվա ընթացքում վարժարանը մի քանի անգամ կազմակերպել է գրական-գեղարվեստական երեկոյաներ և իր սաների հա-

մեստ ուժերով ջերմացրել տեղի հայության ոգին:

Երուսաղեմի հայոց տ. Եղիշե սրբազան պատրիարքի հովանավորությամբ և վարժարանի տեսչության նախաձեռնությամբ 1971 թվականի մարտի 14-ին Երուսաղեմում կազմակերպվել է «Հայեր ս. երկրին մեջ և արվեստի և պատմության» ցուցահանդես, որը տևել է մինչև ապրիլի 8-ը:

Ցուցահանդես են այցելել ավելի քան 5000 հայ և օտար անձեր:

Ուսումնական տարվա ընթացքում վարժարան է այցելել ազգային մեծ բարերար և Հ. Բ. Ը. Միության նախագահ Ալեքս Մանուկյանը՝ իր հարգելի տիկնոջ հետ, և 5000 դոլլարի մի նվիրատվություն է արել Թարգմանչաց վարժարանի օգտին, 4000 դոլլարի մի այլ նվիրատվություն է արել վարժարանի կրթական ձեռնարկների համար օրիորդ Լեյլա Գարակյոզյանը:

Ազգիս վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ և հրամանով Լոնդոնի Աբգարյան հիմնարկությունը 500 անգլիական ստեղծվել է հատկացնում վարժարանին:

Երուսաղեմի հայոց սրբոց Թարգմանչաց վարժարանի տեսուչ տ. Կյուրեղ Ծ. վրդ. Գաբրիելյանը, ուսուցչական կազմը, ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքի անմիջական հսկողության և օրհնության ներքո, շնորհակալ, ազգօգուտ, կրթական-դաստիարակչական մեծ գործ են կատարում՝ սուրբ երկրի մեջ ծնված ու հասակ առած հայ նոր սերնդի քրիստոնեական, ազգային և հայրենասիրական դաստիարակության ճանապարհի վրա՝ արժանանալով Հայոց Հայրապետի օրհնության, Երուսաղեմի հայոց պատրիարքի գնահատության և մեր ժողովրդի սրտագին շնորհակալության:

ՄԱՐՍԵԼԻ ՀԱՅՈՑ Ս. ԹԱԴԵՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ

Մարսելի Սենթ Անտուան թաղում է գրտնրվում հայոց ս. Թադեոս եկեղեցին: Այս թաղը բաղադրի հայաշատ արվարձաններից մեկն է, որտեղ գաղթական հայերը բնակություն են հաստատել 1925 թվականից սկսած:

Սույն թաղամասում կան երկու հայկական եկեղեցիներ՝ ս. Թադեոս և ս. Կարապետ:

1928 թվականին կառուցվել է թաղամասի ս. Թադեոս եկեղեցին, որի օծումը կատարել է տ. Գրիգորիս եպս. Պալաքյանը:

Այժմ ս. Թադեոս եկեղեցու ծովալ բաղկանում է մոտավորապես 400 հայ ընտանիքներից:

Ս. Թադեոս եկեղեցում պաշտոնավարել են, որպես ծխատեր, տ. Ծաֆե Աքելյան, տ. Գալուստ Մովսիսյան, տ. Եսայի Ալթունյան, տ. Ներսես Ծաֆիկյան և տ. Ներսես Կատարիկյան քահանաները և տ. Վազգեն վրդ. Բեշիշյանը: Իսկ այժմ եկեղեցու հոգևոր հովիվն է տ. Վաչե վրդ. Իգնատիսյանը:

Ս. Թադեոս եկեղեցին ունի 15 հոգուց բաղկացած երգչախումբ, որն իր շնորհակալ մասնակցությունն է բերում եկեղեցու սրբազան արարողություններին և հանդիսություններին: Հ. Բ. Ը. Միության հովանավորությամբ և հոգևոր հովվի ջանքերով տեղի հայ մանուկները հայոց լեզու են սովորում եկեղեցու կողքին գործող մեկօրյա դպրոցում:

Ս. Թադեոս եկեղեցին ունի իր թաղական խորհուրդը, որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ: Վերջին ընտրությունը տեղի է ունեցել 1969 թվականին: Թաղական խորհուրդը բաղկանում է 15 անձերից, որոնք տարիքով երիտասարդներ են և Ֆրանսիայում ծնված հայորդիներ՝ հայ եկեղեցու և հայ ժողովրդի գերագույն շահերի և միասնության գիտակցությամբ տոգորված:





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ԳՈՒՇԱԿՅԱՆ—Տոնք Խաչի	3
Խաչի շարականներ	6
Հոգևոր ճեմարանի 1971—1972 ուսումնական տարվա վերաբացումը	10
Մայր Աթոռի տպարանի վերաբացման տասնամյակը	12
Սփյուռքահայ ուխտավորները Մայր Աթոռում	14
ՄԱՅՐ ԱԹՈՐՈՒՄ	17
✓ ԳՈՀԱՐ ԱԶՆԱՎՈՐՅԱՆ—Անտիպ Էջեր Տ. Գարեգին Հովսեփյան կաթողիկոսի նա- մակագրական ծառանցությունից	19
✓ Ա. ՀԱՏԻՏՅԱՆ—Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի հիմնադրության հարյուրամյակի առիթով	25
✓ ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ—Հայոց Հայրապետների շիրիմների մասին	36
✓ Կ. ԹԱՀՄԻՋՅԱՆ—Հանդիսավոր օրերի կանոնադրությունները	41
✓ Ա. ՔՅՈՇԿԵՐՅԱՆ—Փարիզի Ազգային Մատենադարանի № 79 Գանձարան-Տաղարանը	48
✓ Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ—Գետուշների ավագ սուրբ Նշան մատրան հայերեն ձեռագրերը	54
✓ Մուղնու ա. Գևորգ վանքի հայերեն ձեռագրերը	55
✓ Կարապետ արքեպս. Բագրատունու հայերեն ձեռագրերի հավաքածուն	56
ՍՓՅՈՒՌՔՈՒՄ	
✓ Երուսաղեմի հայոց սրբոց Թարգմանչաց վարժարանը	62
✓ Մարսելի հայոց ա. Թադեոս եկեղեցին	63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱՄԻՆ
«ԷՋՄԻԱՄԻՆ» ԱՄՄԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 2/IX 1971 թ.: Ստորագրված է տպագրության 19/X 1971 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 607

Մայր Աթոռ ա. Էջմիածնի տպարան, 1971 թ.